



ՀԲԸՄ 110

ՏԱՐԻ

IN UNITY IS STRENGTH • ՄԻՈՒԹԻՒՆՆԸ ԶՕՐՈՒԹԻՒՆ Է

2014 - 2015 ԵՐԿԱՍԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ 89^Դ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՀՈԿՏԵՄԲԵՐ 29, 2016, ՆԻԻ ԵՈՐՔ, ԱՄՆ

ՀԲԸՄ AGBU

Ամբողջ Դարաշրջան մը Յանձնառու Ներկայութիւն Հայ Ժողովուրդի Կեանքին մէջ

1906-ին, իր հիմնադրութենէն ի վեր, Հ.Բ.Ը.Մ.-ը ապահով խարխիս մը եղած է Հայ ժողովուրդին համար, պատմութեան վերիվայրու մտերու ընթացքին: Յետ Յեղասպանութեան ժամանակաշրջանին, ան հասած է հայութեան կարիքներուն, նպաստած է անոր հայրենադարձութեան, օգնութեան հասած է բնական աղէտներու ենթարկուած շրջաններուն, իսկ վերապրումի եւ անկախութեան ժամանակաշրջաններուն, ան ծաղկած է որպէս տիպար կազմակերպութիւն, բարի կամեցողութեամբ իր կարելիութիւնները իր գործ դնելով ի նպաստ աշխարհի տարածքին հայ ժողովուրդի բարօրութեան:

Մենք կը շարունակենք արձագանգել մեր ժողովուրդին կարիքներուն, պահպանել մեր ժառանգութիւնը եւ նորարարական նախաձեռնութիւններով սատարել անոր յառաջդիմութեան, շեշտը դնելով կրթական, մշակութային եւ մարդասիրական ծրագիրներու վրայ: Հ.Բ.Ը.Մ.-ը այսօր կը հաշուէ 69 շրջանակներ եւ մասնաճիւղեր, 47 մշակութային

եւ երիտասարդական կեդրոններ եւ գրասենեակներ, 27 Երիտասարդ Արհեստավարժներու խումբեր, 24 ամեւօրեայ եւ Շաբաթօրեայ վարժարաններ: Մեր կազմակերպութիւնը նաեւ կ'օժանդակէ զանազան նախաձեռնութիւններու, ներառեալ Հայաստանի Ամերիկեան Համալսարանը, տարեցներու ճաշի կեդրոնները, կրթաթոշակներ եւ Փորձառութեան Ծրագիրներ, մարմնամարզ եւ սկաուտական շարժում:

Շնորհիւ մեզի աջակից եղողներուն եւ մեր բարերարներուն, Հ.Բ.Ը.Մ.-ը իր մասշտիպ դրոշմը ունեցած է միլիոնատրներու կեանքին վրայ: Հաւատարիմ իր հիմնադիրներու տեսլականին, ան յանձնառու կը մնայ իր ներդրումը բերելու հայ ժողովուրդի բարոյական եւ մտաւոր զարգացման, իր կարելիութիւնները կեդրոնացնելով գլխաւորաբար համայնքներու մասշտիպ զարգացման սատարող նախաձեռնութիւններու վրայ:



Հ.Բ.Ը.Մ.Ղ


Յանձնառուիւն

Տեսլական

Յառաջդիմուիւն

ԿՈՂՔԻ ՆԿԱՇ – Հ.Բ.Ը.Մ.Ղ «Յայտնաբերէ Հայաստանը» ծրագրի մասնակիցներու տարեկան արշար Վանաձորի Որբանոց

Ազգային
պարտականութեան
գիտակցութենէն
մղուած, Հայկական
Բարեգործական
Ընդհանուր
Միութեան հիմնադիր
նախագահ Պօղոս
Նուպար եւ ինը
անդամներ,
ձեռնարկեցին
յանդուգն քայլի մը,
կազմելով Միութիւն
մը, որ պիտի ծառայէր
ամբողջ ազգին
եւ պահպանէր
հայկական
ինքնութիւնը:



Մեր Պատմութիւնը

Հ.Բ.Ը.Մ.-ի փառաւոր պատմութիւնը սկիզբ առաւ 1906-ին Գահիրէի մէջ, երկու անձնաւորութիւններու տեսիլքով - Պօղոս Նուպար եւ Երուանդ Աղաթոն - որոնք յանդուգն գաղափարը յղացան ստեղծելու կազմակերպութիւն մը, որ կոչուած պիտի ըլլար թէթեւցնելու Օսմանեան պետութեան գաւառներուն մէջ ապրող Հայութեան տառապանքը: Հ.Բ.Ը.Մ.-ը, իր գոյառումի առաջին իսկ տասնամեակին, բազմապիսի ծրագիրներով, սովի, արտագաղթի եւ հալածանքներու դէմ ծառայած իր պայքարով, բացառիկ համբաւ շահեցաւ, արագօրէն աճելով եւ ընդարձակուելով:

Հայոց Ցեղասպանութենէն ետք, Միջին Արեւելքի տարածքին, Հ.Բ.Ը.Մ.-ը առանցքային դերակատարութիւն ունեցաւ, մարդասիրական օժանդակութիւն հասցնելով հարիւր հազարաւոր ապաստանեալներու, որոնք տարածուած էին շրջանին մէջ: Հ.Բ.Ը.Մ.ը Հիւղաւաններու, որբանոցներու, դպրոցներու եւ դարմանատուներու միջոցաւ օգնութեան հասաւ աղիտեալներուն եւ համախմբեց հայութիւնը անորոշութեան դէմ պայքարի պատրաստելով զայն:

Նոյն օրերուն, Հ.Բ.Ը.Մ.-ը յանձնառու եղաւ նաեւ օգնելու հայրենիքին, որ գրաւականն էր հայ ժողովուրդի գոյութեան: 1920-ական եւ 1930-ական տարիներուն, միութիւնը հետեւողականօրէն ներդրումներ կատարեց Խորհրդային Հայաստանի մէջ, իսկ 1940-ականներուն, կազմակերպեց հարենադարձութեան մեծ արշաւը, որուն իբր արդիւնք, հարիւր հազար հայեր հաստատուեցան Խորհրդային Հայաստանի մէջ:

Քսաներորդ դարու կէսերուն, երբ սփիւռքի տարածքին նոր գաղթավայրերու մէջ կազմաւորուող հայ համայնքները սկսան բարեկեցութեան հասնիլ, Հ.Բ.Ը.Մ.-ը հսկայական աճ արձանագրեց: Դպրոցներ եւ մշակոյթի համայնքային կեդրոններ բացուեցան Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաներուն մէջ:

Իսկ երբ 1988-ին երկրաշարժը հարուածեց Հայաստանի Սպիտակի շրջանը, Հ.Բ.Ը.Մ.-ը իր ուշադրութիւնը դարձեալ կեդրոնացուց Հայրենիքին վրայ: Միութեան շրջանակները եւ մասնաճիւղերը տենդագին աշխատանք տարին համաշխարհային մակարդակի վրայ, հանգանակելով 10 միլոն ամերիկեան տոլարի գումար մը հագուստեղէն, դեղօրայք եւ ուտեստեղէն հասցնելու համար աղիտեալներուն: 1991-ին, Հայաստանի անկախ պետականութեան վերականգնումէն ետք Հ.Բ.Ը.Մ.ը հայրենակեդրոն ուղղուածութեամբ, յանձնառու եղաւ օժանդակելու ընկերային, կրթական, մշակոյթի եւ ճարտարագիտութեան մարզերու վերածաղկման ուղղուած ֆայնանս ծրագիրներու:

Հայաստանի թէ Սփիւռքի մէջ, Հ.Բ.Ը.Մ.-ը միշտ հասած է հայ ժողովուրդի բազմապիսի կարիքներուն, անհապաղ ընդառաջելով տազնապի մատնուած համայնքներու օգնութեան կոչին: Ան կը շարունակէ պատուով յանձնառու ֆալ իր կոչումին, ապագային ուղղուած իր հեռատես նախաձեռնութիւններով եւ ծրագիրներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- 4 Մեր պատմությունը
- 6 Նախագահին Խօսքը
- 7 Կեդրոնական Վարչական Ժողով
- 8 Նիւթական Տեղեկագիր 2014- 2015
- 10 100 տարի – Յեղասպանութենէն Անդին
- 12 Մարդասիրական Շտապ-Օգնութիւն
- 14 Հայաստան/Ղարաբաղ
- 26 Կրթութիւն
 - Դպրոցներ
 - Կրթաթոշակներ
 - Կրթական Նորարարութիւն
 - Առաջնորդներու Պատրաստութեան Ծրագիրներ
- 40 Համայնքներու Աշխուժացում
 - ԿԻՋԱԿԷՏ Երկամեայ Շարքավերջ
 - Երիտասարդ Արհեստավարժներ
- 44 Մշակութային Առօրեայ
 - Երգչախումբեր եւ Նուագախումբեր
 - Պարախումբեր
 - Կատարողական Արուեստ
 - Թատերախումբեր
 - Հանդիպումներ
- 50 Երիտասարդութեան Մշակում
 - Ամառնային եւ Ցերեկային Բանակումներ
 - Մարզական
 - Հետազօտել Հայաստանը
 - Սկաուտական
- 56 Մասնաճիւղեր եւ Շրջանակներ
- 76 Լուսարձակի Տակ
 - 88-րդ Ընդհ. Ժողովի Մրցանակներ
 - ՀԲԸՄ-ի Մրցանակներ 2014-2015
 - Ուղենիշեր Եւ Տարեդարձներ
- 83 ՀԲԸՄ-ի Ծրագիրներ 2014-2015

Մեր Անդամներուն, Նուիրատուներուն Եւ Բարեկամներուն

Հայութեան համար 2015-ը պատմական եւ շրջադարձային տարի մը եղաւ: Աշխարհի տարածքին մեր համայնքները համախմբուեցան, յարգանքի տուրք մատուցանելու անցեալին եւ յայտով, լուստեսութեամբ եւ հաստատակամ դիմագրաւելու ապագան:

Մեր Միութեան միացեալ յանդուքն կեցուածքը, յարատեւութիւնը եւ ղեկավարութեան բարոյեական արժանիքները, սատարեցին որ մեր առաքելութիւնը դառնայ համաշխարհայնական բարգաւաճող շարժում մը: Մեկնելով միասնական այս ուժի գիտակցութենէն, մենք պէտք է անշեղ պահենք մեր նոր ուղղութիւնը դէպի ծաղկում, վերանորոգուած ոգիով, որպէսզի կարենանք ճամբայ հարթել ապագայ սերունդներուն համար:

2014-ին եւ 2015-ին, Հ.Բ.Ը.Մ.ը յատկանշական նախաձեռնութիւններ իրականացուց, ուսման, կրթական նորարարութեան, մարդասիրական օգնութեան, երիտասարդական եւ տնտեսական զարգացման մարզերուն մէջ, միշտ հաւատարիմ ժառանգ մշակութային ժառանգի պահպանումին, մշակման ու տարածումի իր շարունակուող առաքելութեան: 89-րդ Ընդհանուր Ժողովի Երկամեայ Տեղեկագիրը, յարգանքի տուրք կը մատուցանէ բոլոր անոնց, որոնք կարելի դարձուցին այս իրագործութեանը եւ կը վերահաստատէ մեր անխախտ յանձնառութիւնը, ի շահ համընդհանուր մեր ազգին:

Աշխարհի շուրջ հայերս ոգեկան վերածնունդ եւ հոգեվիճակներն ապրեցանք, վկաները դառնալով Հայկական Տեղասպանութեան 1.5 միլիոն նահատակներու սրբադասումին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ: Հ.Բ.Ը.Մ.ի նիւթական աջակցութեամբ, Հայ Առաքելական Եկեղեցին քրիստոնէական հաւատքին շուրջ միաւորեց աշխարհատարած միլիոնաւոր հայեր: Մենք մեզ առանձնաշնորհեալ ու պատուուած կը զգանք այս պատմական արարողութեան ի նպաստ մեր բերած աջակցութեան համար:

Ինչպէս ըրած ենք Հ.Բ.Ը.Մ.ի պատմութեան անցնող 110 տարիներուն, մենք կը շարունակենք յանձնառու ժառանգ մեր հիմնական առաքելութեան մէջ, միաժամանակ քայլ պահելով մեր շուրջ կատարուող զարգացումներուն հետ: Ասոր մէկ օրինակն է Հ.Բ.Ը.Մ.ի կրթական նորարարութեան նախաձեռնութիւնը, որ կ'աշխատի ժամանակակից ճարտարարուեստի միջոցներու օգտագործումով, ուսուցման օժանդակ միջոցներ ստեղծել: Արդէն գործածութեան դրուած են հայերէն լեզուի, պատմութեան եւ մշակոյթի ու ասանկութեան վերաբերեալ երեք կիրարկութեան, *սմարթ ֆոններու* եւ *թապլէթներու* համար, որոնք լեզուի եւ պատմութեան ու սովորութիւններու ծանօթացումը պատանիներու եւ երիտասարդներու համար հաճելի եւ մատչելի կը դարձնեն:

Մենք նաեւ գործակցութիւններ ստեղծած ենք նորարար կազմակերպութիւններու հետ, ինչպէս Թումո Ստեղծագործ ճարտարարուեստներու Կեդրոնը: Այդ գործակցութեան իբր արդիւնք, Հ.Բ.Ը.Մ. x Թումո կեդրոններ ստեղծուեցան Գիւմրիի եւ Ստեփանակերտի մէջ:

Կրթական նորարարութեան գծով այս նախաձեռնութիւնը, ապագայի ի նպաստ մեր ներդրումներուն մէկ օրինակն է: Մենք Համոզուած ենք որ երիտասարդ սերունդի մշակումը, ակադեմիականօրէն, արհեստավարժօրէն եւ ընկերային պարունակի մէջ, անոնց համար փորձառութեան առիթներու ստեղծումով եւ Քաջալերելով որ գործօն դերեր վերցնեն հանրային կեանքի մէջ, անպայմանօրէն կարելոր է, եթէ կ'ուզենք համընդհանուր հայութեան համար զօրաւոր եւ կայուն ապագայ ապահովել: Մեր բարձրագոյն ուսման կրթաթոշակները, ինչպէս նաեւ Կորիզի

եւ Ասպարեզային Փորձառութեան ծրագիրները, կը բխին այս համոզումէն եւ կը դրսեւորեն մեր առաքելութեան մէջ կրթութեան առաջնահերթութիւնը: Մեր Երիտասարդ Արհեստավարժներու Խմբաւորումը, ընդարձակուող ցանց մըն է, որ ոչ միայն ընկերային ձեռնարկներով եւ ասպարեզային հետաքրքրութիւններով իրարու կը կապէ երիտասարդութիւնը պատկանելութեան զգացումով, այլեւ կը հանդիսանայ Միութեան ծրագիրներուն եւ մարդասիրական նախաձեռնութիւններուն օժանդակող զօրաւոր օղակ մը:

2015-ին, հպարտառիթ իրագործում մըն էր Հ.Բ.Ը.Մ.ի Երեւանի հոյակապ կառոյցը, որ իրականացաւ Հոգաբարձական Խորհուրդի անդամ Տէր եւ Տիկին Նազար եւ Արտեմիս Նազարեաններու իշխանական բարերարութեամբ: Ճարտարապետական իւրայատուկ յղացումով եւ մթնոլորտի պահպանման ժամանակակից լուսագոյն միջոցներով օժտուած 65,000 քառ. ոտք տարածութեամբ վեց յարկանի այս կառոյցը, Հ.Բ.Ը.Մ.ի կեդրոնին առնչութեամբ, կը հիւրընկալէ շարք մը ոչ-շահամէտ, ինչպէս նաեւ ստեղծագործ եւ նորարար հաստատութիւններ, որոնք ընկերային-տնտեսական զարգացման նպաստող ուժական գործակցութեան յառաջատար տիպար մը կը ներկայացնեն:

Միութեան պաշտօնաթերթին առնչութեամբ վերջին տարիներուն շրջանառութեան դրուած *The Insider* պարբերաթերթը, լուսարձակի տակ կը բերէ Հ.Բ.Ը.Մ.ի կրթական եւ վարժողական ծրագրէն շրջանավարտ արհեստավարժներ, որոնք իրենց ասպարեզներուն մէջ յաջողութիւն արձանագրած են դառնալով յայտնի եւ հանրայայտ անձնաւորութիւններ: Թերթի գտած լայն ժողովրդականութիւնը կը վկայէ ոչ միայն Միութեան դերի արդիւնաւորութեան մասին, այլ նաեւ իբր օրինակելի տիպարներ, այդ անձիքը կը ներշնչեն ու կը խանդավառեն երիտասարդները, քաջալերելով զիրենք հետեւելու իրենց ուղիին:

Այս նախաձեռնութիւններուն առնչութեամբ, Միութիւնը կը շարունակէ յառաջ տանիլ իր մարդասիրական գործունէութիւնը, որ կը ժայ իր առաքելութեան հիմնաքարերէն մին: Սուրիահայութիւնը, երկրի շարունակուող կործանարար պատերազմին պատճառով, կը շարունակէ կորուստներու եւ տեղահանութեան ենթարկուիլ: 2014-2015-ին, Միութիւնը \$1.64 միլիոն հանգանակեց, ի նպաստ Հ.Բ.Ը.Մ.ի Մարդասիրական Արտակարգ Օգնութեան Հիմնադրամին, օժանդակելու համար Սուրիոյ, Իրաքի եւ Արցախի իրադարձութիւններուն պատճառով տուժած հայութեան: Տասնեակ հազարաւոր սուրիահայ ընտանիքներ, որոնք ապաստանած էին Հայաստան, Լիբանան, Գանատա եւ այլուր, աջակցութիւն գտան հայրենի պետութեան եւ համապատասխան շրջանի հայութեան եւ Հ.Բ.Ը.Մ.ի շրջանակներուն եւ դպրոցներուն կողմէ: Սակայն կարիքները շատ են տակաւին: Հետեւաբար, ազգովին մեր ճիգերը պէտք է ի գործ դնենք շարունակելու համար մեր աջակցութիւնը սուրիահայութեան, տեղույն վրայ եւ թէ երկրէն դուրս որպէսզի անոնք կարենան նոր միջավայրներուն մէջ վերակազմել իրենց կեանքերը:

Ես խորապէս կը գնահատեմ բոլոր անոնք, որոնք իրենց հաւատաւոր ճիգերը անխնայ կերպով ի գործ կը դնեն յառաջ տանելու համար մեր Միութեան ազգանուէր առաքելութիւնը: Շնորհակալութիւն կը յայտնեմ մեր բազմահազար նուիրատուներուն եւ ազնուական բարերարներուն, որոնք իրենց մարդասէր ոգին դրսեւորող աջակցութեամբ, կարելի կը դարձնեն այս աշխատանքը: Կոչ կ'ուղղեմ բոլորին, իրենց ուժերը միացնելու մեր հետ, պատուով դիմագրաւելու համար ազգովին մեր դէմ ցցուող մարտահրաւերները եւ մեր կարելիութիւնները եւ կշիռը ի գործ դնելու, մեր համընդհանուր ազգի բարգաւաճ ապագայի ապահովումին համար:

Պերճ Մեղրակեան
Նախագահ

Հ.Բ.Ը.Մ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ 2014-2015



ՆԱԽԱԳԱՀ
Պերճ Սեդրակեան



ՓՈԽ ՆԱԽԱԳԱՀ
Սեմ Սիմոնեան



ՓՈԽ ՆԱԽԱԳԱՀ
Սինան Սինանեան



ԳԱՆՁԱՊԱՀ
Նազարեթ Ֆրստրքճեան



ՓՈԽ ԳԱՆՁԱՊԱՀ
Երուանդ Տեմիրճեան



ԱՏԵՆԱԴՊԻՐ
Սարգիս Ճեպեճեան



ՓՈԽ-ԱՏԵՆԱԴՊԻՐ
Արտա Յարութիւնեան

ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ՝
Վազգէն Եագուպեան

ԳԱՆԱՏ՝
Պերճ Փափագեան (2014),
Լենա Մարգիսեան (2015)

ՖՐԱՆՍԱ՝
Արիս Ադամեան, Ալեքսիս Կեօվճեան (2015)

ԶՈՒՆՅԵՐԻԱ՝
Վահէ Կապրաշ

ՄԻԱՅԵԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ՝
Արնօ Ադամեան (2015),
Ժոզէֆ Ուրուրլեան

ԱՄՆ՝
Նուպար Աֆեկեան, Մ. Մայքըլ Անսուր, Գերոլ Պաղտասարեան-
Ապլանեան, Ժոզէֆ Լ. Պասարպեան, Անի Մանուկեան, (2015),
Լորի Մունչլերեան, (2015), Լեւոն Նազարեան, Երուանդ Զօրեան

ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց

ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴ

Սարգիս Տեմիրճեան, Ռիչարտ Մանուկեան, Նազար Նազարեան, Լուիզ Մանուկեան-Սիմոն, Գառնիկ Եագուպեան

Ի ՅԻՇԱՏԱԿ



Պօղոս Նուպար
Հիմսադիր



Ալեք Մանուկեան
Յկեանս Պատուակալ նախագահ

ՆԻԻԹԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ 2015 – 2014

Ամերիկեան Տոլարով

ՀԱՇՈՒՆԿՇԻՌ

Դեկտեմբեր 31

ԳՈՅՔ	2015 (**)	2014
Ընթացիկ Գոյք		
Դրամատան մէջ պատրաստ Արժեթուղթեր (*)	\$ 10,871,475	\$ 13,249,861
Գանձելի աւանդներ/հաշիւներ	23,321,083	44,306,963
Գանձելի տոկոս	7,710,448	2,563,772
Գումար Ընթացիկ Գոյքի	42,536,398	60,753,988
Արժեթուղթեր-երկարժամայ (*)	229,489,684	205,967,899
Անշարժ Կալուածներ (***)	92,587,522	88,791,526
Սարքեր, կարասի եւ այլ գոյքեր՝ գուտ Գումար Գոյքի	2,051,308	1,901,393
	\$366,664,912	\$357,414,806
ՊԱՐՏԱԿԱՆՔ ԵՒ ՉՈՒՏ ԳՈՅՔ		
Պարտականք		
Վճարելի հաշիւներ	\$8,096,791	\$8,174,031
վճարելի պարտաթուղթեր	124,973	230,871
Գումար Պարտականքի	8,221,764	8,404,902
Զուտ Գոյք		
Ոչ պայմանաւորեալ	64,219,792	54,488,625
Առժամապէս պայմանաւորեալ	40,874,913	53,255,783
Մշտապէս Պայմանաւորեալ (Հիմնադրամներ)	253,348,443	241,265,496
Գումար Զուտ Գոյքի	358,443,148	349,009,904
Գումար Պարտականքի եւ Զուտ Գոյքի	\$366,664,912	\$357,414,806

(*) Կը ներկայացնեն ՀԲԸՄիութեան արժեթուղթերու տոմարական արձանագրութիւնը 12/31/2015-ին եւ 12/31/2014-ին, որոնց սակարանային արժեքը յաջորդաբար Ամերիկեան Տոլարով \$235,322,718 եւ \$252,447,415 են:

(**) Միութեան 2015-ի եւ 2014-ի տարեշրջաններու համադրուած հաշուետուութիւնները կը պարփակեն Միացեալ Նահանգներու (Մ.Ն.) Տէլաուերի ընկերակցութեան, հաշուեքննիչներու կողմէ վաւերացուած տուեալները, առաւել Մ.Ն.է դուրս գործող շրջանակներու եւ մասնաձիւղերու կողմէ ներկայացուած նիւթական տեղեկագրերը: Նկատի ունենալով որ գրքոյկի պատրաստութեան ժամանակ Մ.Ն.է դուրս գտնուող մարմիններէ 2015-ի կարեւոր թիւով Նիւթական տեղեկագրեր մեր տրամադրութեան տակ չէին գտնուեր, 2015-ի ընդհանուր համարատուութիւնը 2014-ի իրականացած թիւերուն վրայ հիմնուած գումարներ կը պարփակէ:

(***) Կեդրոնական վարչութեան գնահատումով, կալուածներու ներկայ շուկայական արժեքը նկատելիօրէն անլի բարձր է քան անոնց տոմարական արժեքը՝ որ արձանագրուած է նիւթական տեղեկագրին մէջ, համաձայն ընդհանրապէս ընդունուած ամերիկեան հաշուապահական սկզբունքներուն (U.S.-GAAP):

ԱՍՓՈՓՈՒՄ

ՀԲԸՄ Նիւթական Տեղեկագիր 10-Տարուայ Բաղդաստական Գումարներու

	2015	% ⁽¹⁾	2014	% ⁽²⁾	2004
Ընդհ. Գոյք	\$366,664,912	2.58%	\$357,414,806	38.63%	\$257,824,214
Ընդհ. Մուտք	56,781,550	11.76%	50,806,953	25.37%	40,527,685
Ընդհ. Ելք	47,348,306	14.20%	41,460,141	21.56%	34,108,761

⁽¹⁾ Միամեայ % Յաւելում (Նուագում) ⁽²⁾ 10-ամեայ % Յաւելում (Նուագում)

ՄՈՒՏՔ

Օժանդակութիւն՝
Նուիրատուութիւններ
Անդամավճարներ
Յատուկ Ձեռնարկներ եւ այլ մուտքեր

Հասոյթ՝

Շահարածիւն եւ տոկոս
Կալուածային
Դպրոցական

Յայտագիրներու Մատակարարման

ԳՈՒՄԱՐ ՄՈՒՏՔԻ

ԵԼՔ

Յայտագիրներ եւ Վարչական Ծախք
Յայտագիրներ

Կրթական
Մշակութային
Կրօնական
Մարդասիրական

Վարչական Ծախք

Դրամահաւարքի Ծախք
Դրամասակային Տարբերութիւն/
Վերադասաւորում

ԳՈՒՄԱՐ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐՈՒ ԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՔԻ

Յաւելում (Նուագում) Ելելումտքի

Միջ-յատկագումարային փոխանցում

Յաւելում (Նուագում) Զուտ Գոյքի

Զուտ Գոյք՝ տարեսկիզբին

Զուտ Գոյք՝ տարեվերջին

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

Ամերիկեան Տոլարով

ԵԼԵԻՄՈՒՏՔ

Առ Դեկտեմբեր 31, 2015 (**)

Առ Դեկտեմբեր 31, 2014

Ոչ Պայմանաորեալ	Առժամապէս Պայմանաորեալ	Մշտապէս Պայմանաորեալ	Ընդհանուր Գումար	Ոչ Պայմանաորեալ	Առժամապէս Պայմանաորեալ	Մշտապէս Պայմանաորեալ	Ընդհանուր Գումար
\$ 7,006,595	\$ 7,115,240	\$ 1,980,631	\$ 16,102,466	\$ 7,351,098	\$ 3,527,030	\$ 7,123,538	\$ 18,001,666
174,825	-	-	174,825	196,270	-	-	196,270
5,728,551	10,000	-	5,738,551	4,987,969	48,800	-	5,036,769
12,909,971	7,125,240	1,980,631	22,015,842	12,535,337	3,575,830	7,123,538	23,234,705
19,269,921	-	-	19,269,921	12,246,138	-	-	12,246,138
1,648,512	2,256	-	1,650,768	1,577,360	7,273	-	1,584,633
13,845,018	-	-	13,845,018	13,741,477	-	-	13,741,477
34,763,452	2,256	-	34,765,708	27,564,975	7,273	-	27,572,248
47,673,423	7,127,496	1,980,631	56,781,550	40,100,312	3,583,103	7,123,538	50,806,953
12,921,637	(12,921,637)	-	-	9,691,178	(9,691,178)	-	-
60,595,060	(5,794,141)	1,980,631	56,781,550	49,791,490	(6,108,075)	7,123,538	50,806,953
22,954,558	-	-	22,954,558	21,857,644	-	-	21,857,644
12,319,297	-	-	12,319,297	9,862,347	-	-	9,862,347
1,909,638	-	-	1,909,638	2,574,903	-	-	2,574,903
3,681,585	-	-	3,681,585	1,722,863	-	-	1,722,863
40,865,077	-	-	40,865,077	36,017,757	-	-	36,017,757
3,989,248	-	-	3,989,248	3,253,591	-	-	3,253,591
432,296	-	-	432,296	415,396	-	-	415,396
2,061,685	-	-	2,061,685	1,773,397	-	-	1,773,397
6,483,229	-	-	6,483,229	5,442,384	-	-	5,442,384
47,348,306	-	-	47,348,306	41,460,141	-	-	41,460,141
13,246,754	(5,794,141)	1,980,631	9,433,244	8,331,349	(6,108,075)	7,123,538	9,346,812
(3,515,587)	(6,586,729)	10,102,316	-	1,620,613	(3,712,332)	2,091,719	-
9,731,167	(12,380,870)	12,082,947	9,433,244	9,951,962	(9,820,407)	9,215,257	9,346,812
54,488,625	53,255,783	241,265,496	349,009,904	44,536,663	63,076,190	232,050,239	339,663,092
\$64,219,792	\$40,874,913	\$253,348,443	\$358,443,148	\$54,488,625	\$53,255,783	\$241,265,496	\$349,009,904



100 ԱՄԵԱԿԸ ԱՌԻԹ ՆՇԵԼՈՒ ԱՆՑԵԱԼԸ ԵՒ ՃՇՐԵԼՈՒ ԱՊԱԳԱՅԻ ՆՈՐ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

2015ի ընթացքին, աշխարհի տարածքին աննախընթաց տարողութեամբ նշուեցաւ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակը, յարգանքի տուրք մատուցելով զոհերու յիշատակին նաեւ երախտագիտական նախաձեռնութիւններով զնահատելու բոլոր անոնք, որոնք տարբեր ձեւերով օգնած էին ցեղասպանութենէն վերապրողներուն: Հ.Բ.Ը.Միութեան անդամակցութիւնը իր բոլոր մասնաճիւղերու շրջանակներէն ներս տարբեր միջոցառումներով ինչպէս նաեւ նիւթական աջակցութեամբ իր մասնակցութիւնը բերաւ Հարիւրամեակի Պետական Յանձնաժողովի կազմակերպած համաշխարհային յուշահանդէսներու ծրագիրներուն:

Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին առիթով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի շրջափակէն ներս կատարուած յատուկ արարողութեամբ, Հայկական Յեղասպանութեան մէկուկէս միլիոն նահատակները սրբադատուեցան: Այս պատմական իրադարձութեան առթիւ, Հ.Բ.Ը. Միութիւնը հովանաւորեց սրբադասման արարողութեան հեռաւիժումը, աշխարհասփիւռ հայութեան առիթ տալով ակնատես դառնալու այս պատմական աննախադէպ արարողութեան:

Ապրիլ ամսուն, Հռոմի Կաթողիկէ Եկեղեցին, Սրբազան Պապին նախաձեռնութեամբ, Վատիկանի Սբ. Պետրոս Եկեղեցոյ մէջ, Յեղասպանութեան նուիրուած յիշատակի յատուկ պատարագով, նշեց հարիւրամեակը: Այդպիսով կաթողիկէ եկեղեցոյ միլիոնաւոր հաւատացեալներ աշխարհի տարածքին հետեւեցան արարողութեան եւ ճանցան ցեղասպանութիւնը:



Հայոց Յեղասպանության Հարիւրամեակը նշուեցաւ նաեւ աննախադէպ շարք մը միջոցառումներով Պոլսոյ մէջ: Եւրոպայի Հ.Բ.Ը. Միութիւնը, մարդկային իրաւանց եւ ընկերային-քաղաքացիական շարք մը կազմակերպութիւններու հետ գործակցաբար, ինչպէս Եւրոպայի Հակա-ազգայնամոլական Շարժումը (European Grassroots Antiracist Movement-EGAM) եւ Durde, Հայաստանէն, Թուրքիայէն եւ Եւրոպայէն ժամանած երիտասարդներ շարժում մի մղեցին, յարգելու Յեղասպանութեան զոհերը, նոյն այդ հողին վրայ, ուր պատմութեան ամենամութ էջերէն մին արձանագրուած էր:

Միացեալ Նահանգներու մէջ, Հայոց Յեղասպանութեան Հարիւրամեակի Ազգային Յանձնախումբը, Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Կարչական Ժողովի անդամ Նուպար Աֆէեանի ղեկավարութեամբ, կազմակերպեց շարք մը յիշատակի ձեռնարկներ Ուաշինկթօնի մէջ, 2015-ի Մայիս ամսուն: Ձեռնարկները կ'ընդգրկէին Էթիմէնիք (ընդհանրական) պաշտամունք մը National Cathedral-ի մէջ, ինչպէս նաեւ յուշանուէրներու տուչութեան ձեռնարկ մը, պատուելու համար 29 անհատներ, երկիրներ եւ կազմակերպութիւններ, որոնք մարդասիրական օժանդակութիւն փութացուցած էին հարիւր հազարաւոր հայերու 1915-1923 տարիներու ցեղասպանութեան արարքներու ընթացքին եւ յարգած էին Հայոց Յեղասպանութեան ժառանգութիւնը, ճանաչումի եւ հետազոտութիւններու ընդմեջէն:

Լոս Անձելըսի մէջ 160,000-է աւելի անձեր, որոնց շարքին Հ.Բ.Ը.Մ.-ի Արեւմտեան Ափի անդամներ, Լոս Անձելըսի Հ.Բ.Ը.Մ.-ի վարժարաններու աշակերտներ եւ Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի սկաւտներ ու երիտասարդականի անդամներ մասնակցեցան Արդարութեան Քայլարշաւին, Մայիսի 24-ի օրը: Հ.Բ.Ը.Մ.-ի Արեւմտեան Ափի Շրջանակայինի ատենապետուհի Թալին Եագուպեան փոխ-ատենապետուհին Կազմակերպիչ Միացեալ յանձնախումբին, խօսք ուղղեց ներկաներուն, նշելով օրուան պատմական քայլարշաւի իւրայատկութիւնը, գնահատելով Լոս Անձելըսի հանրութեան ցուցաբերած աջակցութիւնը ամերիկահայութեան անցնող տարիներու ընթացքին:

Գանատայի խորհրդարանը, որդեգրելով թիւ 587 բանաձեւը, Մայիսի 24-ը յայտարարեց որպէս Հայոց Յեղասպանութեան Յիշատակի Օր: Մայիս 2015ին, Մոնթրէալի եւ Թորոնտոյի մէջ նոյնպէս, բազմահազար անձերու մասնակցութեամբ, համաժողովրդային քայլարշաւ տեղի ունեցաւ ի յիշատակ Յեղասպանութեան զոհերուն: Սուրիոյ մէջ Յեղասպանութեան յիշատակի ձեռնարկներ տեղի ունեցան Հ.Բ.Ը.Մ.-ի Հալէպի եւ Քամիշլիի մասնաճիւղերուն կազմակերպութեամբ, իսկ Դամասկոսի մէջ Յեղասպանութիւնը խորհրդանշող նոր յուշակոթողի մը բացումը կատարուեցաւ:

Ֆրանսայի Հ.Բ.Ը.Մ.-ը միջազգային նուագահանդէս մը կազմակերպեց Փարիզի մէջ, «Հայոց Յեղասպանութիւն, 100-ամեայ յուշեր» (Génocide Arménien 100 ans de mémoire) վերնագրով, հովանաւորութեամբ Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Չոլլանտի եւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի: Ելոյթ ունեցաւ Համաշխարհային Հայկական Նուագախումբը խմբավարութեամբ ֆրանսահայ Ալէն Ալթինօղլուի: Նուագախումբը կազմուած էր Հայաստանէն եւ Սփիւռքէն իրենց մասնակցութիւնը բերող տարբեր տարիքի երաժիշտ-կատարողներէ, որոնց կը միանար նաեւ Լիզպոնի Կիւլպէնկեան երգչախումբը: Ուղիղ հեռաձայնով միջոցով, Երեւանի Օփերայի դահլիճին մէջ հաւաքուած ունկնդիրներ, առիթը ունեցան հետեւելու համերգին:



23 Ապրիլ 2015-ին, Հ.Ե.Ը.ի սկաւտները տողանցք մը կազմակերպեցին Պէրրուի մէջ, նշելու համար Հայկական Յեղասպանութեան հարիւրամեակը:



Նախագահ Սերժ Սարգսեան խօսք կ'աւնէ Ուաշինկթօնի Ազգային Տաճարին մէջ, 7 Մայիս 2015-ին: © Կէթօի Նկարչական



Եւրոպայի Հ.Բ.Ը.Մ.ը եւ Եւրոպայի Հակա-Յեղապաշտական Շարժումը, Հայկական Յեղասպանութեան Հարիւրամեակին առիթով, պատուիրակութեամբ մը ներկայ գտնուեցան Պոլիս:

Հ.Բ.Ը.Մ.-Ի ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՍՈՒՐԻԱՀԱՅԵՐՈՒՆ

ՕԳՆՈՒԹԻՒՆ, Ի ԽՆԴԻՐ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՐԳԱԻԱՃՈՒՄԻ

Չորրորդ տարին ըլլալով, Հ.Բ.Ը.Միությանը յանձնառու մասց հասնելու Սուրիոյ քաղաքացիական պատերազմէն տուժած հայերու այլեւայլ կարիքներուն, ուտեստեղէնի, բժշկական խնամքի եւ ապաստարանի վերաբերեալ մարդասիրական օգնութիւն տրանադրելով անոնց, մինչ կործանարար զինեալ հակամարտութիւնը կը շարունակէր իր աւերիչ արշաւը:

2014-ին եւ 2015-ին «Սուրիահայութեան Մարդասիրական Շտապ Օգնութեան Հիմնադրամ»ին համար, Հ.Բ.Ը.Մ.ը հանգանակեց 1,241,000 Ամ. Տոլար, շտապ օգնութիւն փութացնելով աւելի քան 3,000 սուրիահայ ընտանիքներու, իր շրջանակի տեղական յանձնախումբերուն միջոցաւ, պատրաստելով եւ բաշխելով անհրաժեշտ սննդեղէն պարունակող ծրարներ:

Հ.Բ.Ը.Մ.-ի դպրոցներէն ու կեդրոններէն ներս, 100-է աւելի միութենական կամաւոր երիտասարդներ, մասնակցեցան օգնութեան աշխատանքներուն, ուտեստեղէն, խմելու ջուր, վարելանիւթ, էլեկտրածին սարքեր, ծածկոցներ եւ դեղորայք հասցնելով աղետեալ ընտանիքներուն: Հ.Բ.Ը.Մ.-ի կեդրոնները ձմռան եղանակին համար օժտուեցան անկողիներով եւ վերմակներով, ի հարկին ապաստանարան հայթայթելու համար իրենց տուններէն հեռանալու պարտադրուած անձերու: Բժշկական օժանդակութիւն ստացան 50 վիրաւորներ եւ մօտ 400 կարիքաւորներու նիւթական աջակցութիւն տրամադրուեցաւ հիւանդանոցային ծառայութեանց եւ դեղորայքի ծախսերու համար: Միութիւնը նաեւ օժանդակեց հայաբնակ Նոր Գիւղի շրջանին մէջ ոմրակոծուեալէրէն վսասուած Բնակարաններու նորոգութեան:

Հ.Բ.Ը.Միութիւնը ջանաց ամէն գնով ապահովել սուրիահայ երախաներու 2014-2015 տարիներու ուսումնառութեան շարունակականութիւնը: Միութեան վարժարանները ապահովական պայմաններու ներած չափով բաց մասցին, ծառայելու համար աշակերտութեան: Հ.Բ.Ը.Մ.-ի Հաւէպի մշակութային կեդրոնը շարունակեց իր աշխոյժ գործունէութիւնը, Մարեան Ակադեմեայի նկարչութեան դասընթացներով եւ պարարտեստի ու մարզական շարժումներով, ի հիճուկս պատերազմի արհնս իրքին, ջերմ եւ սփոփիչ միջավայր ապահովելով շրջանի հայութեան համար: Այն

© Քեթրին Ուորտ Նկարչութիւն



Մեր օգնության աշխատանքները



Աւելի քան **\$3.2 միլիոն** հանգանակուեցաւ 2012-ին



Աւելի քան **3,000** ընտանիքներ ստացած են շտապ օգնութիւն եւ շուրջ **4,800** անհատներ ստացած են բժշկական օժանդակութիւն



40,000 ուստեստեղէնի ծրարներ բաժնուած են շրջանի տուժած ընտանիքներու



\$300,000 գումարով կրթաթոշակներ տրամադրուած են Հայաստանի համալսարաններու մէջ սուրիահայ ուսանողներու



Սուրիահայերուն պարագային, որոնք կայք հաստատած էին Հայաստան, Լիբանան, Մոնթրէալ եւ Թորոնթօ, Հ.Բ.Ը.Մ.ը հոգաց անոնց դպրոցական կարիքները, միութեան ամենօրեայ կամ շաբաթօրեայ դպրոցներէն ներս յատուկ կարգադրութիւններով, կամ այլ պարագաներու, կրթաթոշակներ տրամադրելով անոնց:

Միութեան Ֆրանսայի, Լիբանանի, Մոնթրէալի, Սան Փաուլոյի եւ Թորոնթօյի մասնաճիւղերը, ինչպէս նաեւ Աթէնքի, Պոսթոնի, Մեծագոյն Նիւ Եորքի, Լոս Անճելոսի, Հիւսիսային Գալիֆորնիոյ եւ Թորոնթօի Երիտասարդ Արհեստավարժ խումբերը, յատուկ հանգանակութեան ձեռնարկներ կազմակերպեցին ի նպաստ Սուրիոյ օժանդակութեան: Հ.Բ.Ը.Միութիւնը նաեւ շարունակեց իր գործակցութիւնը Սուրիահայ Շտապ Օգնութեան եւ Վերաբնակեցման Յանձնախումբին, որ կը համախմբէ Հայ Առաքելական, Կաթողիկէ եւ Աւետարանական համայնքապետերը եւ հայկական գլխաւոր կազմակերպութիւնները: Աւելի քան 3,000 ընտանիքներ ստացան շտապ օգնութիւն եւ շուրջ 4,800 անհատներ ստացան բժշկական օժանդակութիւն: 40,000 ուստեստեղէնի ծրարներ բաժնուեցան շրջանի տուժած ընտանիքներուն: Նաեւ շուրջ 100 սուրիահայերու նիւթական օգնութիւն տրամադրուեցաւ սրտի եւ ծանր այլ հիւնադրութեան վիրաբուժական միջոցառումներու համար: ՀԲԸՄ-ի անձնակազմը տօնական օրերուն յատուկ ձեռնարկներ եւ նուիրաբաշխում կազմակերպեց երեխաներու համար:

ՀԱՅԱՍՏԱՆ

Անցնող երկու տարիներուն նոյնպէս, սուրիահայեր շարունակեցին հաստատուիլ Հայաստանի մէջ, քանի վիճակը Սուրիոյ մէջ կը շարունակէր վատթարանալ: 12,000-էն 13,000 սուրիահայեր կայք հաստատած են Հայաստանի մէջ: Հ.Բ.Ը.Միութիւնը շարունակեց ծրագրուած օգնութեան իր աշխատանքները Հայաստանի մէջ, միաժամանակ Հ.Բ.Ը.Մ-ի Վահէ Կարապետեան կեդրոնէն ներս մասնաբաժին տրամադրելով Սուրիահայերու Հիմնախնդիրները Համակարգող մարմին, ուր ընկերային թէ բժշկական ծառայութիւններու համար կանոնադրաբար գործեցին համապատասխան անձնակազմեր, դիմորդներու հետ շարունակական կապ պահելով: Այստեղ նոյնպէս, Սուրիահայ բժիշկներ սիրայօժար կերպով բժշկական ծառայութիւն կը մատուցանեն հայրենադարձներուն:

2014-2015 տարիներուն Միութիւնը գործակցելով Գալուստ Գիւլպէնկեան Հիմնարկին եւ Հայաստանի կառավարութեան հետ, 2014-ին 130,000, իսկ 2015-ին 145,000 Ամ. տոլար արժողութեամբ կրթաթոշակ տրամադրեց Հայաստանի համալսարաններու մէջ ուսանող 400 սուրիահայերու: նոյն տարիներուն նաեւ Հ.Բ.Ը.Միութիւնը Արցախի մէջ, Չերչեան Ընտանիք Հիմնադրամին գործակցութեամբ, թրաքթորներ եւ երկրագործական միջոցներ տրամադրած է սուրիահայերու, որոնք կայք հաստատած են այդ շրջաններուն մէջ:

ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ՝
Ի ՆՊԱՍՏ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԲԱՐԱԻԱՃՈՒՄԻՆ



Հ.Բ.Ը.Մ. ի Նախաձեռնությամբ Ցայտագիրներ և Ծրագիրներ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի մեջ:



Հայ Կին Յղի Կանանց Շարժումը, իր 4 կեղրոններուն միջոցաւ, կ'աջակցի յղի կանանց և մայրերու:



Տարեցներու ճաշարահները օրական դրութեամբ ճաշի սպասարկութիւն կ'ապահովեն հանգստեան կոչուած հարիւրաւոր տարեցներու:



Հ.Բ.Ը.Մ. ի և ՆՈՒՌ Օրագրի համագործակցութեամբ, Լեռնային Ղարաբաղի տարածքին, աշակերտներու տրամադրուած են արդիական համակարգիչներ և ճարտարագիտական նորութիւններ:



Շարունակուող Ծրագիրներ

ՀԱՅԱՍՏԱՆ

Հ.Բ.Ը.Մ. ի Երեւանի Նոր Շէնքի Կառուցում
 Հ.Բ.Ը.Մ. - Երեւանի պետական բժշկական
 համալսարանի Լեւոն և Գլաուտիա Նազարեան
 Շողարուծութեան Կեդրոն
 Հայաստանի Ամերիկեան Համալսարան
 Հայաստանի ճատրակի Դաշնութիւն
 Հայկական Համացանցային Համալսարան
 Հայրողեայց Տուններ (3)
 Հայ Կին Յղի Կանանց Կեղրոններ (4)
 Տարեցներու ճաշի Կեղրոններ (3)
 Հ.Բ.Ը.Մ. - ԹՈՒՄՕ Կեղրոն-Գիւմրի
 Երեւանի Պետական Համալսարան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ

Գիւղատնտեսական Օժանդակութիւն
 Հայաստանի Ամերիկեան Համալսարանի Շրջանային
 Մասնաճիւղեր
 Ղարաբաղի Մենեկային Նուազիսումբ
 Ղարաբաղի Հիւանդանոց
 Կրթական Նոր Նախաձեռնութիւն (ՆՈՒՌ) Օրագրի
 Գործակցութիւն
 Ստեփանակերտի Հ.Բ.Ը.Մ. - ԹՈՒՄՕ Կեղրոն

ԵՐԵՎԱՆԻ ԿԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Հայաստանի Սկաուտական Շարժում
 Երեւանի Երիտասարդ Արհեստավարժներ

ՍՓԻՌՈՔԻ ՀԱՄԱՐ ԵՐԵՎԱՆԻ ԿԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Անդրանիկ Սկաուտական Ճամբար
 Բացայայտ Հայաստանը Պատանեկան Ծրագիր
 Երեւանի Ասպարէզային Փորձառութեան Ամառնային
 Ծրագիր
 «Երաժշտական Հայաստան» Ծրագիր

ԳԼԽԱՒՈՐ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Ս. Էջմիածնի Արաբկիրի Եկեղեցի
 Ս. Էջմիածնի Հայաստանի Ծրագիրներ
 Ս. Էջմիածնի Մոմավառութեան մատոն Կառուցում
 Ս. Էջմիածնի Մայր Տաճար
 Ս. Էջմիածնի Մայր Եկեղեցույ Երգչախումբ
 Ս. Էջմիածնի Վաղարշապատի Հայրողաց Տուն
 Ս. Էջմիածնի Միաբանական շէնք և Օժանդակութիւն
 Ս. Էջմիածնի Հովուական Զարգացման
 Կաթողիկոսական Հիմնադրամ
 Ս. Էջմիածնի Թանգարան (Ալլքս Սանուկեան
 Գանձատուն)
 Ս. Էջմիածնի Ճեմարան
 Ս. Էջմիածնի Տարեցներու ճաշարան
 Ս. Էջմիածնի «Շողակաթ» Հեռատեսիլի Ծրագիր
 Իզմիրեան Բժշկական Կեդրոն (Նախապէս, Ս. Ներսէս
 Հիւանդանոց)
 Վանաձորի Հայրողեայց Տուն և Տարեցներու ճաշարան
 Վազգէնեան Աստուածաբանական Ընծայարան
 Հայոց Ցեղասպանութեան Նահատակներու
 Սրբադասում


ՄԱՍՆԱՒՈՐ ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ

Արաբկիրի Հիմնարկ Երախաներու և Պատանիներու
 «Հայաստան Այսօր» (Առցանց Հրատարակութիւն)
 Հայաստանի Ֆիլհարմոնիք Նուազիսումբ
 Աշոտ Ղուկեան Դպրոց, Ղարաբաղ
 ԱՅԲ Դպրոց
 Տէֆակտո Պարբերաբերք
 Գիւմրիի Վերածնունդ Փառատուն
 Գիւմրիի Թիւ 3 Դպրոց
 Ս. Էջմիածնի Արագած Ճամբար
 Հայաստանի Ֆրանսական Համալսարան
 Ազգային Մատենադարան
 «Մերոնք» հեռատեսիլային Ծրագիր
 Գիտութիւններու Ազգային Ակադեմիա
 Նոր Մալաթիա Դպրոց
 «Օտար Ամայի Ճամբէրի Վրայ» հեռատեսիլային
 Ծրագիր

Օթիզմ Ունեցող Մանուկներու Դպրոց
 Որակաւոր Ուսուցման Ծրագիր Հայաստանի Համար
 Համաշխարհային Միացեալ Գոլէճի Դիվիզանի
 Միջազգային Դպրոց
 Զանգան Հրատարակութիւններ
 Երեւան Տուտուկի Փառատուն

ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ

Արագածոտնի Շրջան, Ալագեազ գիւղ
 Դպրոցաշինութիւն
 Լոռիի Շրջան, Չորագիւղ
 Մանկապարտեզի շէնքի Վերանորոգում
 Լոռիի Շրջան, Վահագնի Գիւղ
 Դպրոցի մարզասրահի շինութիւն
 Լոռիի Շրջան, Եղեգնուտ Գիւղ
 Դպրոցի Մարզասրահի Վերանորոգում
 Շիրակի Մարզ, Գիւմրի Քաղաք
 Ախտաբանական Հետազոտական
 Գիտաշխատանոցի Կառուցում
 Տաւուշի Մարզ, Ագատամուտ Գիւղ
 Մանկապարտեզի վերակառուցում
 Տաւուշի Մարզ, Բերդ Գիւղ
 Թիւ 2 Մանկապարտեզի Երրորդ Շէնքի նորոգութիւն
 Տաւուշի Մարզ, Քիրանց Գիւղ
 Ամբողջացում ջրամատակարարման համակարգի
 կառուցման
 Վայոց Ձորի Մարզ, Անձրուտ Գիւղ
 Համայնքային Տան շէնքի Վերակառուցում
 Վայոց Ձորի Մարզ, Զարիթափ Գիւղ
 Մանկապարտեզի Վերանորոգում



Հ.Բ.Ը.Մ.-Ե.Պ.Բ.Հ. Լեւոն եւ Գլոտիա Նազարեան Շողաքնութեան Կեդրոն

2015-ին, տեղի ունցաւ բացումը Երեւանի Պետական Բժշկական Համալսարանի Հերացի Հիւանդանոցին մէջ գտնուող Հ.Բ.Ը.Մ.-ի Լեւոն եւ Գլոտիա Նազարեան Շողաքնութեան բաժնին, որ օժտուեցաւ նոր MRI գերադիական սարքով մը, շնորհիւ Հ.Բ.Ը.Մ.-ի Խնամակալներու Մարմնի անդամ բարերար Տէր եւ Տիկին Նազար եւ Արտեմիա Նազարեաններու կատարած 1,4 միլիոն տոլարի նուիրատուութեան, ի պատիւ իրենց զակին, Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ Տոքթ. Լեւոն եւ Գլոտիա Նազարեանի, որոնց անունով կոչուեցաւ

կեդրոնը: Այս նոր սարքը առիթ ընծայեց բժիշկներուն, որպէսզի տարատեսակ ախտաճանաչումներ կատարեն սրտանօթային, մկանակմախքային, որովայնային եւ ջղային համակարգերու: Հեռահաղորդման միջոցով կեդրոնը նաեւ առիթ կ'նծայե բժիշկներուն, որ թուային նկարներ ուղարկեն Միացեալ Նահանգներ, մասնագէտներու միջեւ խորհրդակցութեան համար: MRI սարքը կաւեւոր յաւելում մըն է 2010-ին բացուած շողաքնութեան այս կեդրոնին մէջ, որով Հերացի Հիւանդանոցը կը հանդիսանայ շողաքնութեան արդիական կեդրոն մը:

Հայաստանի Ամերիկեան Համալսարան (Հ.Ա.Հ.)

Հ.Բ.Ը.Մ.ը շարունակեց օժանդակել Հայաստանի Ամերիկեան Համալսարանին, հովանաւորելով նոր կրթաթոշակներու ծրագիրներ եւ ուսանողներու ակադեմական եւ գրադարանային աղբիւրներ ապիովող նախաձեռնութիւններ: 2014-15 ուսումնական տարեշրջաններուն, Համալսարանը եւ Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութիւնը, Հ.Բ.Ը.Մ.-ի կողմէ 50,000 ամերիկեան տոլար նիւթական օնդակութեամբ, հաստատեցին նոր ծրագիր մը, որ հայկական բանակի անձնակազմին կ'ընձեռն ուսումնական նոր առիթներ: Ծրագիրը կրթաթոշակներ կը տրամադրէ բանակայիններու, իրենց զինուորական ծառայութեան որեւէ փուլին, հարիւստակարծական դասընթացներու մասնակցութեան համար: Կրթաթոշակներ կը տրամադրուին նաեւ Պաշտպանութեան Նախարարութեան այն ներկայացուցիչներուն, որոնք արդէն իսկ կ'ուսանին Համալսարանի ասարտական եւ բարձրագոյն դասարաններուն մէջ:

Հ.Բ.Ը.Մ.-ը նաեւ շարունակեց իր 575,000 ամերիկեան տոլարի հնգամեայ յանձնառութիւնը Համալսարանի Շարունակուող Ուսումնական (Continuing Education Program) եւ Համալսարանի Շրջանային Ծրագիրներուն (Extension Program) Ղարաբաղի մէջ: Այդ ծրագիրները, ղեկավարման, հանրային ծրագրումի, վարչագիտութեան, գրօսաշրջութեան եւ հիւրանոցային ծառայութիւններու ճիւղերուն մէջ վկայուելու հնարաւորութիւն կու տան: Համալսարանը նաեւ գործնական դասընթացներ կազմակերպած է ասպարեզային զարգացման, եւ տեղեկատուական ճարտարագիտութեան գծով, ինչպէս նաեւ պաշտօնական ճանաչման քննութիւններ, ինչպէս Անգլերէնը որպէս օտար լեզու (TOEFL) եւ Անգլերէնի վեց մակարդակներով դասընթացը: Ծրագրի սկիզբէն, 2012-էն ի վեր, 133 դասընթացներ տրուած են 2,100 ուսանողներու:

Հ.Բ.Ը.Մ.-ի Փափագեան Գրադարանը ստացած է գիրքեր նուիրատուութեամբ ամերիկահայ մտաւորականներ Ռիչըրտ

Յովհաննիսեանի եւ Վարդան Գրիգորեանի: Յովհաննիսեան նուիրած է 1,800 գիրքեր հայկական, ռուսական, խորհրդային, մերձարեւելեան, միջինարեւելեան, բիզանդական եւ արդի եւրոպական պատմութեան եւ մշակոյթի մասին: Գրիգորեան նուիրած է իր անձնական հաւաքածոյն 600 հրատարակութիւններ, ընկերային գիտութեանց եւ մարդասիրական նիւթեր ընդգրկող: Հ.Բ.Ը.Մ.-ի Երիտասարդ Արհեստավարներու խումբեր Պոսթընէն, Լիբանանէն, Լոս Անճելըսէն, Մոնթրէալէն, Նիւ Եորքէն, Ֆիլատելֆիայէն եւ ՀԱՅՔ խմբաւորումը Ֆրանքֆուրթէն, օժանդակեցին Համացանցային Սարքաւորումի Համախմբումի (Association for Computing Machinery) ծրագրին, իրենց ձեռնակներու հատոյթը տրամադրելով գրադարանի թուայնացած աղբիւրներու ձեռքբերումին: Այս թուայնացուած գրադարանը Համալսարանի բարձրագոյն դասարաններու ուսանողութեան կը հայթայթէ հիմնական աղբիւրներ եւ նիւթեր ընթացիկ եւ արխիւային պարբերաթերթերէ, յօդուածներ եւ պատճեններ համակարգչային ճարտարարուեստի միջոցով, որ անհրաժեշտ է իրենց ուսումնասիրութեանց համար:

Հիմնուած 1991-ին, Հայաստանի Ամերիկեան Համալսարանը, յատուկ ծրագրով անկախ համալսարան մըն է Երեւանի մէջ, հիմնուած Հ.Հ. Կառավարութեան, Գալիֆորնիոյ Համալսարանին եւ Հ.Բ.Ը.Մ.ի համագործակցութեամբ:





Հ.Բ.Ը.Մ.- Մայր Աթոռ Ս. Էջմիածին Հայորդեայց Կեդրոններ

Հ.Բ.Ը.Մ.-ի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հայորդեայց Կեդրոնները շարունակեցին արտադպրոցական իրենց պատանեկան ծրագիրները նկարչութեան, կատարողական արուեստի, համակարգիչի, ձեռարուեստի, պարարուեստի, մարմնամարզութեան, պատմութեան, լեզուի եւ երաժշտութեան բաժիններով: 2014-ին երկու պատանիներ Նորքի Հայորդեաց Կեդրոնի Գեորգ Գինոսեան կրկեսային խումբէն, ընկերակցեցան

երգչուհի Պեթթիին, որ կը ներկայացնէր Հայաստանը՝ Մանուկներու Երատեսիլի մրցումին, Մայրթայի մէջ: Երեսնի 2,796-ամեակին առթիւ, Հ.Բ.Ը.Մ.-ի Նորքի Հայորդեայց Կեդրոնը քաղաքապետ Տարօն Մարգարեանի կողմէ արժանացաւ Երեսնի Ոսկեայ շքանշանին, նման առիթներով ցուցաբերած իր մասնակցութեան համար: 2015-ին Նորքի Կեդրոնէն խումբ մը, Հ.Բ.Ը.Մ.ի հրաւերով ճամբորդեց Ֆրանսա, մասնակցելու համար «Eternels»-ի ելոյթներուն:

«Հայ Կին» Կեդրոններ

Հ.Բ.Ը.Մ.-ի «Հայ Կին» ՅՈՒ կանանց Կեդրոնները շարունակեցին իրենց առաքելությունը օգնելով յոթ կանանց եւ նորածիններուն: 2014 եւ 2015 տարիներուն, այս կեդրոնները հոգատարություն ցուցաբերած են 300 նորածին երախաներու եւ անոնց մայրերուն՝ Թալինի, Վանաձորի, Եղվարդի եւ Երեւանի կեդրոններուն մէջ: 2015-ին Երեւանի Հ.Բ.Ը.Մ.-ը այցելեց Վանաձորի Հայ Կին կեդրոնը եւ նորածիններուն գլխարկներ եւ բրդեայ ծածկոցներ բաժնեց, որոնց վրայ ՄԷԲ ծրագրին արձանագրությունը կար, եւ որոնք նուիրուած էին Ամերիկայի Աւետարանչական Ընկերակցութեան կողմէ (AMAA): Այս ծրագիրը, յղացուած է Հ.Բ.Ը.Մ.-ի Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբի (NYSEC) անդամ Պեթթի Չերքեզեանի, որ ձեռագործ հիւսք եւ հելուսագործ (crochet) գլխարկներ եւ ծածկոցներ կը տրամադրէ ամբողջ Հայաստանի ծննդատուներու նորածիններուն: Այցելութեան ընթացքին Երեւանի Հ.Բ.Ը.Մ.-ի ներկայացուցիչները հանդիպում ունեցան 23 կիներու հետ, որոնցմէ 13 -ը իրենց առջինները պիտի ունենային: 2002-ին հիմնուած Հ.Բ.Ը.Մ.-ի «Հայ Կին» ՅՈՒ կանանց Կեդրոնները անվճար, առողջապահական հոգատարություն եւ օժանդակություն կը ցուցաբերեն յոթ կանանց: Այս ծրագրին շնորհիւ 2000 առողջ



նորածիններ աշխարհ եկած են: Այս Կեդրոնները կ'աշխատին բարելաւել ծնելիութեան մակարդակը եւ կ'օգնեն ընտանիքներուն որ առողջ երախաներ մեծցնեն, անոնց համար կազմակերպելով դաստիարակչական հանդիպումներ ընկերային ծառայութեան աշխատողներու եւ հոգեբաններու մասնակցութեամբ, ջամբելով երախայի հոգատարութեան եւ ծնողական տարրական գիտելիքներ:

Ղարաբաղի Սենեկային Նուագախումբ

2014-ին Ղարաբաղի Սենեկային Նուագախումբը, անոր գեղարուեստական ղեկավար Գեորգ Մուրատեանի ղեկավարութեամբ, յատուկ ծրագրով մը նշեց իր հիմնադրութեան 10-ամեակը պատուելու համար նուագախումբի կատարողները, որուն մաս կազմեց տօնական համերգ մը, Էտուարտ Միրզոյեանի, Աննօ Բաբաջանեանի, Ասթօր Փիացոլլայի եւ այլ հայ թէ օտար երգահաններու երաժշտական յորինումներէն նմոյշներով: Նուագախումբը նաեւ կազմակերպեց յատուկ համերգ մը, որուն հասոյթը տրամադրուեցաւ Ստեփանակերտի Ս. Աստուածածին եկեղեցույ կառուցման աշխատանք-ներուն: 2015-ին, նուագախումբը, համագործակցութեամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Սշակոյթի եւ Երիտասարդութեան Նախարարութեան, Միացեալ Նահանգներ ճամբորդեց երկու համերգներու համար: Համերգները տեղի ունեցան Լոս Անճելըսի Ալէքս սրահին մէջ եւ Պոսթոնի Ազգային Ժառանգութեան Թանգարանին մէջ (Boston National Heritage Museum): Տասնհինգ նուագողներ Հայաստանէն եւ ԼՂՀ-էն կը մասնակցէին



նուագախումբին, որ 2004-ին իր հիմնադրութենէն ի վեր կարելու ներդրում կատարած է ԼՂՀ-ի մշակոյթի զարգացման գծով:

Հ.Բ.Ը.Մ.Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ



Հ.Բ.Ը.Մ. ի հովանաւորութեամբ, Միջազգային Հանրապետական Ճատրակի Տարեկան Մրցաշարքը, երկրի բոլոր դպրոցներէն աւելի քան 15,000 տաղանդաւոր պատանիներ կը համախմբէ:



2014-2015ին, Հ.Բ.Ը.Մ.ի Տարեկան Ճաշի Կեդրոնները աւելի քան 400,000 ճաշաբաժին բաշխած են:



Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ գործակցութեամբ, Հ.Բ.Ը.Մ.ը կը հովանաւորէ 24 ընկերային եւ այլ զարգացման ծրագրեր:

Հայաստանի Ֆրանսական Համալսարան

Հ.Բ.Ը.Մ.-ը շարունակեց իր համագործակցությունը Հայաստանի Ֆրանսական համալսարանին հետ: 2014-ին եւ 2015-ին Հ.Բ.Ը.Մ.-ը 60,000 ԱՄ տոլար տրամադրեց Համալսարանի երկրորդ, երրորդ եւ չորրորդ կարգերու 48 ամենաառաջնակարգ ուսանողներուն, որպէս Հ.Բ.Ը.Մ.-ի Գերազանցութեան Կրթաթոշակ: 2007-էն ի վեր 160 ուսանողներ կրթաթոշակ ստացած են Հ.Բ.Ը.Մ.-էն: 2014-15 ուսումնական տարեշրջանին դրամատնային եւ ապահովագրական նոր դասընթացներ աւելցած են համալսարանի ծրագրին: Այս ճիւղերէն շրջանաւարտները պիտի մարզուին որպէս ելեւմտական, խորհրդատուական, վարկային տնօրինումի եւ ապահովագրութեան մարզերու աշխատողներ: 2014-ին ՀՖՀ-ի 9 ուսանողներ ճամբորդեցին Ֆրանսա, մասնակցելու համար վարժողական ամառնային ծրագրին Օրանժի մէջ, որ հեռահաղորդակցութեան կարելուքը ընկերութիւն մըն է, նաեւ Damaris SA-ի մէջ, որ տեղեկատուական ճարտարագիտութեան առաջնակարգ հաստատութիւն մըն է եւ Grant Thornton-ի մէջ, որ հաշուակալութեան եւ հարկային խորհրդատուական մեծ հաստատութիւն մըն է: Ուսանողները, իրենց ֆրանսերէն լեզուի իմացութեան շնորհիւ կրցան ֆրանսահայ համայնքի անդամներուն հետ հաղորդակցիլ եւ կապեր հաստատել Եւրոպայի հայութեան հետ: ՀԲԸՄ եւ ՀՖՀ



համագործակցությունը սկիզբ առաւ 1994-ին, երբ Հ.Բ.Ը.Մ.-ի Ֆրանսայի մասնաճիւղը հիւրընկալեց ՀՖՀ-ի առաջին վարժողական ծրագրի ուսանողները Փարիզի մէջ: Այդ օրէն ի վեր 80 ուսանողներ 4 շաբաթեայ եւ 6 շաբաթեայ գործուղումով կը մասնակցին այդ ծրագրին Կրենսպլի, Լիոնի, Փարիզի եւ Վալանսի մէջ, Հ.Բ.Ը.Մ.-ի նիւթական օժանդակութեամբ:

Մատենադարանի Ուսումնավարկային Ծրագիր

2014-ին Հ.Բ.Ը.Մ.-ը հաստատեց ուսումնավարկային նոր ծրագիր մը, Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեան եւ Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի համագործակցութեամբ, քաջալերելու համար երիտասարդ այն գիտաշխատողները, որոնք նուիրուած են հայոց պատմութեան հետ առնչուող հնագոյն ձեռագրեր, մատենաներ եւ փաստաթուղթեր պահպանելու եւ ուսումնասիրելու գործին: Ութ բարձրագոյն ուսման հետեւողներ ուսումնավարկ ստացան յիշեալ ծրագրէն: 2015-ին 11 ուսումնասիրողներ նոյնպէս օգտուեցան ծրագրէն: Հ.Բ.Ը.Մ.-ը միշտ նախանձախնդիր եղած է Ազգային Մատենադարանին նկատմամբ եւ կը շարունակէ տարբեր առիթներով եւ միջոցներով օժանդակել անոր: Անցեալին Հ.Բ.Ը.Մ.-ի բարերարները օգնած էին որ Մատենադարանը օդորակիչ սարքեր ունենար, ինչպէս նաեւ հակահրդեհային եւ ապահովութեան համակարգեր,



որոնք կենսական են, պահպանելու համար անոր արխիւները: Հ.Բ.Ը.Մ. նաեւ հովանաւորած Ազգային Մատենադարանի գիտաշխատողներու շարք մը հրատարակութիւնները:

Ուսումնական Նոր Ռազմավարութիւն - Համագործակցութիւն ՆՈՒՌ Օրագրին հետ

2014-ին եւ 2015-ին ՆՈՒՌ Ուսումնական Նոր Ռազմավարութիւնը ընդարձակուեցաւ դէպի վեց նոր շրջաններ Ղարաբաղի մէջ Հատուր, Բերդաձոր, Քարվաճառ, Մարտակերտ, Մարտունի եւ Ասկերան: Օրագրի ծիրէն ներս Սօտաւորապէս 1,200 համակարգիչներ բաժնուեցան Ստեփանակերտի եւ Շուշիի վեցերորդ դասարանի աշակերտներու, տրամադրելով յատուկ համակարգիչներ, որոնք հնարաւորութիւն կու տան օգտագործողներուն ստեղծել եւ խմբագրել գրաւոր, լսողական, տեսողական (լուսանկարներ եւ տեսերիզներ) եւ խաղերու նիւթեր: ՆՈՒՌ նաեւ կազմակերպեց վարժութեան դասընթացներ Ստեփանակերտի եւ ընդարձակուած տարածքներու ուսուցիչներուն, վկայագրեր եւ շարժական համակարգիչներ նուիրելով ծրագիրը աւարտողներուն: 2012-էն ի վեր Հ.Բ.Ը.Մ.-ը եւ արժանիքնահայ բարերար Էտուարսօ Էօրնէքեանի «Արդիւնաւետ Հայկական Հիմնադրամ»ը համագործակցած են ՆՈՒՌ ծրագրով, հիմնականօրէն Ղարաբաղի 1-էն 4 դասարաններու աշակերտութեան եւ անոնց ուսուցիչներուն



նուիրելով շարժական համակարգիչներ: Այս ծրագրի նպատակն է իւրաքանչիւր Երեխայ օժտել համակարգիչով մը (One Laptop Per Child) (OLPC): Օրագրի մտայղացումը, կայացած է Մասաչուսեցի ճարտարագիտական Հիմնարկի Massachusetts Institute of Technology (MIT)-ի մէջ, նպատակ ունենալով աշակերտութեան առիթ ընծայել որպէսզի անոնք խաղան եւ սորվին, շեշտելով ստեղծագործութեան կարելուքները: ՆՈՒՌ-ի հիմնումէն ի վեր 1700 համակարգիչներ բաժնուած են:

Հանրապետական Միջոցարոցական Ճատրակի Մրցաշարը

Հ.Բ.Ը.Մ.-ի Ուսման Գերազանցության յանձնառությունը, շարունակեց հովանավորել Հանրապետական Միջոցարոցական Ճատրակի Մրցաշարը: 2014-ին եւ 2015-ին Հայաստանի, Ղարաբաղի եւ Զուլախքի շրջանի հայկական 1000 վարժարաններու 7-17 տարեկան 15,000 աշակերտներ մասնակցեցան մրցաշարին: 2014-ին աւարտական մրցուժները տեղի ունեցան Ստեփանակերտի մէջ, ուր յաղթողները ստացան համակարքիչ շարժական սարքեր, իսկ աւարտականի ժաւանդները դրամական պարգեւներ Հ.Բ.Ը.Մ.-էն եւ Հայաստանի եւ Ղարաբաղի Ճատրակի Դաշնութենէն: 2015-ին մրցաշարը երկուքի բաժնուեցաւ, միջնակարգի եւ երկրորդականի խումբերով: Հ.Բ.Ը.Մ.ի ութիւնը բոլոր աւարտականի հասած Ճատրակորդները պարգեւատրեց Lenovo թաւլէթներով, բարձրագոյն անհատ յաղթողները ստացան մարզական ժամացոյցներ, մինչ յաղթող խումբի անդաժները ստացան դրամական պարգեւներ: Գլխավոր երեք շրջաններէ մրցողները լաւթօփեր ստացան: Հ.Բ.Ը.Մ.ի ութիւնը շարունակաբար հովանավորած է այս մրցաշարը, որ նախաձեռնութիւնն է



Հայաստանի Ճատրակի Ֆետերասիոնին, եւ Հայաստանի Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան, 2008-էն ի վեր:

Տարեցներու ճաշի Մատակարարում

Հայաստանի տարեց սերունդին հանդէպ հոգածու վերաբերումը Հ.Բ.Ը.Մ.ի ուշադրութեան առարկայ եղած է առաջին իսկ օրէն: Տարեցներու յատուկ ճաշարահները կը գործեն Հայորդեայց Կեդրոններէն ներս Նորք, Արաբկիր եւ Մալաթեայ թաղամասերուն մէջ: Անոնք օրական շուրջ 200 տաք ճաշարաժին կ'ապահովեն 600 հոգատարութեան կարիք ունեցող տարեցներու: Հ.Բ.Ը.Մ.ի սկաուտներ եւ կամավորներ, ի հարկին ճաշարաժինները կը հասցեն անոնց, որոնք դժուարութիւն ունին տունէն ելլելու եւ հասնելու ճաշարահ: Այս գործունէութեան ծիրէն ներս 2015-ին, Օննդեան տօնական օրերուն, անակնկալ ճաշկերոյթ մը կազմակերպուեցաւ 1200 հանգստեան կոչուած տարեցներու համար:



Հայաստանի Տնտեսապէս Անապահով Շրջաններու Ուսուցչական Ծառայութիւն

Տնտեսապէս անապահով շրջաններու մանուկներուն որակաւոր ուսուցչական ծառայութիւն ապահովելու նախաձեռնութիւնը (Teach For All), համաշխարհային շարժում մըն է որ աշխատանք կը տանի որակաւոր ուսման կարելիութիւնները բոլորին հաւասարապէս հասանելի դարձնելու ուղղութեամբ: Համոզուած, որ ատիկա կը նուազեցնէ աղքատութիւնը եւ անկէ բխող ընկերային ժխտական երեւոյթները եւ կը նպաստէ երկրի տնտեսական զարգացման: Շարժումը կը քաջալերէ տարբեր մասնագիտութեան բրիտասարդ եւ ընկերային ծառայութեան հակում ունեցող երիտասարդ համալսարանաւարտներ եւ կը մարզէ զիրենք երկու տարուան ժամանակաշրջանի մը համար ուսուցչական ծառայութիւն կատարելու, տնտեսապէս անապահով շրջանի մը մէջ: Հ.Բ.Ը.Մ.ը կը գործակցի Հայաստանի նոյնօրինակ ծրագրին, որու նախաձեռնուեամբ 2015-ին, 15 լաւագոյն ուսուցիչներու խումբ մը, որոնք ընտրուած



էին 200 մրցունակ դիմորդներու մէջէն, սկսաւ իր ծառայութիւնը, Թաւուշի, Լոռիի, Արմաւիրի եւ Քեղարքունիքի մարզերուն մէջ:

ՅԱՏՈՒԿ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետական Ծառայություններու Համացանցային Համակարգի Վերաբերեալ Խորհրդածողով

2015-ին, Երեւանի Հ.Բ.Ը.Մ.-ը հիւրընկալեց գիտածողով մը՝ էլեկտրոնային կառավարման (ել-կառավարում) մասին, կազմակերպուած Հայաստանի Եւրոպական Միութեան Պատուիրակութեան, Հայաստանի մէջ Էստոնիայի Դեսպանութեան եւ Թուսօ Ճարտարագիտական Ստեղծագործութեան Կեդրոնին: Գիտածողովի գլխաւոր նպատակն էր հանրութեան մօտ աւելի խոր հասկացողութիւն մշակել՝ էլ-կառավարման մասին, որ առցանց եւ էլեկտրոնային հաղորդամիջոցներով, պետական ծառայութիւնները աւելի արագ եւ դիրամատչելի կը դարձնէ հանրութեան, առեւտրական հաստատութիւններու եւ ընկերութեանց, միաժամանակ այդ ծառայութիւնները աւելի թափանցիկ ու արդիւնաւէտ դարձնելով: Գիտածողովի նպատակն էր նաեւ սերտել Մփուօքը աւելի ազդեցիկ եւ գործնական կերպով Հայաստանի էլեկտրոնային կառավարման համակարգին մասնակից դարձնելու կարելիութիւնները:



Միջկլընի Ճարտարագիտական Հիմնարկի Համաշխարհային Ուսումնական Գիտաշխատանոց

2015-ին, Հ.Բ.Ը.Մ.ը եւ Այբ եւ Լոյս Հիմնարկները, Միջկլընի Ճարտարագիտական Հիմնարկին հետ համագործակցութեամբ, մեկնարկեցին հիմնարկի Համաշխարհային Ուսումնական Գիտաշխատանոցի ամառնային փորձառական ծրագիրը: Այբ Դպրոցին մէջ կայացած այս աշխատանոցը, ի մի բերաւ Հայաստանի տարբեր շրջաններէն եւ Արցախէն 110 աշակերտներ որոնք ծանօթացան ուսումնական նոր զարգացող նիւթերու եւ գիտական կիրարկումներու: մասնակցող աշակերտներէն 32-ը, որոնք եկած էին հեռաւոր շրջաններէ, հիւրընկալուեցան Հ.Բ.Ը.Մ.ի Վահէ Կարապետեան Կեդրոնին մէջ:



Ս. Էջմիածնի Վերանորոգուած Հին Վեհարանի Բացումը

Հ.Բ.Ը.Մ.ի Նախագահ Տէր եւ Տիկին Պերճ եւ Վերա Սեդրակեաններու նուիրատուութեամբ, իրկանացաւ Ս. Էջմիածնի Հին Վեհարանի պատմական գեղեցիկ կառոյցին հիմնական վերանորոգումը: Վերակառուցուած Վեհարան-Թանգարանին պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 2014-ի Յուլիսին, յատուկ հոգեւոր արարողութեամբ, որուն կը նախագահէր Վեհափառ Հայրապետը, ներկայութեամբ պետական, կրթական եւ մշակութային պաշտօնական անձնաւորութիւններու: Հին Վեհարանի թանգարանի բաժնի տարբեր դահլիճներուն մէջ ցուցադրուած են Հայոց Հայրապետներուն և արքաներուն գեղանկարները եւ դարաւոր պատմութիւն ունեցող արժէքաւոր առարկաներ, անձնական իրեր, հայկական արժաթագործութեան և ասեղնագործութեան եզակի ստեղծագործութիւններ եւ ծիսական առարկաներ: Նոր կառոյցը նաեւ օժտուած է հիւրանոցային յարմարութիւններով, այցելու բարձրաստիճան հոգեւորականներու համար:





ԹՈՒՄՆ X ՅԲԸՄ

2014-ին Թումն Ստեղծագործական Ճարտարարուեստներու Կեդրոնը եւ Հ.Բ.Ը.Մ.ը, ԹՈՒՄՆ X Հ.Բ.Ը.Մ անունով համագործակցութիւն մը ստեղծեցին, որու նախաձեռնութեամբ, Թումոյի կեդրոններ ստեղծուեցան Գիւմրիի եւ Ստեփանակերտի մէջ: Ծրագիրը կը նախատեսէ այլ շրջաններու մէջ եւս Թումն կեդրոններ ստեղծել:

Լեռնային Ղարաբաղի մէջ, Ստեփանակերտի Թումն կեդրոնը արդիւնք էր Թումն X Հ.Բ.Ը.Մ. գործակցութեան ծիրէն ներս Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ Ժողով Ուղուրլեանի նիւթական աջակցութեան: Թումոյի Ստեփանակերտի Կեդրոնը առիթ կ'ընծայէ 12-18 տարեկան պատանիներու եւ երիտասարդներու, անվճար յաճախել կեդրոն եւ զարգացնել իրենց կարողութիւնները ժամանակակից ստեղծագործական ճարտարագիտութեան հիմնական մարզերու մէջ, Animation, Game Development, Web Development, Digital Media եւ 3D modeling: Այդ մարզերուն մէջ ըստ նախասիրութեան, իւրաքանչիւր մասնակցող կը ծանօթանայ եւ աստիճանական խորացումով իր կարողութիւնները կը զարգացնէ իր աշխատանքային ոճին եւ իմացական յատկութիւններուն համապատասխան արագութեամբ: Կեդրոնի պատասխանատուները եւ ուսուցիչներէն շատեր յաճախ կեդրոնի շրջանաւարտներ են, նաեւ այդ մարզերու աշխատանքային լաւագոյն մասնագէտներ, որոնք կեդրոնէն ներս պարբերաբար կ'ազմակերպուող աշխատանքներով, իբր այցելու կամ հեռահաղորդակցութեամբ կը վարեն դասընթացները իմբային կամ անհատական ծրագիրներով: Նոյն ծրագրով, Նախագահ Սերժ Սարգսեանի նախաձեռնութեամբ եւ Շանթ հեռատեսիլի նախագահ Արթիւր Եգեկէտանի ղեկավարութեամբ կ'ազմակերպուած Յատուկ թէլէֆօնի հասոյթով, Թումոյի կեդրոն մը ստեղծուեցաւ նաեւ Գիւմրիի մէջ, 2015-ին:



Ոգեշնչել • Ներգրավել • Ըզորացնել ազգը
Inspire • Engage • Strengthen the nation



ՀԲԸՄ-Ի ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Հ.Բ.Ը.Մ.ի 88-րդ Ընդհանուր Ժողովի ծիրեն ներս, պատգամաւորները մասնակից եղան մասնագիտական բարձր մակարդակով քննարկումներու որոնք նուիրուած էին Հայաստանի մէջ մարդու մշակման, զօրաւոր պետականութեան հիմքերու ամրապնդման եւ միջազգային շրջանակներու մէջ հայութեան դիրքի զօրացման խնդիրներուն եւ անոնցմէ բխող կողմադրոշմներուն: Մեկնելով այն հասկացողութենէն որ մարդու Հայաստանի, նաեւ ընդհանրապէս ազգային առումով ամենակարեւոր բնական հարստութիւնը կը կազմէ եւ սփիւռք-հայրենիք շաղկապող տարրն է, քննարկումները գլխաւորաբար կեդրոնացան մարդու մշակումին եւ արդիւնաւոր օգտագործումին համար ներկայիս Հայաստանի մէջ գործող խտտմասլի նախաձեռնութիւններուն, զանոնք խոչնդոտող խնդիրներուն եւ անոնց զարգացումին եւ առաւելագոյն ուժեղացումին նպաստող միջոցառումներուն վրայ: Տնտեսական աճի նպաստող պայմաններու ծիրեն ներս մատնանշուեցաւ թէ երկրի մը քաղաքական կառոյցները կարելի չէ անջատել իր տնտեսական կառոյցներէն: Այն կառոյցները որոնք կը քաջալերեն եւ կը պաշտպանեն անհատի ունեցումը եւ նախաձեռնելու ոգին, ստեղծելով ազատ ճարտարարուեստի եւ առեւտուրի մթնոլորտ եւ քաջալերելով նոր ճարտարարուեստներու մէջ ներդրումներ, կ'պահովեն երկրի տնտեսական արագ աճը եւ երկարաշունչ ընթացք ունին: Այն հարցումին թէ սփիւռքը ինչ ձեւով կրնայ նպաստել պետականութեան կառոյցներու ամրապնդման, քննարկման մասնակիցները ընդգծեցին անհատ գործարարներու ներդրումներուն կողքին այն նախաձեռնութիւնները որոնք կատարուած էին Հ.Բ.Ը.Մ.ի միջոցով: Հայերու միջազգային հաւաքական վարկին մասին խօսելով, քննարկողները մատնանշեցին հայ ժողովուրդի իրապարտութիւնը որպէս տարբեր շրջապատներու եւ մշակոյթներու մէջ կազմուած եւ անոնց հետ հարորդակցելու ատակ բայց հայ ըլլալու հասարակաց յատկանիշներով եւ գիտակցութեամբ օժտուած հաւաքականութիւն եւ հաստատեցին այդ յատկանիշներէն մեկնելով հաւաքական վարկ ստեղծելու կարողականութիւնը:



88-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Երեւանի մէջ, 2015-ին, աւելի քան 200 պատգամաւորներ սփիւռքի տարբեր շրջաններէն, մասնակցեցան Հ.Բ.Ը.Մ.ի 88-րդ Ընդհանուր Ժողովին: Տասնօրեայ համագումարը ընդգրկեց հանդիպումներ, ժողովներ, քննարկումներ Հայաստանէն եւ սփիւռքէն մասնագէտներու մասնակցութեամբ, նաեւ այցելութիւններ նորարար նախաձեռնութիւններու եւ ճարտարարուեստի կեդրոններ: Խումբը այցելեց Թումոյի Ստեղծագործ ճարտարագիտութիւններու Կեդրոնը, Այբ Դպրոց, Համաշխարհային Միացեալ Գոյճի (ՀՄԳ) Դիլիճանի Միջազգային Գոյճ, Հայաստանի Տնտեսապէս Անապահով Շրջաններու Ուսուցչական Ծրագրի Կեդրոն եւ լուսանկարչական կիրարկում մշակման Փիքսար Կեդրոնը: Պատգամաւորները այցելեցին նաեւ Հ.Հ. Պաշտպանութեան Նախարարութիւն,

Կոմիտասի Թանգարան եւ ներկայ եղան Հայկական Համացանցային Համալսարանի (Հ.Հ.Հ.) կազմակերպած Համաշխարհային Խորհրդածողովին եւ Երեւանի Քաղաքապետարանին մէջ, Հ.Հ.Հ.ի «Հետագօտէ Երեւանը – Հին եւ Նոր Երեւան Քաղաքի Համապատկեր» ԵԼ-Գիրքի պաշտօնական մեկնարկի արարողութեան: Պատգամաւորները եռօրեայ այցելութեամբ եղան նաեւ Արցախ, ուր պետական անձնաւորութիւններու հետ պաշտօնական հանդիպումներու առընթեր, այցելեցին ու ծանօթացան Հ.Բ.Ը.Մ.ի Արցախի նախաձեռնութիւններուն, որոնց շարքին Հայաստանի Ամերիկեան Համալսարանի եւ Հ.Բ.Ը.Մ.ի գործակցութեամբ իրագործուած շրջանային ուսումնական կեդրոնը:

Կեդրոնական Վարչական Ժողովի Նորրնտիր Անդամներ


- 88-րդ Ընդհանուր Ժողովի ընթացքին Կեդրոնական Վարչական Ժողովի հինգ նոր անդամներ ընտրուեցան
- Առնօ Աղամեան (Միացեալ Թագաւորութիւն)
- Ալէքսի Կէօվճեան (Ֆրանսա)
- Անի Մանուկեան (ԱՄՆ)
- Լօրի Մունչլերեան (ԱՄՆ)
- Լենա Սարգիսեան (Գանատա)



Հ.Բ.Ը.Մ.-ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՂՈՆԱՏԵՂԻՆԵՐԸ Հ.Բ.Ը.Մ.-ի ՆԵՐՂԴՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ

Հայաստանի մեջ Հ.Բ.Ը.Միության գործունեությունը ընդարձակելու և Հայրենիքի հզորացման ի խնդիր աշխատելու յանձնառության ծիրէն ներս, 2015ին, Երեւանի մեջ կայացած 88-րդ Ընդհանուր ժողովի օրերուն, հանդիսաւորապէս բացոււմը կատարուեցաւ Միութեան Երեւանի կեդրոնական կառոյցին: Վեց յարկանի Շէնքը, որուն մէկ յարկը կը ծառայէ որպէս Միութեան շրջանային ծրագիրներու գլխաւոր կեդրոն, ունի նաեւ ընդարձակ լսարան մը որ օժտուած է ֆիլմերու ցուցադրութեան, ընթերցարանի, դասախօսութեանց և այլ հանրային ձեռնարկներու յարմարութիւններով: Ներքին յարդարանքը և կահաւորումը համատեղում մը կը կազմեն ազգային ոճի և արդիականին միջեւ: Հ.Բ.Ը.Մ.-ի շէնքին մեջ կը գտնուին նաեւ նորարար ճարտարարուեստի և հայաստանի զարգացման ոչ-շահաւէտ հիմնարկներ: Շէնքը նախագծուած է Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Ժողովի անդամ,

ճարտարապետ Արիս Աղամեանի կողմէ, գործակցութեամբ ճարտարապետ Նարէկ Սարգսեանի: Ներքին յարդարումը նախագծուած է «Ստորակէտ»ի կողմէ, որ ճարտարապետական նախագծումներ կատարող կազմակերպութիւն մըն է Երեւանի մեջ: 65,000 քառ. Ոտք տարածութիւն ունեցող այս շէնքը, որուն արտաքին երեսը կրկնօրինակ է «Երեւանի Տումա»ի (Քաղաքային Խորհրդարան) հին շէնքին, որդեգրած է բնապահպանման ժամանակակից ճարտարապետական լուսագոյն միջոցներ, ինչպէս բնական ջերմապահպանումի և լուսաւորումի յարմարութիւններ և արեգակնային ջերմութ ապահովող վահանակներ, էլեկտրականութիւն արտադրելու համար: Հ.Բ.Ը.Մ.ի շէնքը իրականացաւ առատաձեռն նուիրատուութեամբը Հ.Բ.Ը.Մ.-ի Հոգաբարձուներու Մարմնի անդամ, ազգային բարերար Տէր և Տիկին Նազար և Արտեմիս Նազարեաններու:



Նազար և Արտեմիս Նազարեան



ՎԱԽԷ ԿԱՐԱՊԵՏԻԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ՄԷՁ

**Հ.Բ.Ը.Մ.-ի Հայաստանի
ամառնային ծրագիրները
առիթ ստեղծեցին սփիւոքի
տարբեր շրջաններին
պատանիներու եւ
երիտասարդներու,
յայտնաբերելու
Հայաստանը,
ծանօթանալու հայ
մշակոյթին ու ձեռք բերելու
արհեստավարժական
փորձառութիւն:**

2014-ին, ծանօթ բարերար ձեռնարկատեր Վահէ Կարապետեանի կատարած նուիրատուութեան շնորհիւ, Երեւանի Զարարիա Քանաքեռցի թիւ 1 փողոցին վրայ, Հ.Բ.Ը.Մ.ը սեփականատերը դարձաւ 5,500 քառ.մ. տարածութեամբ հոյակերտ շէնքի մը, օժտուած հիւրանոցային արդիական համալիրի լաւագոյն կարելիութիւններով: Հ.Բ.Ը.Մ.-ի Վահէ Կարապետեան երիտասարդական կեդրոնէն ներս, ներկայիս կը հիւրընկալուին «Երեւանի Ամառնային Ասպարեգային Փորձառութեան», «Յայտնաբերէ Հայաստանը», եւ «Երաժշտական Հայաստան» ծրագիրներու մասնակիցները:

2015-ին, տեղի ունեցաւ Վահէ Կարապետեան Կեդրոնի պաշտօնական բացումը, որպէս Հ.Բ.Ը.Մ.-ի երիտասարդական, կրթական եւ մշակութային շարժումներու եւ զանազան ծրագիրներու համալիր եւ ամառնային երիտասարդական ծրագիրներու կեդրոն: Վահէ Կարապետեան Կեդրոնէն ներս նաեւ յատուկ տարածք տրամադրուեցաւ սուրբիահայերու ընկերային ծառայութիւններ ապահովող բարեսիրական կազմակերպութեան, որուն գրասենեակը կը գործէ շէնքի առաջին յարկին վրայ: Այս կազմակերպութիւնը, որ կը հովանաւորուի Սփիւոքի նախարարութեան եւ Հ.Բ.Ը.Մ.ի կողմէ, 2013-էն ի վեր բժշկական, բնակարանային, դրամական, կրթական եւ այլ մարզերու վերաբերեալ օժանդակութիւն կը ցուցաբերէ Հայաստան ապաստանած սուրիահայերուն:



Վահէ
կարապետեան

ԿՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԱՊԱԳԱՅ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՒ ՄՇԱԿՈՒՄ



Հ.Բ.Ը.Ս. Ի ԴՊՐՈՑՆԵՐ

*Արմեն-Քեյլեր Ալեքս Մանուկեան Հարժարան
Մոնթրեալ, Գանատա*

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության կրթական համակարգը կ'ընդգրկե 25 ամենօրեայ եւ միօրեայ դպրոցներ 12 տարբեր երկիրներու մէջ: Այդ դպրոցները կարելոր դեր կատարած են եւ կը շարունակեն կատարել սփիւռքի սերունդներու դաստիարակութեան ուղղութեամբ, ոչ միայն զանոնք օժտելով բարձրագոյն ուսման լաւագոյն հաստատութիւններէ ներս յաջողութեան կարելիութիւններով, այլ անոնց մէջ մշակելով խոր հասկացողութիւն հայ մշակութային ժառանգութեան, հայրենիքի հանդէպ սեր եւ ինքնութեան գիտակցութիւն:

Հակառակ Միջին Արեւելքի մէջ շարունակուող հակամարտութեանց ստեղծած տագնապին եւ անոնց աղիտալի հետեւանքներուն, Հ.Բ.Ը.Ս.ի դպրոցները Սուրիոյ մէջ շարունակեցին իրենց առաքելութիւնը, ծառայելով համայնքին, որ կը պայքարի պահպանելու համար իր գոյութիւնը անորոշ ապագայի եւ առօրեայ արհաւիրքի ծանր պայմաններուն տակ: 2014-ին, Հ.Բ.Ը.Ս.ի Լազար Նաճարեան-Գալուստ Կիլպէնկեան Վարժարանը ունեցաւ 30 շրջանաւարներ, որոնք պետական քննութիւններու մէջ արձանագրած իրենց

փայլուն արդիւնքերով, ճանաչումի արժանացան: Միութեան Լիբանանի եւ Մոնթրեալի դպրոցները հիւրընկալեցին մեծ թիւով սուրիահայ տեղահան պատանիներ:

2014-ին եւ 2015-ին, 484 ուսանողներ շրջանաւարտ եղան միութեան Արժանթինի, Գանատայի, Պարսկաստանի, Լիբանանի, Սուրիոյ, Միացեալ Նահանգներու եւ Ուրուկուէի երկրորդական վարժարաններէն:

Հ.Բ.Ը.Մ.ի Հիւսիսային Ամերիկայի Դպրոցներու Հայ Կրթական Համագումար

2014ին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Հիւսիսային Ամերիկայի դպրոցներու տնօրէններ եւ հայկական նիւթեր դասաւանդող ուսուցիչներ համախմբուեցան Հ.Բ.Ը.Մ.ի Ալէքս եւ Մարի Մանուկեան Զարթոր Դպրոցին մէջ, Սաութֆիլտ Միչիկըն, մասնակցելու համար Հայ կրթութեան նուիրուած համագումարի մը: Մասնակցող դպրոցներն էին Ալէքս Մանուկեան Վարժարան (Մոնթրէալ), Մանուկեան-Տէմիքճեան Վարժարան (Քանոկա Փարք, Քալիֆորնիա), Վաշէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարան (Փասատինա, Քալիֆորնիա) եւ Ալէքս եւ Մարի Մանուկեան Զարթոր Վարժարան (Սաութֆիլտ Միչիկըն): Երկու օրուան համագումարի ընթացքին, տնօրէններ եւ ուսուցիչներ առիթ ունեցան այցելելու եւ մասնակցելու դասարանային աշխատանքներու, փոխանակեցին իրենց տպաւորութիւնները, ցուցմունքները, դասաւանդման ծրագիրները եւ իրենց կողմ օգտագործուած տարբեր միջոցները: Մասնակցողները ներկայացուցին եւ քննարկեցին հայերէն լեզուի, պատմութեան եւ մշակոյթի դասաւանդման վերաբերեալ ծրագրային, բովանդակային եւ մեթոտաբանական խնդիրներ, յատկապէս այդ կապակցութեամբ զարգացող մօտեցումներու հոլովոյթը, համայնքներու եւ սերունդներու փոխտոռ պայմաններուն, կարիքներուն եւ ակնկալութիւններուն լոյսին տակ: Յատկապէս նիւթ ունենալով ծրագիրներու եւ միջոցներու օգտագործելիութիւնը նաեւ ոչ-աւանդական կրթական աշխատանքներու մէջ, ինչպէս արտադպրոցական գործունէութիւններու եւ կամ հանրային դպրոցներու համակարգերէն ներս, հասնելու համար դպրոցական տարիքի պատանիներու լայն շրջանակին: Համագումարը քննարկեց նաեւ կրթական աշխատանքի արդիւնաւորութեան չափանիշեր, կրթական մարզէն ներս Հ.Բ.Ը.Մ.ի տնօրէն նպատակներու իրագործումին ուղղութեամբ: Ուսուցիչներու որակի եւ պատրաստութեան խնդիրներ նոյնպէս խորհրդածութեան նիւթ եղան, այդ կարողութիւնները ձկուն եւ այլ մարզերու մէջ եւս օգտագործելի դարձնելու նկատառումով: Քննարկուեցաւ Ալէքս եւ Մարի Մանուկեան Վարժարանի Զարթոր դպրոցի վերածման գործընթացը, նաեւ Հ.Բ.Ը.Մ.ի Հայկական Համացանցային Համալսարանի միջոցներու օգտագործումը, հայերէն նիւթերու դասաւանդութիւնը հարստացնելու ուղղութեամբ:

ԱԿՆԱՐԿ ՄԸ ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ



24 ամենօրեայ եւ շաբաթօրեայ դպրոցներ
12 երկիրներու մէջ

2014-2015-ին,
484 աշակերտներ
շրջանաւարտ
եղան Հ.Բ.Ը.Մ.ի
Երկրորդական
վարժարաններէն



Զարուհի-Յովակիմեան Վարժարան
Պէրուք, Լիբանան

Հ.Բ.Ը.Մ.ի Դպրոցներու Կեանքէն

Պուէնոս Այրես, Արժանքին

Մարի Մանուկեան Կրթական Հաստատութիւն

2014-ին 29 եւ 2015-ին 20 աւարտական դասարանի աշակերտներ, այցելեցին Հայաստան: Անցնող աւելի քան 33 տարիներուն, 800-է աւելի Մարի Մանուկեան վարժարանի աշակերտներ այս ծրագրով այցելած են հայրենիք: Շաբաթական ուրբաթօրեայ եւ շաբաթօրեայ ընթացիկներու հաստատութիւն, տարիներու ընթացքին, կարելի եղած է հոգալ տարեկան այս շրջապատյոյ ծախսերը: Դպրոցը կը շարունակէ հայ լեզու, պատմութիւն եւ մշակոյթ փոխանցել իր աշակերտներուն, որոնց աւելի քան 85 տոկոսը կու գան երրորդ կամ չորրորդ սերունդի ընտանիքներէ: Կրթական ծրագիրները պատշաճեցնելով Արժանքինայի պետական ծրագրի պահանջներուն, դպրոցէն ներս կարելի եղաւ աւելցնել հայերէն նիւթերու ժամերը, նաեւ մշակութային արտադասարանային գործունէութիւններով հարստացնել ծրագիրը: Հեռահաղորդման միջոցաւ աշակերտները կապ պահեցին Հայաստանի մէջ գործող «Արժանքինի Հանրապետութիւն» Դպրոցի իրենց տարեկից աշակերտներուն հետ փոխադարձաբար բարելաւելով իրենց հայերէն եւ սպաներէն լեզուներով խօսելավարժութիւնը: 2014-ին դպրոցը նշեց իր հիմնադրութեան 40-ամեակը, այդ առթիւ դպրոցին եւ յարակից Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնին մէջ հիւրընկալելով հարիւրատը նախկին շրջանավարտներ, ծնողներ եւ հիւրեր: Հ.Բ.Ը.Մ.ի 97,000 քառ. մ. Տարածութեամբ վեց յարկանի կեդրոնը, կը պարփակէ հաւաքոյթներու սրահներ, թատրոն, գոց մարզադաշտ եւ վեցերորդ յարկին վրայ կէս ողիմպիական

Սիտնի, Աւստրալիա

Հ.Բ.Ը.Մ.ի Ալեքսանտր Նախակրթարան

2015-ին, Հ.Բ.Ը.Մ.ի Սիտնիի Ալեքսանտր Նախակրթարանը գեղարուեստական յայտագրով մը նշեց իր հիմնադրութեան 25-ամեակը, Սիտնիի «Անկախութիւն Թատերասրահ»-ին մէջ, յարգանքի տուրք մատուցանելով դպրոցի բարերարներ Ալեքս

Մոնթրէալ, Գանատա

Արմէն-Քելպէ Ալեքս Մանուկեան Վարժարան

2014-ին, բացումը կատարուեցաւ Հ.Բ.Ը.Մ.ի Մոնթրէալի Ալեքս Մանուկեան Վարժարանի «Մանուկ Քեօսէան» վերանորոգուած արդիական գրադարան-ընթերցասրահին, որու շինարարական ծախսերը ստանձնած էր դպրոցի նախկին շրջանաւարտներէն մին, ի պատիւ իր հանգուցեալ ուսուցչին: Գրադարանը օժտուած է ճարտարագիտական ժամանակակից միջոցներով, որոնք կը յատկանշեն այդ մարզէն ներս դպրոցի առաջատար դիրքը, որով ան ճանչցուած է կրթական համայնքի շրջանակներէն ներս: 2015-ին, Գանատա ապաստան գտած շուրջ 700 սուրբահայ

Պէրոյթ, Լիբանան

Հ.Բ.Ը.Մ.ի Լեւոն Կ. Նազարեան Նախակրթարան, Պօղոս Գ. Կարմիրեան Միջնակարգ Եւ Դարուհի-Յովակիմեան Վարժարաններ

2014-ին, Դարուհի-Յովակիմեան Վարժարանէն 20 աշակերտ աշակերտուհիներ, տարեկան ծրագրով Հայաստան այցելեցին, շրջելով տեսարժան վայրեր եւ Լեւոնային Ղարաբաղ: 2015-ին, Դարուհի-Յովակիմեանի աշակերտները հանդիպեցան Հ.Բ.Ը.Մ.ի Կարպիս Փափազեան մրցանակակիր Եգիպտացի պատմաբան Բիֆաաթ Էլ Իմամի հետ, Հայկական Յեղասպանութեան հարիւրամեակին առիթով: Էլ Իմամ, երկար տարիներ վարած է Եգիպտոսի Հ.Բ.Ը.Մ.ի Արեգ թերթի արաբական բաժնի խմբագրական աշխատանքները եւ հիմնու է Հայկական Յեղասպանութեան պատմութեան: Երկրորդական բաժնի աշակերտներ առիթը ունեցան օր մը ամբողջ հետեւելու արհեստավարժ անձի մը առօրեայ աշխատանքին, գործնական ծանօթութիւն ձեռք բերելով այդ մարզին մասին, իրենց ապագայ ասպարէզներու ընտրութեան ուղղութեամբ: 2014-2015 տարեշրջանին, Հ.Բ.Ը.Մ.ի դպրոցները, Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու Դեսպանատան աջակցութեամբ, մասնակցեցան

չափի լողաւազան: Ձեռնակները կազմակերպուած էին Երիտասարդաց Լիկային կողմէ, որ կազմուած էր դպրոցի նախկին շրջանաւարտներէն: 2015-ի, շրջանաւարտ աշակերտներու խումբը, յատուկ ցուցահանդէս մը կազմակերպեց ներշնչուած Աւորա Հիմնարկի «100 Կեանք» ծրագրէն, որու նպատակն է գնահատել մարդասիրական ծառայութիւններ կատարող անհատներ եւ հաստատութիւններ, որպէս երախտագիտական արտայայտութիւն, Հայկական Յեղասպանութեան զոհերուն եւ վերապրողներուն նկատմամբ ցուցաբերուած մարդկային ազնիւ աջակցութեան: «Հարիւր Պատճառ Ապրելու» խորագրով ծրագրին նպատակն էր իբր երկրորդ լեզու անգլերէն լեզուի վարժութեան առընթեր, աշակերտներուն մօտ մշակել ընկերային-քաղաքացիական գիտակցութիւն: Երկրորդականի երրորդ եւ չորրորդ կարգի 14 աշակերտներ, փոխ-այցելութեան ծրագրի ծիրէն ներս, մեկնեցան Լոս Անճելէս հիւրընկալուելով Մանուկեան-Տեմիրճեան դպրոցին կողմէ, ուր անոնք մասնակցեցան դասընթացներու եւ յատուկ շրջապատյոյններու, սերտ մտերմութիւն հաստատելով աշակերտներուն միջեւ: Մոնթրէալի Ռուբեն Լուպարեան-Մանուկեան Վարժարանի վեցերորդ կարգի 15 աշակերտներ նոյնպէս այցելեցին Մարի Մանուկեան Վարժարան, լրումի հասցնելով տարուան ընթացքին նամակագրութեամբ եւ հեռահաղորդման միջոցներով յառաջ տարած իրենց խմբային աշխատանքները:

Եւ Իգալ Ալեքսանտրի, ինչպէս նաեւ վաստակաւոր կրթական մշակ հանգուցեալ Երուանդ Պապայեանին, որ քաջալեր հանդիսացած էր դպրոցի ստեղծումին:

ընտանիքներու աջակցութեան աշխատանքներու ծիրէն ներս, դպրոցը հիւրընկալեց 50 աշակերտներ, անվճար դրութեամբ, անոնց համար ստեղծելով յատուկ դասարաններ եւ դասընթացք, օգնելու համար տեղական պայմաններուն յարմարելու անոնց կարիքներուն: Սուրիահայ ապաստանեալներու օժանդակութեան նախաձեռնութիւնը, արժանացաւ տեղական եւ միջազգային լայն ճանաչումի եւ գնահատանքի, յատկապէս France 24, Radio Canada եւ Huffington Post լրատուական ցանցերուն, ինչպէս նաեւ Նահանգային Ազգային Ժողովի կրթական նախարարին կողմէ:

կիրարական գիտութեան, ճարտարագիտութեան, թուաբանութեան եւ ճարտարապետութեան նիւթերու (STEM) ակումբին, որ շարք մը յառաջադէմ այլ դպրոցներու մասնակցութեամբ ստեղծուած փորձառական ծրագիր մըն էր: Երրորդ տարին ըլլալով, Հ.Բ.Ը.Մ.ի Լիբանանի դպրոցները հանրութեան ներկայացուցին «Փիւնիկի Սլացքը» խորագրով իրենց գեղարուեստական տարեկան փայլուն յայտագիրը: Նոյնպէս 2015-ին, աշակերտական Շուշի Թատերախումբը, ներկայացուց բանաստեղծ թատերագիր Նուշիկ Միքայելեանի հեղինակութեամբ «Վերադարձ» թատերագրութիւնը: միութեան երեք դպրոցներէն 40 աշակերտներ դեր վերցուցած էին այս բեմադրութեան մէջ, որ նուիրուած էր Յեղասպանութեան հարիւրամեակին: Հ.Բ.Ը.Մ.ի «Շուշի» աշակերտական թատերախումբը հիմնուած է 2011-ին եւ 10-17 տարեկան աշակերտներու մասնակցութեամբ հանդէս կու գայ տարեկան մէկ բեմադրութեամբ:

Հայկ, Սուրիա

Լազար Նազարեան-Գալուստ Կիւլպէնկեան Վարժարան

2014-ին, Հ.Բ.Ը.Մ.ի Լազար Նազարեան-Գալուստ Կիւլպէնկեան Վարժարանի 60-ամեակը նշուեցաւ Հայաստանի մէջ, գեղարուեստական երեկոյով մը, որու յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին վերջերս Հայաստան հաստատուած սուրիահայ համայնքի անդամներ, ինչպէս նաեւ դպրոցի նախկին աշակերտներ որոնք Հայաստանի համալսարաններու

մէջ իրենց ուսումը կը շարունակեն: Յոբելինական երկրորդ ձեռնարկ մը տեղի ունեցաւ նաեւ Լոս Անճելըսի մէջ, 400-է աւելի նախկին շրջանավարտներու մասնակցութեամբ, որոնց շարքին նաեւ Հայաստանի Արտաքին Գործոց Նախկին Նախարար Վարդան Օսկանեան: 2014-ին 42, իսկ 2015-ին 25 աշակերտներ շրջանավարտ եղան դպրոցէն:

Դամասկոս, Սուրիա

Կիւլպէնկեան Նախակրթարան

2015,ին, Հ.Բ.Ը.Մ.ի Կիւլպէնկեան Վարժարանի չորրորդ, հինգերորդ եւ վեցերորդ դասարաններու աշակերտները մասնակցեցան Յեղասպանութեան Հարիւրամեակին նուիրուած միջ-վարժարանային մրցաշարքի


մը, որ կը կր համախմբէր համայնքի չորս հայկական վարժարաններու աշակերտները, անոնց մէջ հայոց պատմութեան հանդէպ հետաքրքրութիւն եւ խնդավառութիւն ստեղծելու նպատակով:

Փանկա Փարք, Միացեալ Նահանգներ

Մանուկեան-Տէմպրճեան Վարժարան

2014-ին, Մանուկեան-Տէմպրճեան Վարժարանը նշեց իր 38-ամեակը: Այդ առթիւ Ծնողական Յանձնախումբը կազմակերպեց յաջող «Կալա» ձեռնարկ մը, ի նպաստ դպրոցի կրթաթոշակներու ֆոնտին, որու հասոյթով նաեւ դպրոցը օժտուեցաւ ձայնային նոր համակարգով: 2015-ին, դպրոցի աշակերտներէն ճան Գայաչանի հայաստան այցելութեան ընթացքին նկարած լուսանկարներու հաւաքածոն «Հայաստան, Ժողովուրդ եւ Կենք» նիւթով, ներկայացուեցաւ Ֆրանքֆուրթի Էնն Ֆրէնք Կրթական Կեդրոնի «Հարիւր Տարի Ուրացում» խորագրով լուսանկարչական ցուցահանդէսին: Երկար տարիներու տնօրէն Յակոբ Յակոբեան հանգստեան կոչուած ըլլալով 2014-2015 տարեշրջանի աւարտին, Արփի Աւանդեան Իտոլոր, Լոս Անճելըսի կրթական մարզէն ներս ուսումնական ծրագիրներու վերաբերեալ իր տարիներու փորձառութեամբ եւ ցուցաբերած վարչական կարողութեամբ, ստանձնեց տպրոցին ղեկավարութիւնը: Հրաշ Մեփեթճեան նշանակուեցաւ Հայագիտական Նիւթերու եւ Ծրագիրներու Վարիչ: 2014-2015 տարեշրջանին, միութեան Ման Ֆէրնանտո Հովիտի մասնաճիւղը, հինգ հազար ամերիկեան տոլարի կրթական մրցանակ մը տրամադրեց դպրոցի չորս աշակերտներու: Տարուան ընթացքին դպրոցի

աշակերտութիւնը իր մասնակցութիւնը բերաւ բարեսիրական շարք մը նախաձեռնութիւններու: Սուրիահայերու Օգնութեան ի նպաստ Լոս Անճելըսի թէլեֆոնին իբր մասնակցութիւն, հանգանակուեցաւ աւելի քան երկու հազար ամերիկեան տոլարի գումար մը, իսկ 2015-ի Հայաստան Համահայկական Հիմնադրամի Թէլեֆոնին, դպրոցը հանգանակեց տասը հազար ամերիկեան տոլար, որ տրամադրուեցաւ Ղարաբաղի մէջ բազմազաւակ ընտնիքներու համար տուներու կառուցման ծրագրին: Դպրոցէն ներս Քաղցկեղի Հիւանդութեան Իրազեկութեան Ակումբի հիմնադիր, շրջանավարտ դասարանի աշակերտուհի Նորա Գալուստեանի նախաձեռնութեամբ, Լոս Անճելըսի Մանուկներու Հիւանդանոցին ի նպաստ հանգանակուեցաւ եօթը հազար չորս հարիւր ամերիկեան տոլար: 11-րդ դասարանի 33 աշակերտներ, ճամբորդեցին Հայաստան, ուր տեսարժան վայրերու իրենց այցելութիւններուն առընթեր, անոնք մասնակցեցան Հայաստանի Ծառատնկումի Ծրագրին: Այցելեցին նաեւ Լեռնագոգգիւղը եւ գիշերեցին Գորիսի մէջ: 11-րդ եւ 12-րդ դասարաններու 14 աշակերտներ, փոխ-այցելութեան ծրագրով, ճամբորդեցին Պունտո Այրէս, տեղւոյն Հ.Բ.Ը.Մ.ի Մարի Մանուկեան Վարժարանի աշակերտներուն եւ ընտանիքներուն կողմէ ջերմ հիւրասիրութեան արժանանալով:





Փաստինա, Միացեալ Նահանգներ

Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարան

2014ին, Դոկտ. Արմինէ Մովսիսեան, ստանձնեց Հ.Բ.Ը.Մ.ի Վաչէ եւ Թամար Մանուկեան Վարժարանի տնօրէնութիւնը: Ան դպրոցի հիմնադրութենէն սկսեալ պաշտօնավարած էր իբր պատմութեան ուսուցչուհի, ստանձնելով նաեւ աշակերտական հարցերու վարչական պատասխանատուութիւնը: Ան իր դոկտորական մասնագիտութիւնը կատարած էր կրթական վարչագիտութեան եւ ուսուցման վերհսկողութեան նիւթերուն մէջ: Արտադասարանային բազմաթիւ գործունէութիւններու շարքին, աշակերտները առիթ ունեցան մօտէն ծանօթանալու Հարաւային Քալիֆորնիոյ Համալսարանի Շոահ Հիմնարկին կողմէ հովանաւորուած Հայկական Ցեղասպանութենէն վերապրողներու վկայութիւններու թուայնացուած արխիւի

ծրագրին, որուն մասին հմուտ ծանօթութիւններ փոխանցեց ծրագրի վարիչ յայտնի Ֆիլմարտադրող Քալա Կարապետեան: 2015-ին, դպրոցի աշակերտութիւնը նախաձեռնեց «Մենք Ենք Յուշարձանները» խորագրով մէկ շաբաթ տեւողութեամբ հայ արուեստի, պատմութեան եւ մշակոյթի նուիրուած ցուցահանդէս մը, նուիրուած Հայկական Ցեղասպանութեան հարիւրամեակին: Ցուցահանդէսը կ'ընդգրկէր աշակերտներու ստեղծագործութիւններով, հնութիւններու կրկնօրինակներով եւ ճարտարապետական գծագրութիւններով եւ վերարտադրութիւններով ներկայացուած 4000 տարուան հայ մշակոյթը:

Մաութֆիլտ, Միացեալ Նահանգներ

Հ.Բ.Ը.Մ.ի Ալէքս եւ Մարի Մանուկեան Զարթոր Վարժարան

2014-ին եւ 2015-ին, Հ.Բ.Ը.Մ.ի Ալէքս եւ Մարի Մանուկեան Զարթոր Վարժարանը, իր ծրագրէն ներս դարձեալ ընդգրկեց շարք մը Գոլէճի Նախապատրաստական ծրագրեր, Գիտութեան, ճարտարարուեստի, թուաբանութեան եւ ճարտարապետութեան (STEM) նիւթերու, Robotics եւ ինքնաշարժ ճարտարագիտութեան (automotive engineering) նիւթերու մէջ: Գործադրուեցաւ նաեւ գիտական նորարար ծրագիր մը, Project Lead the Way ոչ-շահամետ կազմակերպութեան գործակցութեամբ, որ նախաձեռնած է յատուկ ծրագիրներով աշակերտութեան մօտ զարգացնել քննական եւ վերլուծական ձեւերով մտածելու կարողութիւնները, որոնք հետագային կը նպաստեն կեանքի

մէջ յաջողութեան: Այս ծրագրին միջոցաւ ձեռք բերած իրենց կարողութիւնները օգտագործելով, աշակերտները յաջողեցան փայլուն արդիւնքեր սպահովել Lawrence Technological University-ի Robotics-ի մրցուիւններուն մէջ: Առաջին արտադրութիւնը արեւի ջերմութով գործող անհատական ինքնաշարժ մըն էր, իսկ երկրորդը էլեկտրական ինքնաշարժ մը որուն իւրաքանչիւր կտորը պատրաստուած էր խումբին կողմէ: Դպրոցը իր հայերէնի դասընթացներուն իբր լրացուցիչ միջոց կ'օգտագործէ Հայկական Հեռավար Համալսարանի ծրագիրը, դպրոցի եւ ծրագրի ուսուցիչներուն միջեւ համագործակցութեամբ:



Նուպարեան-Մանուկեան Վարժարան
Սօնթվիտեօ, Ուրուկուէ

Սօնթվիտեօ, Ուրուկուէ

Նուպարեան-Մանուկեան Վարժարան

2014-ին Նուպարեան-Մանուկեան Վարժարանը իր 40-ամեակին առիթով գնահատանքի արժանացաւ Սօնթվիտեօի քաղաքապետարանին կողմէ «Լատին Ամերիկայի Մշակոյթի մայրաքաղաք» տօնախմբումի ծիրէն ներս յատուկ յայտագրով: 2015-ին, Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով դպրոցը առաջինը եղաւ գեղարուեստական յայտագիրով մը ներկայանալու հանրութեան, քաղաքի Կալփոն Թատերասրահին մէջ, 800 հանդիսատէսներու ներկայութեամբ: Հայերէն, սպաներէն եւ անգլերէն երգերու եւ պարերու առընթեր, ներկայացուեցաւ նաեւ տեսաներիզ մը, պատրաստուած 6-րդ դասարանի աշակերտներուն կողմէ:

Հ.Բ.Ը.Մ.Ի ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԾԱՆԿ 2014-2015

ԱՐԺԱՆԹԻՆ

Պուէնոս Այրէս - Մարի Մանուկեան Կրթական Հաստատութիւն
(Մանկ. - 12րդ)

ԱԻՍՏՐԱԼԻՍ

Միտնի - Ալէքսանտր Նախակրթարան (Մանկ. - 6րդ)
Ալէքս Մանուկեան Շաբաթօրեայ վրժ.

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Հասքովո - Շաբաթօրեայ Վարժարան
Փլովտիւ - Շաբաթօրեայ Վարժարան

ԳԱՆԱՏԱ

Սօնթրեալ - Ալէքս Մանուկեան Վրժ. (Մանկ. - 8րդ)

ՏՐԱՆՍԱ

Փարիզ - Ալէքս Մանուկեան Շաբաթօրեայ վրժ.
Վիեն - Չորեքշաբթի Միօրեայ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնք - Արթաքի Գալփաքեան Վրժ. (Մանկ. - 6րդ)

ՊԱՐՄԿԱՍՏԱՆ

Թէհրան - Մարի Մանուկեան (9րդ - 12րդ)
Նուարդ Մանուկեան (1րդ - 5րդ)

ԼԻԲԱՆԱՆ

Պէլրուք - Պօղոս Գ. Կարմիրեան (Մանկ. - 9րդ)
Դարուի-Յովակիմեան (7րդ - 12րդ)
Լեւոն Կ. Նազարեան (Մանկ. - 6րդ)

ՍՈՒՐԻՍ

Հալէպ - Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլպէնկեան (Մանկ. - 12րդ)
Դամասկոս - Կիլլապի Կիւլպէնկեան Վրժ. (Մանկ. - 6րդ)

ՈՒՐՈՒԿՈՒԷՅ

Սօնթվիտեօ - Նուպարեան-Մանուկեան Վրժ. (Մանկ. - 12րդ)

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Տիթրոյք - Ալէքս եւ Մարի Մանուկեան Չարթըր Վրժ. (Մանկ. - 12րդ)
Գանուկա Փարք - Մանուկեան-Տէմիրճեան Վրժ. (Մանկ. - 12րդ)
Փասատինա - Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրդ. Վրժ. (9րդ - 12րդ)
Շիքալիօ - Սիսակ Հ. Վարժապետեան Շաբաթօրեայ Վարժարան
Գօսթա Մէզա - Օրէյնճ Քաունթի Շաբաթօրեայ Վարժարան

ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ

Հ.Բ.Ը.Մ.-Ի ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՒՍՄԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ



Դար մը ամբողջ, ՀԲԸՄ-ի Կրթանպաստ Ծրագիրը օժանդակած է հազարաւոր խոստմնալից հայ երիտասարդ համալսարանական ուսանողներու, որոնք իրենց ուսումը ստացած են աշխարհի լուսագոյն համալսարաններու մէջ: 2014-ին եւ 2015-ին, տարեկան 430 ուսանողներ, 40 երկիրներէ, Հ.Բ.Ը.Մ.-ի կրթաթոշակներ ստացան՝ տարեկան շուրջ 1 փոլիոն ամերիկեան տոլար ընդհանուր գումարով:

Այս անհատական կրթաթոշակներուն կից, Հ.Բ.Ը.Մ-ի ութինը 650,000 ամերիկեան տոլար յատկացուց Հայաստանի գանազան կրթական հաստատութիւններու, ինչպէս Հայաստանի Ամերիկեան Համալսարանին, Հայաստանի Ֆրանսական Համալսարանին, Մետրոպ Մաշտոցի անուան Մատենադարանին եւ այլ հաստատութիւններու:

Հ.Բ.Ը.Մ.ի Մասնագիտական Բարձրագոյն Ուսման Կրթաթոշակներ

Այս օժանդակութեան կ'արժանանան Միացեալ Նահանգներու մէջ մասնագիտական ուսման հետեւողները, Մագիստրոսական եւ Դոկտորականի աստիճան ստանալու համար: Մասնագիտութիւնները կ'ընդգրկեն բժշկութեան եւ առողջապահութեան, վարչագիտական, ելեւտական, տնտեսական, իրաւաբանական, միջազգային յարաբերութեանց, հանրային ծրագրումի եւ այլ ճիւղեր: Քոլումպիա, Հարվըրտ, Մասաչուսեց Ճարտարագիտական Հիմնարկ, Նիւ Եորքի Համալսարան, Սթանֆորտի Համալսարան, Գալիֆորնիոյ Համալսարան, Լոս Անձելըս, Գալիֆորնիոյ Համալսարան, Պըրքլի, Միչիկանի Համալսարան, Փէնսիլվանիայի Համալսարան, Եէյլ, մասնակի ցանկը կը կազմեն այն համալսարաններուն ուր կ'ուսանին ուսումնական մրցանակներ ստացող ուսանողները:

Հ.Բ.Ը.Մ.ի Միջազգային Կրթաթոշակներ

Հ.Բ.Ը.Մ.-ի կրթաթոշակներ տրամադրուած են նաեւ արտասահման եւ բարձրագոյն ուսման հետեւող ուսանողներու Միացեալ Նահանգներէն դուրս, վարչագիտութեան, ելեւմուտի, բժշկութեան,

ԱՐԱԳ ԱԿՆԱՐԿ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐՈՒ ՎՐԱՅ



Աւելի քան \$1 միլիոն գումարով կրթաթոշակ տրամադրուեցաւ



Աւելի քան 430 ուսանողներ



Շուրջ 40 երկիրներ

միջազգային յարաբերութեանց, իրաւաբանութեան եւ այլ ճիւղերու մէջ: Համալսարաններէն կարելի է յիշել Պէրյուօթի Ամերիկեան Համալսարանը (Լիբանան), Պողազիչի Համալսարանը (Թուրքիա), Հայկազեան Համալսարանը (Լիբանան), Մըքհիլ Համալսարանը (Գանատա), Օքսֆորտ Համալսարանը (Մեհէչուսեց), Փարիզի Համալսարանը-Սորբոն (Ֆրանսա), Շթուկարտի Համալսարանը, (Գերմանիա), Թորոնթոյի Համալսարանը (Գանատա), Վիեննայի Համալսարանը (Աւստրիա) եւ Լոնտոնի Համալսարան-Գոլէժը (Միացեալ Թագաւորութիւն)

Հ.Բ.Ը.Մ.-ի Կատարողական Արուեստի Կրթաթոշակներ

Տաղանդներու յայտնաբերումին նպաստող այս կրթաթոշակները կը տրամադրուին երաժշտութեան, թատրոնի եւ գեղարուեստի տարբեր մարզերու մէջ մասնագիտացող ուսանողներու, աշխարհի տարածքին: Համալսարաններու շարքին կարելի է նշել, Քիվլենտի երաժշտանոց (ԱՄՆ), Քոլումպիա Համալսարան (ԱՄՆ), Իսթման Երաժշտանոց (ԱՄՆ), Ճուլիըրտ Դպրոց (ԱՄՆ), Պարտ Գոլէճի Լոնկի Երաժշտանոց (ԱՄՆ), Նիու Ինկլընտ Երաժշտանոց ԱՄՆ), Նիւ Եորքի Համալսարան, Թիսչ Արուեստի դպրոց (ԱՄՆ), Արքայական Երաժշտութեան Ակադեմիա (ՄԹ), Սկոլտիոյ Արքայական Երաժշտանոց (ՄԹ), Վիեննայի Երաժշտանոց (Աւստրիա):

Հ.Բ.Ը.Մ.-ի Հոգեւոր Մարզի Պատրաստութեան Կրթաթոշակներ

Այս կրթաթոշակները կը տրամադրուին այն ուսանողներուն, որոնք գլխաւորաբար Միացեալ Նահանգներու մէջ բարձրագոյն ուսման կը հետեւին, կամ կը փափաքին ընդլայնել իրենց գիտութիւնը, աստուածաբանութեան, քրիստոնէական դաստիարակութեան, հովուական ծառայութեան, խորհրդատուութեան եւ երիտասարդներու հոգեւոր կրթութեան ճիւղերուն մէջ: Այս մարզի համալսարաններէն են՝ Գլէրմոնթի Աստուածաբանական Դպրոցը, Փրինսթընի Աստուածաբանական Ճեմարանը, Ս. Ներսէս Ընծայարանը, Սուրբ Վլատիմիր Ուղղափառ Աստուածաբանական Ճեմարանը եւ Գալիֆորնիոյ համալսարանը, Լոս Անճելըս

Հ.Բ.Ը.Մ.-ի Ժառանգութեան Կրթական Մրցանակ

Այս մրցանակը կը տրամադրուի երկրորդականի մէջ գերազանց կատարողութիւն ցուցաբերող աշակերտներու որոնք կը յաճախեն Հ.Բ.Ը.Մ.-ի, Մանուկեան-Տէմիրճեան Վարժարանը Գանոկա Փարք, Քալիֆորնիա. Հ.Բ.Ը.Մ.-ի Ալեք եւ Մարի Մանուկեան Վարժարանը, Մաութիֆիլտ, Միչիկըն, եւ Հ.Բ.Ը.Մ.-ի Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարանը, Փասատենա, Քալիֆորնիա:

Մոյն մրցանակին կրնան տիրանալ պատուոյ յիշատակութեան արժանացած ուսանողներ, իրենց տիպար վարքով եւ դպրոցական կեանքի հարստացումին նպաստող իրենց գործունէութեամբ, ծառայութիւններով եւ ցուցաբերած մարզական ոգիով: Այդ ուսանողներէն շատեր իրենց բարձրագոյն ուսումը շարունակած են կենսաբանութեան, լեզուագիտութեան, երաժշտութեան, հիւանդապահութեան եւ քաղաքական գիտութեանց բնագաւառներուն մէջ, Գալիֆորնիոյ, Սան Տիէկո, Միչիկընի, Անն Արպըր եւ այլ համալսարաններու մէջ:

Հ.Բ.Ը.Մ.ի Բարձրագոյն Ուսման կրթաթոշակներու ծրագիրը կը գործէ 1920-ական թուականներէն սկսած: Այս նպատակով ստեղծուած բազմաթիւ մեծ եւ փոքր հիմնադրամներու հաստիքներով, Միութիւնը օժանդակած է աշխարհի տարբեր քաղաքներու մէջ իրենց բարձրագոյն ուսումը կատարելագործող բազմահազար խոստմնալի ուսանողներու:



Փոլ Մետրոպ Պետրճեան, Նիւ Ճըրզիի Փրինսթընի Աստուածաբանական Ընծայարանի ուսանող, Մագիստրոսի թեկնածու՝ աստուածաբանութեան եւ ընկերային ծառայութեան մասնագիտութիւններու մէջ:



Արմիկ Կայրէկեան, Լիեզի Եօհաննէս ՔէՓլըր Համալսարանի կենսաբանական քիմիագիտութեան ուսանողուհի:



Գլէր Ալեքսանեան, Ուաշինկթըն Տի Մի, Ըօրճթաուն Համալսարանի Բժշկական Բաժնի ուսանողուհի



Վազգէն Օհանեան, Լոնկ Պիչ Քալիֆորնիա, Պետական Համալսարանի ուսանող, Մագիստրոսի թեկնածու, յօրինումի եւ խմբավարութեան ճիւղերու:



Միզի Մարգսեան, Ուաշինկթընի Համալսարանի ուսանողուհի, Դոկտորականի թեկնածու, կիրառական բուսաբանութեան ճիւղի:



Միլա Թէմիզել, Պոլտոյ Պողազիչի Համալսարանի ուսանողուհի, Մագիստրոսի թեկնածու Բնապահպանական Ճարտարապետութեան ճիւղի:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Հ.Բ.Ը.Մ.-ի Ուսումնական
Նորարարության Ծրագիրը,
ճարտարագիտական մարզի
կարելիությունները ի գործ
կը դնե, ուսուցման օժանդակ
միջոցներ ստեղծելու
նպատակով:



Ելեկտրոնային այդ միջոցները իրենց ճկունությամբ, մանուկներու եւ պատանիներու մօտ կը քաջալերեն հայերէն լեզուն, պատմութիւնը եւ մշակոյթը սորվելու հակումը: Հայերէն նիւթերու վերաբերեալ ելեկտրոնային միջոցներ պատրաստելու նպատակով, յատուկ աշխատակազմ մը մասնագէտներու եւ

համապատասխան հիմնարկներու եւ կազմակերպութիւններու հետ գործակցաբար, կ'աշխատի, ուսուցման երկեկտրոնային օժանդակ միջոցներ - ել-գիրքեր եւ առցանց լեզուի դասընթացքներ – պատրաստելու համար:

Հայկական Համացանցային Դասընթացք

Հ.Բ.Ը.Մ.-ի Հայկական Համացանցային Համալսարանը (ՀՀՀ) շարունակեց իր առցանց ուսումնական ծրագիրը: Ել-ուսման միջոցներով, անկախ ժամանակի եւ հեռավորութեան սահմանափակումներէն, համաշխարհային տարածումով, ան կրցաւ հասնիլ տարբեր անհատներու եւ խումբերու, որոնք խանդավառութեամբ հարստացուցին իրենց հայերէն լեզուի եւ մշակոյթի գիտելիքները: Իր հայերէն լեզուի, պատմութեան եւ մշակոյթի հիմնական դասընթացքներուն կողքին, ՀՀՀ-ը ձեռնարկեց յատուկ դասընթացքներու մշակումին: Այդ շարքէն մեծ ընդունելութիւն գտաւ ճատրակ ծրագիրը, որ պատրաստուած էր Հայաստանի ճատրակի Ակադեմիային եւ Հայաստանի ճատրակի Ֆետերասիոնին գործակցութեամբ: Ծրագիրը ցուցադրուեցաւ 2015-ին, Հայաստանի DigiTec Expo-ի ընթացքին եւ գնահատանքի արժանացաւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին կողմէ:




Հայկական Համացանցային Համալսարանի Ել-Գիրքեր

Հայկական Համացանցային Համալսարանը իր մշակած Ելեկտրոնային գիրքերուն միջոցաւ, ճկուն, տեղեկութիւններով ու լրացուցիչ տուեալներով հարուստ աղբիւր մը ստեղծած է, ուր գիտելիքները կը մատուցուին լատենտոգրական հարուստ պարունակի մը մէջ: Թուայնական դարու պահանջներուն համապատասխանող այս գիրքերը կարելի է ձրիաբար ներբեռնել եօթ լեզուներով (Անգլերէն, Արեւմտահայերէն եւ Արեւելահայերէն, Ռուսերէն, Ֆրանսերէն, Սպաներէն եւ Թրքերէն): Այս շարքին առաջինը **Հայկական Բարձրաանդակը**, հրապարակուեցաւ 2014-ին: **Հայկական Բարձրաանդակը** հայոց պատմութեան եւ աշխարհագրութեան ուրուագիծ մը կը ներկայացնէ, հին ժամանակներէն մինչեւ մեր օրերը, մանրամասնելով երկրի ֆիզիքական յատկութիւնները, բնութիւնը, մթնոլորտը, եղանակն ու շրջանի բնական հարստութիւնները: Բնագիրին կ'ընկերանան գունաւոր պատկերներ, ձայնագրեալ բացատրութիւն, վիտէօ շարժանկարներ, եռաչափ լայնածիր տեսարաններ,

հարցարաններ եւ թուայնական քարտէսներ, որոնք ընթացողին կողմէ կը կառավարուին ըստ անոր հայեցողութեան:

2015-ին Հ.Բ.Ը.Մ.-ը հրապարակեց իր երկրորդ թուայնական Ել-գիրքը՝ **«Յայտնաբերէ՛ր Երեւանը, Հայեացք մը Քաղաքի Անցեալին եւ Ներկային Վրայ»** Այս գիրքը կոչուած է պատմական, ընկերային եւ ազգաբանական տեղեկութիւններ փոխանցելու այն ընթացողներուն, որոնք հետաքրքրուած են Երեւան այցելութեամբ, կամ կը փափաքին հարստացնել մայրաքաղաքին վերաբերեալ իրենց գիտելիքները: Գիրքը պատրաստուած է Երեւանի Քաղաքապետութեան հետ համագործակցաբար: Այս թուայնական ուղեցոյցը կը պարփակէ վիտէօներ, քարտէսներ, երեւակայական շրջապտոյտներ, նկարներու ալպոմներ, Եռաչափ եւ լայնածիր նկարներ, հարուստ տեղեկութիւններու շարք մը ներկայացնելով, որոնք կ'նդգրկեն քաղաքի տարբեր վայրեր կատարուած շրջապտոյտներէն մինչեւ մշակութային եւ ընկերային զանազան միջոցառումները:



Համացանցային Հեռասփռուած եւ Պատշաճեցուած Ուսուցում

Ուսուցման Համացանցային հեռասփռուած միջոցառումը, մեծ ընդունելութիւն գտաւ այն շրջանակներուն մօտ, որոնք կը նախընտրեն իենց գիտելիքները ստանալ ճարտարագիտութեան ընձեռած զանազան միջոցներով: Հայաստանի Սփիւռքի նախարարութեան հետ համագործակցաբար Համացանցային Դպրոցի Հեռատեսիլի ծրագիրը առաջին անգամ սփռուեցաւ Հայաստանի Հանրային Հեռատեսիլի Առաջին Ալիքով, 2014-ին: Ծրագիրը կը բաղկանար հայերէն լեզուի դասերէ, գլխաւորաբար անգլիախօս մանուկներու եւ չափահասներու համար: 2015-ին Հեռատեսիլային դպրոցը շարունակեց իր հայերէնի ուսուցման դասերը նոյն ձեւով, ռուսախօսներու համար եւս դասեր ներկայացնելով: Համացանցային դասընթացքի համատեղ հեռարձակումի ծրագիրը ուկնդիրներուն հնարաւորութիւն կու տայ աշխատանքը շարունակել համացանցի վրայ ուսուցիչներուն հետ հաղորդակցութեամբ:

ՀՀՀ-ի Պատշաճեցուած Ծրագիրը

ՀՀՀ-ի պատշաճեցուած ծրագիրը միաձուլումն է ուսուցման ասանդակական եւ էլեկտրոնային մեթոտներուն, որու միջոցաւ ուսուցիչներ իրենց խմբային դասասանդակները կը հարստացնեն հեռացանցային դասանիւթերու օգտագործումով: Այս մեթոտը յաջողապէս օգտագործուած է Հ.Բ.Ը.Մ.-ի թէ՛ այլ վարժարաններու եւ հայկական գաղութներու մէջ, Հարաւային Ամերիկայէն մինչեւ Վրաստան եւ Գանատայէն մինչեւ Ռուսիա, հասնելով 20 դպրոցներու եւ համայնքներու, աշխարհի զանազան կողմերը: Խառն Ուսման Ծրագրի տարբերակ մը նոյնպէս, կ'օգտագործուի Երեւանի Ամառնային Վարժողութեան Ծրագրի մասնակիցներուն հայերէնի գիտելիքները բարելաւելու համար:

2009-ին իր հիմնադրութենէն ասդին, Հայկական Համացանցային Համալսարանը աննախընթաց երեւոյթ մը հանդիսացաւ հայ իրականութենէն ներս, Հայ լեզուի, պատմութեան եւ մշակոյթի առցանց դասընթացքներ տրամադրելով հազարաւորներու, աշխարհի շուրջ, հայագիտական լիարժէք ուսում ստանալու կարելիութիւն տալով անոնց որոնք կը փափաքին, առանց տարիքի, բնակութեան տեղի, կամ զարգացման մակարդակի խտրականութեան:

LEARN ARMENIAN

with

GUS ON THE GO!

EASTERN or WESTERN ARMENIAN

Ուսուցողական Կիրարկումներ

2015-ին, Հ.Բ.Ը.Մ.-ը շրջանառության մեջ դրա էրեք ուսուցողական բջջային կիրարկումներ (Apps), որոնք հայերենի, հայոց պատմության ու մշակույթի մասին գիտելիքներ կը ներկայացնեն smartphon-ներու եւ tablet-ներու վրայ:

Հ.Բ.Ը.Մ.-ը հրապարակեց այլ լեզուներով տարածում գտած **Gus on the Go**-ի հայերեն տարբերակը, բառաշարերու կիրարկումներով (apps): Ծրագիրը իրագործուեցաւ համագործակցութեամբ կիրարկումի ստեղծող Toojuice, LLC-ի հետ. **Gus on the Go** կը քաջալերէ մանուկները սորվելու շարք մը գործածական հայերեն բառեր, հեռաձայնային պաստառի վրայ հպումով գործող բառային դասերով եւ խաղերով: Կիրարկումը կը ներկայացնէ Gus-ի տիպարը, հաճելի եւ ընկերական պատմութեան, կատարուած տեղացի հայ խօսնակներու կողմէ: քարտէսի ուղեկցութեամբ եւ գծանկարային ցուցանիշներով, Gus կը ճամբորդէ Հայաստանի մեջ, այցելելով Գիւմրի, Մարդարապատ, Երեւան եւ Տաթև: Շարժական գծանկարները կը հարստացնեն օգտագործողին փորձառութիւնը, ծանօթացնելով թուանշաններ, գոյներ, ձևեր, ուտելիքներու եւ կենդանիներու վերաբերեալ բառեր, տեսողական եւ լսողական վարժութիւններով:

Իմ Հայաստան-ը ճամբորդական (App) կիրարկում մըն է, որ համացանցային ճամբորդութեամբ երախաները կը տանի շրջապատյոյսի մը, Երեւան եւ անոր շրջակայքը: Դիւրանաւարկելի քարտէսներով եւ գունատր գծանկարներով կը սորվեցնէ երկրի ամենաժողովրդական տեսարժան վայրերը, ներառեալ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Մատենադարան եւ այլն, նաեւ տարրական բառաշար մը, Արեւելահայերէնով:


Հայկական Տօներն ու Աւանդոյթները կիրարկական նիւթը, նախատեսուած թէ հայերու եւ թէ ոչ-հայերու համար, կը ներկայացնէ հաւատքի եւ մշակույթի վերաբերեալ հայկական ավանդութիւններ, ճաշատեսակներու խոհագիրեր, ասացուածքներ եւ այլ նիւթեր, կապուած տարուան ընթացքին 30 ամենաժողովրդային տօնական օրերու:



LANGUAGE MADE EASY & FUN!



Armenian Holidays & Traditions



More than a calendar: Your key to unlocking a year of treasured Armenian heritage with expressions, recipes, customs & more.

ՎԱՐԺՈՂԱԿԱՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՎԱՐԺՈՂԱԿԱՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԱԿԱՆ ԾԱՌԱՅԱՌՈՒԹԻՒՆ, ԱԻԵԼԻ ՓԱՅԼՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԸ Ի ԽՆԴԻՐ

Նիւ Եորքի Ամառնային Վարժողական Ծրագիր (ՆԱՎԾ)

Հ.Բ.Ը.Մ.ի Ասպարեզային Փորձառության կամ Գործավարժության Ամառնային Ծրագիրները, որոնք լայն ժողովրդականություն կը վայելեն, առիթ կ'ընձայեն յառաջադէմ ուսանողներու, որպէսզի անոնք իրենց ընտրած մասնագիտութիւններուն գծով գործնական փորձառութիւն շահին: Այս ծրագրին մասնակցութեամբ ուսանողներու շահած փորձառութիւնը եւ ստեղծած ծանօթութիւնները, անոնց ապագայ արհեստագիտական ասպարեզին մէջ կը դառնան յաջողութեան հիմք եւ յառաջդիմութեան գրաւական:

Գործավարժութեան այս ծրագիրը որ հիմնուած էր Նիւ Եորքի մէջ 1987ին, շուտով հանդիսացաւ հայ ուսանողներու նախընտրած ծրագիրներէն մին եւ ճիւղաւորուեցաւ դէպի Երեւան՝ 2007ին, եւ դէպի Մոսկուա՝ 2010ին: 2003էն սկսեալ, Հ.Բ.Ը.Մ.ը նոյնպիսի զուգահեռ ծրագիրներ կ'իրագործէ նաեւ Ֆրանսայի մէջ (Փարիզ, Կրենոյլ, Լիոն եւ Վալանս), Հայաստանի Ֆրանսական Համալսարանին հետ գործակցաբար, ուսումնական տարուան ամբողջ տևողութեան: 2014-ին, մեծ յաջողութեամբ սկսաւ նաեւ Լոնտոնի ասպարեզային փորձառութեան ծրագիրը:

2014-ին եւ 2015-ին այս ծրագիրը հիւրընկալեց 57 արարտական եւ շրջանաւարտ ուսանողներ Հայաստանէն, Պրագիլէն, Ֆրանսայէն, Լիբանանէն, Ռումանիայէն, Զուիցերիայէն, Սուրիայէն, Թուրքիայէն, Միացեալ Թագաւորութենէն եւ Միացեալ Նահանգներէն:

Մասնակիցները իրենց ամառները անցուցին շահելով աշխատանքային արժէքաւոր փորձառութիւն միաժամանակ շաղուելով շրջանի հայկական համայնքին: Մասնակիցները գործուղուեցան յայտնի ընկերութիւններու մէջ, ինչպէս AXA Խոհրդատուներ, Տեյչ Դանք, Քոլումպիա Բժշկական Կեդրոն, Cushman & Wakefield, Կրէյ Օնոնոնոններ, Մարդկային Իրաւունքներու Դիտակ, Մայքըլ Արամ, Mirrorball, NYU Բժշկական Կեդրոն, եւ Հայաստանի մօտ ՄԱԿ-ի մասյուն Առաքելութիւնը:

1999-էն ի վեր ծրագիրը կը համագործակցի Նիւ Եորք եւ Շրջակայքի Երիտասարդ Արհեստավարժներու Խումբին հետ, որոնք Երիտասարդ Արհեստավարժներու մասնակցութեամբ, ծրագրի մասնակիցներուն գործնական յաւելեալ գիտելիքներ կը փոխանցեն: ԵՄ-ներու 57 անդամներ մասնակցեցան ծրագրին, իմբային կամ անհատական հանդիպումներով, մասնագիտական նիւթերու շուրջ քննարկումներ կատարելու համար:

Ծրագիրը Հիմնուած էր 1987-ին, Ռիթա եւ հանգուցեալ Վարդգէս Պալեաններու կողմէ, Հ.Բ.Ը.Մ.-ի Նախագահական Ակումբին, հովանաւորութեամբ:

Լոնտոնի Ամառնային Վարժողական Ծրագիր

2015-ին սկիզբ առաւ Լոնտոնի Ամառնային Վարժողական Ծրագիրը Արժանթինէն, Պելճիքայէն, Գանատայէն, Ֆրանսայէն, Լիբանանէն, Միացեալ Թագաւորութենէն եւ ԱՄՆ-էն, 13 ուսանողներ հիւրընկալելով Amber Capital, Newscape Capital, White Cube Art Gallery, Wigmore Medical-ի եւ այլ առաջնակարգ հաստատութիւններու եւ ընկերութիւններու մէջ: Իրենց առօրեայ աշխատանքի ժամանակացոյցի կողքին, ուսանողները պտոյտներ կազմակերպեցին դէպի Բրիտանական տեսարժան վայրերը, այցելեցին Google-ի գրասենեակները Լոնտոնի մէջ, ինչպէս նաեւ ներկայ գտնուեցան կալա-ընթրիքի մը ի պատիւ Լարաբադի Հանրապետութեան Նախագահ Բակո Սահակեանի եւ Գուինզպրիի Պարոնուիի Քոքսի: Անոնք նաեւ հանդիպում մը ունեցան Backes & Strauss աղամանդի ընկերութեան տնօրէն Վարդգէս Գնաճեանի հետ, ինչպէս նաեւ այլ յաջողակ արհեստավարժներու, որոնք բաժնեցին իրենց մասնագիտական փորձառութիւնը:

Հ.Բ.Ը.Մ.-ի Երիտասարդ Արհեստավարժներու հանդիպումը Լոնտոնի առաջնակարգ արհեստավարժներու հետ մասնակիցներուն կ'ապահովէ արժէքաւոր հեռանկար մը, ապրելու եւ աշխատելու Եւրոպայի գլխաւոր տնտեսական կեդրոններէն մէկուն մէջ:

Երևանի Ամառնային Փորձառութեան Ծրագիր

2014-ին եւ 2015-ին, 36 ուսանողներ Աւստրալիայէն, Պուկարիայէն, Լիբանանէն, Նոլանտայէն, Ռուսիայէն եւ ԱՄՆ-էն մեկնեցան Հայաստան, իրենց վարժողական ծրագիրը կատարելու հայրենիքի մէջ, ուսուցական, մշակութային եւ ընկերային ձեռնարկներով հարուստ ժամանակացոյցով: Երևանի Ամառնային Փորձառութեան Ծրագրին ուսանողները, որոնք կը մասնագիտանային տեղեկատուական ճարտարագիտութեան, հաղորդակցութեան միջոցներու, կրթութեան, գործարքի եւ ճարտարապետութեան մէջ, գործուղուեցան համապատասխան հաստատութիւններու եւ ընկերութիւններու մօտ, ինչպէս Արաբկիրի Բժշկական Կեդրոն, Հայկական-Բրիտանական Գործարքի Պալատ,

Հայկական Յուշարձաններու Պահպանման Ծրագիր, Պիպլու Պանք, Տիմ Հաղորդակցութեանց կազմակերպութիւն, ICARE, Մէկ Հայաստան Նախաձեռնութիւն, Փարիզ Հիւրանոց, PicsArt, Ստորակէտ Ճարտարապետական Մթուտիօ, Կանանց Աջակցութեան Կեդրոն եւ այլ հաստատութիւններ: 2007-էն ի վեր այս ծրագիրը ուսանողներուն տուած է ժամանակակից համաշխարհային շուկայի մէջ մտնելու պատրաստութիւն, անոնց հայթայթելով միջազգային գործնական փորձառութիւն իրենց ուսանած ասպարէզներուն մէջ, առիթ տալով անոնց, որպէսզի աւելի մօտիկ կապեր հաստատեն իրենց մշակութային ժառանգին հետ եւ ունենան արհեստավարժ ընկերներու ցանց մը Հայաստանի եւ Սփիւռքի մէջ:

ԿՈՐԻՋ

2014-ին Հ.Բ.Ը.Մ.ի ամենամեայ 6րդ ԿՈՐԻՋ համաժողովը համախմբեց 37 հոգինոց երիտասարդ արհեստավարժներու խումբ մը Հայկական, Հրէական եւ Ռոմա համայնքներէն, հինգօրեայ համաժողովի մը համար Թիֆլիսի մէջ, Կրաստան: Այս համաժողովը, համագործակցութեամբ Եւրոպայի Հ.Բ.Ը.Մ.-ին, Փոքրամասնութեանց Հարցերու Եւրոպական Կեդրոնին, Հրեայ Ուսանողներու Եւրոպական Միութեան, Եւրոպական Ռոմա Կազմակերպութեան ցանցին եւ Հայարդտան (Կրաստանի Հայոց Թեմի Առաջնորդարան) եւ օժանդակ ունենալով Էրասմուս+ Եւրոպական Միութեան Ծրագիրը - կեդրոնացաւ փոքրամասնական համայնքներու ինքնութեանց շուրջ

բանակցութեան վրայ: Ժողովը նպատակադրած էր բարձրացնել մասնակիցներու միջեւ գիտակցութեան մակարդակը, այն միջոցներով, որ ինքնութեան ըմբռնումը կարենայ ազդել իրենց նպատակներուն եւ իշխանութեան հետ իրենց կապերուն, օգնելով որ երիտասարդ ղեկավարները գործնական բաժին մը վերցնեն իրենց ինքնութեան ընկալման ուղղութեամբ:

ԿՈՐԻՋ Ղեկավարման Ծրագիրը կը մարզէ երիտասարդ առաջնորդներ, որոնք ակադեմական փայլուն մակարդակ ունին, ներկայացնելու իրենց Հայկական Սփիւռքի գաղութները Եւրոպայի տարածքին:

Յաջորդ Սերունդ

«Յաջորդ Սերունդ» (GenNext) դաստիարակչական Ծրագիրը Հարաւային Գալիֆորնիայիոյ երկրորդական դասարաններու ուսանողներուն համար կ'ապահովէ հոգատար խորհրդատուներ, որոնք կ'օգնեն անոնց, որպէսզի անոնք կարենան դիմակալել իրենց տարեկիցներու ընկերային շրջանակի մարտահրաւերները, յաջողին իրենց դպրոցական աշխատանքներուն մէջ եւ դառնան պատասխանատու եւ ինքնաբաւ չափահասներ:

Հիմնարկին մէջ եւ հանդիպեցան համալսարանի ուսանողներուն եւ դասախօսներուն հետ, տեղեկութիւններ քաղելով դպրոցի ծրագիրներուն եւ նպատակներուն մասին: Այս ձեռնարկներուն նպատակն է ինքնավստահութիւն մշակել ծրագրի մասնակիցներուն մօտ եւ սերտացնել յարաբերութիւնները խորհրդատուներուն հետ:

1997-ի իր մեկնարկէն ի վեր, «Յաջորդ Սերունդ»-ը ծառայած է 12-18 տարեկան բազմահարիւր պատանիներու: Բոլոր կամաւոր դաստիարակները իրենց սաներուն հետ կը հանդիպին նուազագոյն ամիսը անգամ մը, ամրապնդելու համար իրենց կապերը, ինչ որ կ'օգնէ ուսանողներուն որպէսզի դիմակալեն չափահաս տարիքի փորձութիւններն ու դժուարութիւնները եւ ինքնավստահ կերպով վարեն իրենց կեանքը: Դաստիարակութեան, առաջնորդութեան եւ օժանդակութեան միջոցով «Յաջորդ Սերունդ»-ը ուսանողներուն կ'ապահովէ յաջող անցում մը դէպի ընկերութիւն, անոնց մէջ ամրապնդելով ինքնութեան եւ մշակութային ժառանգի գիտակցութիւնը:

2014-ին «Յաջորդ Սերունդ»-ի սաները ներկայ գտնուեցան Հայոց պատմութեան նուիրուած հաւաքի մը, որուն ընթացքին ծանօթացուեցան համբաւի տիրացած հայեր եւ քննարկուեցաւ երիտասարդութեան դերը Հայաստանի ապագայ զարգացման մէջ: Ծրագրի ծիրէն ներս նաեւ կազմակերպուեցան ղեկավարման համագումար մը Կլէնտլիյի Համայնքային Քոլէճին մէջ, եւ «Ասպարէզի Օր» մը Գալիֆորնիոյ Լոս Անձելըսի Համալսարանին մէջ, (UCLA): 2015-ին Յաջորդ Սերունդի անդամները շրջեցան Գալիֆորնիոյ Ճարտարագիտական



ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒ ՎՐԱՅ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆ ՄՂՈՂ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ



ԿԻԶԱԿԷՏ ՇԱԲԱԹԱՎԵՐՁ - ԹՈՐՈՆԹՕ

2015-Յուլիսին, Հ.Բ.Ը.Մ.-ի ԿԻԶԱԿԷՏԸ-ը աշխարհի չորս կողմերն մոտ 500 երիտասարդ արհեստավարժներ հրախորեց Թորոնթո, ուր անոնք միտքեր փոխանակեցին, ընդարձակեցին իրենց ընկերային ցանցերը և ծանօթացան Հ.Բ.Ը.Մ.-ի Կրթական Նորարարության և Օժանդակ Միջոցներու ստեղծման աշխատանքներուն: Կրթական Նորարարության Օրագիրը նախաձեռնություն մըն է, որուն նպատակն է ստեղծել թուայնական ուսուցման կիրարկումներ, միջոցներ և ծրագիրներ: Այս ծրագրին մաս կը կազմեն շահեկան նիւթերու շուրջ համացանցով ներկայացուած կարճ հարցազրոյցներ (WebTalks), ստեղծագործական ճարտարագիտութեան կերտումներ և առցանց ուսուցման ծրագիրներ, որոնք կրնան օժանդակել Ափիլոքի մէջ չայերնի ուսուցումը հետաքրքրական և դիւրահաս դարձնելու ճիգերուն:

Հ.Բ.Ը.Մ.-ի ԿԻԶԱԿԷՏ երկամեայ շաբաթավերջի հանդիպումներու շարքին 8-րդ այս ձեռնարկը, մասնակիցներ համախմբեց 14 երկիրներու 160 քաղաքներէ, Հայաստան, Պեճքիս, Պրագի, Գանատա, Ֆրանսա, Իտալիա, Լիբանան, Մեքսիքա, Նոյանտա, Մեուտական Արաբիա, Շուէտ, Միացեալ Արաբական Էմիրութիւն, Միացեալ Թագաւորութիւն և Միացեալ Նահանգներ: Առաջին անգամ ըլլալով իր քննարկումներու ընթացքին Հ.Բ.Ը.Մ.-ի ԿԻԶԱԿԷՏ-ը ուներ աշխոյժ առցանց ներկայութիւն, ուղղակի հեռահաղորդմամբ: Ընկերային համացանցի միջոցներու օգտագործումով, Դիմատետր, Թուիթթըր և Ինսթալերամի վրայ hashtag #agbafocus խորագրով, շաբաթավերջի ընթացքին, անդամներու մեծ խումբ մըն ալ հեռուն մասնակցեցաւ քննարկումներուն:

Այս առթիւ, Գանատահայ անուանի բեմադրիչ Ադոմ Էլոյեան տեսաերկգային յատուկ պատգամով մը բարի գալուստ մաղթեց Թորոնթո այցելող Երիտասարդ Արհեստավարժներուն, բարձր գնահատելով Հ.Բ.Ը.Մ.-ի, կրթական նախաձեռնությունները:

Երեքշաբթի օրուան «Նեռնկարներ» քննարկումը կերտոնացաւ համաշխարհայնական ըմբռնումով և Հայաստանի իրականութեամբ իմաստաստորուող, հայ ինքնութեան հասկացողութիւնը ձեւաւորելու խնդրին վրայ: Մասնակիցները հրախորեցան պատկերացնելու Հայկական ինքնութիւն մը, որ կը յատկանշուի Հայաստանի և սփիւրջի մէջ իրակացած փայլուն ձեռքբերումներով և ուղղուած է ապագային, ազատ պատմական անցեալ դժբախտություններու և Յեղապահութեան հետեւանքներով պարտադրուած հոգեբանական կաշկանդումներէն: Քննարկման ներկայ էին Ների Արսլանեան, Շոն Բոնկէն, Մարին Չիթիլեան, Գանատալէն, Ալեքսիա Հայէճեան ԱՄՆ-էն և Ռաֆֆի Գասարճեան, Հայաստանէն: Քննարկումի համադրողն էր Արտա Չաքարեան, Թորոնթոյի լրատուական CP24 կայանի լրագրող: Գիշերը տեղի ունեցաւ ծանօթացման համաքայք:

Ուրբաթ առաւօտ, Հ.Բ.Ը.Մ.-ի Երիտասարդ Արհեստավարժները ունեցան իրենց երկամեայ ժողովը, որ առիթ ընծայեց կարծիքներ յայտնելու, գաղափարներ փոխանակելու և քննարկելու տարբեր կազմակերպություններու միջեւ գործակցութեան կարելիութիւններ: ԵՄ-ի 25-է աւելի ղեկավարներ ներկայ գտնուեցան ժողովին: Աւելի ուշ, Taste of Toronto ճաշարանին մէջ խումբը առիթ ունեցաւ համոտնելու բազմատեսակ ուտելիքներ, իսկ երեկոյեան վայելելու Ակումբային Գիշեր մը Maison Mercer-ի մէջ:

Շաբաթ օրուան «Կիզակէտ-Արուեստ» ցուցահանդէսի նիւթն էր, Սքաւոթ Թիւֆէնքճեանի վերջին հրատարակութիւնը՝ “There is only the Earth” («ԴՎերջող Էութիւնը Երկիրն է-Տեսարաններ Հայկական Գաղութներ Օրագրէն»): Թիւֆէնքճեան, որուն Յեղապահութեան 100-ամեակին նուիրուած գիրքը կը փորձէ պատկերացնել ժամանակակից հայ իրականութիւնը Սփիւրջի տարածքին, անձամբ հիւրընկալեց ցուցասրահ այցելող խումբերը, լուսաբանություններ տալով իւրաքանչիւր նկարի մասին:

Հ.Բ.Ը.Մ.-ի ԿԻԶԱԿԷՏ ԿԱՒԱ շքանանդէր Շաբաթ գիշեր, ARD սրահէն ներս համախմբեց մասնակիցները, երիտասարդական շքեղ երեկոյթի մը համար: Խօսակներ Քամիլիօ Ազգուզ, լոնտոնաբնակ երիտասարդ արհեստավարժ, Միլիան Եկուեան ԿԻԶԱԿԷՏ 2015-ի նախագահ և Անի Մանուկեան, Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ, շեշտեցին Երիտասարդ Արհեստավարժներու ազդեցիկ դերի կարեւորութիւնը, հայ համայնքներէն ներս: Հ.Բ.Ը.Մ.-ի ԿԻԶԱԿԷՏ 2015-ը գերազանցեց դրամահաւաքի իր նախորդ չափանիշերը, հանգանակելով 100,000 ամերիկեան տոլար, որպէս օժանդակութիւն Հ.Բ.Ը.Մ.-ի Կրթական Նորարարութեան Օրագրին:

2001-ին, Նիւ Եորքի մէջ իր առաջին մեկնարկէն ի վեր, Հ.Բ.Ը.Մ. ԿԻԶԱԿԷՏ-ը յաջողած է ինքնզինք բնորոշել որպէս իւրայատուկ համախմբում, որու միջոցաւ իրարու հետ կը հաղորդակցին աշխարհի տարբեր կողմերէն 2,500-է աւելի հայ Երիտասարդ Արհեստավարժներ: Շարժումը կազմաւորած էր որպէս ընտանի խաւի մը համար երկամեայ դրութեամբ կազմակերպուող աստիճանական համաքայք մը, որ սակայն տարիներու ընթացքին զարգացաւ, դառնալով համար հեռանկարային նախաձեռնություններ իրականացնող գրաւիչ ու հանրայայտ երկամեայ համագումար մը, որ նպատակային յայտագիրներով կը համախմբէ հարիւրաւոր Երիտասարդ Արհեստավարժներ, կը աստարէ ընկերային կապերու և մտերմութիւններու ստեղծման, նաեւ առիթ կը հանդիսանայ Հ.Բ.Ը.Մ.ի արհեստագործութեան գործունէութեամբ խանդավառելու և մասնակից դարձնելու երիտասարդ սերունդը: Անցնող 14 տարիներուն, իր երկամեայ հաւաքներու ընթացքին, շարժումը հանգանակած է 430,000 ամերիկեան տոլար: Թորոնթոյի Հ.Բ.Ը.Մ. ԿԻԶԱԿԷՏ-ին նախորդած են նման հաւաքներ վեց տարբեր քաղաքներու մէջ, Նիւ Եորք (2001, 2007), Մոնթրէալ (2003), Մայամի (2005), Շիքաօ (2009), Փարիզ (2011), և Ման Ֆրանսիսքո (2013):



Հ.Բ.Ը.Մ.ի Պատվոհանքի և Չրջակայքի Երիտասարդ Արհեստավարժներու խումբի «Լուռ Աճուրդի ձեռնարկ-հիւրասիրութիւն»-ը, ի նպաստ Միութեան Մարդասիրական Արտակարգ Օգնութեան Հիմնադրամին, որու միջոցաւ գոյացաւ \$21,000-ի գումար մը:

AGBU YOUNG PROFESSIONALS

Հ.Բ.Ը.Մ.իութեան Երիտասարդ Արհեստավարժներու շարժումը համաշխարհային ընդգրկում ունեցող երիտասարդական ընդլայնող ցանց մըն է, որ կը ծառայէ հայ ինքնութիւնն ու ժառանգութիւնը պահպանելու եւ զարգացնելու առաքելութեան: Շարժումի նպատակն է Ոգեշնչել 22-40 տարեկան երիտասարդներ՝ զանոնք մղելով գործոն մասնակցութիւն բերելու Միութեան նպատակներուն ուղղուած աշխատանքներուն: Ենթահիւ իր ազատ անդամակցութեան, արհեստավարժ բնոյթին եւ թափանցիկ գործունէութեան, այս ցանցը ճանչցուած է աշխարհի տարածքին, իբրեւ պատկանելիութեան գիտակցութիւն սերմանող եւ խրախուսող կազմակերպութիւն: 2014 եւ 2015 տարիներուն, շարժումը հանրութեան ի նպաստ կարեւոր նախաձեռնութիւններ իրագործեց:

- 300-է աւելի կրթական, մշակութային, ընկերային եւ դրամահաւաքի ձեռնարկներու մասնակից դարձուց 20,000 ԵԱ-ներ: Խմբաւորումին նախաձեռնութեամբ իրականացուած ձեռնարկները, կը կազմեն Հ.Բ.Ը.Մ.-ի ընդհանուր ձեռնարկներուն մօտաւորապէս մէկ երրորդը:
- 71,000 ամերիկեան տղար գումարով մասնակցեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի օգնութեան ճիգերուն, որոնց շարքին՝ Հ.Բ.Ը.Մ.-ի Իրաքահայութեան եւ Սուրիահայութեան Մարդասիրական Շտապ Օգնութեան Հիմնադրամներուն, Հ.Բ.Ը.Մ.-ի Տարեցներու Ճաշարաններուն, Հ.Բ.Ը.Մ.-ի Հայորդեայց Կեդրոններուն, Նիւ Եորքի Ամառնային Վարժողական Ծրագրին, Նուպար Ճամբարին եւ Հայաստանի Ամերիկեան Համալսարանի Գրադարանին համար թուայնական արխիւներու ձեռքբերումին:
- Իրարու հաղորդ պահեց աշխարհի ԵԱ խումբերը, տեղական, շրջանային եւ համաշխարհային ծրագիրներով, նաեւ գործակցեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի մասնաճիւղերուն, դպրոցներուն եւ ծրագիրներուն հետ, իրականացնելու համար մշակութային եւ մարդասիրական միջոցառումներ:
- Պարբերաբար, կարեւոր նախաձեռնութիւններ իրականացնելու նպատակով, Երիտասարդ Արհեստավարժներու Խմբաւորումը գործակցեցաւ հայկական եւ ոչ-հայկական այլ կազմակերպութիւններու հետ:



Պուէնս Այրէսի «Երիտասարդ Արհեստավարժ»ներու արհեստավարժութեան մշակման իրաւագումարը, 9 Հոկտեմբեր 2014:

Աջակցութիւն Հ.Բ.Ը.Մ.-ի Կարիքաւոր Շրջաններու Ընձեռած Օգնութեան Աշխատանքներուն

Սուրիոյ շարունակուող տագնապի աւերիչ հետեանքները դիմագաւելու ճիգին ի նպաստ, ԵԱ խումբերը յանձնառու եղան օժանդակելու Հ.Բ.Ը.Մ.-ի Սուրիահայերու Մարդասիրական Շտապ Օգնութեան Հիմնադրամին, դրամահաւաքի միջոցառումներով: 2014-ին եւ 2015-ին, Հ.Բ.Ը.Մ.-ի ԵԱ խումբերը 36,000 ամերիկեան տոլար նուիրաբերեցին Սուրիահայութեան օգնութեան: Մեծագոյն Նիւ Եորքի ԵԱ-ները իրենց տարեկան Լուր Աճուրդէն եւ բոթթելի հաւաքոյթէն գոյացած գումարները նոյնպէս նուիրեցին Սուրիահայութեան: Հիւսիսային Գալիֆորնիոյ ԵԱ-երը իրենց Սան Ֆրանսիսքոյի Ձմեռնային Գալաի շահոյթէն 2014 – 2015-ին եւ իրենց Տարեկան Առաջին Երգիծանքի Երեկոյէն, Օքլէնտի մէջ 2015-ին, բաժին մը տրամադրեցին Սուրիահայութեան: Դրամահաւաքի ձեռնարկներ կազմակերպեցին Աթէնքի, Աւստրիայի, Պոսթընի, Լոնտոնի եւ Թորոնթոյի Երիտասարդ Արհեստավարժներու խումբերը:

ԵԱ-ներու խումբերը նոյնանման հանգանակութիւններ կատարեցին այլ անհրաժեշտ նպատակներու համար: Լիբանանի մէջ, Պէլոսի ԵԱ-երը հանգանակութիւն կատարեցին տեղւոյն Հ.Բ.Ը.Մ.-ի դպրոցներուն համար: 2015-ին Աթէնքի ԵԱ-ները Կոմիտասի երաժշտութեան համերգ մը կազմակերպեցին նուիրուած Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակին, որուն ներկայ եղան 300 ունկնդիրներ: ԿԻՉԱԿԵՏ 2015-ի ձեռնարկով, ԵԱ խումբերը օժանդակեցին Հ.Բ.Ը.Մ.-ի Կրթական Նորարարութեան Ծրագրին:

Արհեստավարժական Կազմաւորում Եւ Փորձառական Խորհրդատուութիւն

Երիտասարդ Արհեստավարժներու (ԵԱ) ցանցին նպատակներէն է աջակցութիւն ցուցաբերել, որպէսզի երիտասարդներ արհեստավարժութիւն եւ հմտութեան ձեռք բերեն, կապեր հաստատեն իրենց սերնդակիցներուն հետ եւ յաջողութիւն գտնեն իրենց գործի սպարէզին մէջ: 2014-ին եւ 2015-ին ԵԱ-ներու խումբեր, դաստիարակչական ձեռնարկներ կազմակերպեցին իրենց համայնքներուն մէջ, նիւթ ունենալով ձեռնարկատիրութեան, նորարարութեան, տեղեկատուութեան, ճարտարագիտութեան, դրամատնային գիտութեան, ֆինանսի եւ ստեղծագործական ճարտարարուեստի մարզերը: Միջոցառումներու շարքին էին Պուէնս Այրէսի ԵԱ-ներու համագումարը, Լոնտոնի ԵԱ-ներու հանդիպման ձեռնարկները, Սան Փաուլոյի ԵԱ-ներու LinkedIn-ի Լատին Ամերիկայի գրասենեակներ այցելութիւնը: Լոս Անճելէսի ԵԱ-երու դասախօսական շարքը, Լիօն Ռոն-Ալփի «Ձեռնարկատիրութիւնը Հայաստանի Մէջ» համագումարը եւ մասնակցութիւն տեղական մշակոյթը, ձեռնարկատիրութիւնը եւ տնտեսութիւնը յարաբերուող միջոցառումները յարաբերուող միջոցառումները: ԵԱ-ներու նորակազմ խումբերը, Պէլճիքայի (Պրիւքսէլ), Հոլանտայի (Ամսթերտամ) եւ Չեխիոյի մէջ (Շնէլ) նոյնպէս, կազմակերպեցին արհեստավարժութեան զարգացումի եւ հանրութեան առջեւ խօսելու վարժութեան ձեռնարկներ, նպատակ ունենալով միտքերու փոխանակման առիթ ստեղծել եւ տեղւոյն հայերը կապել ցանցին : Մեծագոյն Նիւ Եորքի ԵԱ-ները դաստիարակչական ծրագիրներով աջակցեցան Հ.Բ.Ը.Մ.-ի Նիւ Եորքի Կարծողական Ամառնային Ծրագրին:

2014-2015 Երիտասարդ Արհեստավարժներ Եւ Գործակից Նուիրատուներ

- Աթէնքի ԵԱ
- Աւստրիայի ԵԱ
- Պոսթընի ԵԱ
- Պրագիլի ԵԱ
- Պուէնս Այրէսի ԵԱ
- Շիքակոյի ԵԱ
- Մեծն Նիւ Եորքի ԵԱ
- Լիբանանի ԵԱ
- Լոս Անճելէսի ԵԱ
- Մոնթրէալի ԵԱ
- Հիւսիսային Գալիֆորնիայի ԵԱ
- Ֆիլատելֆիայի ԵԱ
- Թեհրանի ԵԱ
- Թորոնթոյի ԵԱ
- Ուաշինկթոնի ԵԱ
- ՀԱՅՔ Կազմակերպութիւն (Ֆրանսֆուրտ, Գերմանիա)

2014-2015 Երիտասարդ Արհեստավարժներու Նուիրատուութիւններ

- Հ.Բ.Ը.Մ Նուպար Ճամբար • Հ.Բ.Ը.Մ. Հայորդեայց Տուներ, Հայաստան
- Հ.Բ.Ը.Մ. Կրթական Նորարարութիւն • Հ.Բ.Ը.Մ. Իրաքահայութեան Մարդասիրական Շտապ Օգնութիւն Հիմնադրամ • Հ.Բ.Ը.Մ. Սուրիահայութեան Մարդասիրական Շտապ Օգնութիւն Հիմնադրամ • Հ.Բ.Ը.Մ.ի Լիբանանի Կարծարաններ • Հ.Բ.Ը.Մ.ի Նիւ Եորքի Ամառնային Ասպարեզային Փորձառութեան Ծրագիր • Հ.Բ.Ը.Մ.ի Տարեցներու Ճաշարաններ • Հայաստանի Ամերիկեան Համալսարան



Աւստրալիայի Երիտասարդ Արհեստավարժներու այցը Ուաշատ Նոյիս, 29 Մայիս 2014:



Նոր Գարույնայի Երիտասարդ Արհեստավարժներու «Միշտ Գրի Մայրամուտի Լեռնազննություն» ձեռնարկը, 16 Օգոստոս 2015



3 չոկետներ 2015-ին, Ամսթերտալի Երիտասարդ Արհեստավարժները կազմակերպեցին @ SpeakUp խորացրով ձեռնարկ մը, որու ընթացքին ներկայացուցաւ վեց հայերու կեանքի ողիսականը:

- ԵԳՐԱՆՏԵԿՆԻԿԱՆՆԵՐ**
- ԱՐԺԱՆԹԻՆ**
Պուէնտո Այրէս - Իկնասիո Պալասանէան
 - ՀԱՅԱՍՏԱՆ**
Երեան - Յարութին Պօղոսեան (2014)
 - ԱԲՍՏՐԻԱ**
Վիէննա - Կարուշ Ղազէլեան
 - ՊԵՆՃԻՔԱ**
Պրիսկէ - Կորին Խաչատուրեան (2014)
Աննա Թամիրեան (2015)
 - ՊՐԱՋԻԼ**
Սան Փաուլօ - Արամ Արովեան
 - ՊՈՒԼԿԱՐԻԱ**
Փլովտիւ - Հայկ Կարապետեան, Նորա Ռատոսլավովա
Սոֆիա - Սեդա Զատիկեան
 - ԳԱՆԱՏԱ**
Մոնթրէալ - Մարալ Գասեմճեան (2014)
Շան Արքոյեան (2015)
Թորոնթօ - Միհրան Եկաւեան
 - ՖՐԱՆՍԱ**
Լիոն Ռոն-Ալփ - Վիգեն Քոճաքեան
Մարսէլլ - Մարալ Հէքիմեան
Փարիզ - Փոլ Տէր Յակոբեան
 - ԳԵՐՄԱՆԻԱ**
Համպուրկ - Արմէն Շամլայեան
 - ՅՈՒՆԱՍՏԱՆ**
Աթէնք - Սեդրակ Ապասեան
 - ԻՐԱՆ**
Թեհրան - Մարիա Ղազարեանց
 - ԼԻԲԱՆԱՆ**
Պէյրուս - Մարին Քարաճրքեան
 - ՀՈՒԱՏՏԱ**
Ամսթերտամ - Վահագ Աւագեան
 - ԶՈՒԻՅԵՐԻԱ**
Շըննէ - Ռուբինա Եագուպեան
 - ՄԻԱՑԵԱԼ ԱՐԱՐԱՄԱՆ ԷՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ**
Տուպայ - Մոսին Քուլաքուգեան
 - ՄԻԱՑԵԱԼ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԻՒՆ**
Լոնտոն - Անժելինա Նաճարեան
 - ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ**
Պոսթոն - Ժիւսթին Տրապիսի
Շիրակօ - Սուգան Զոլաքեան (2014)
Սամանթա Սիմոնեան (2015)
Մեծն Նիւ Եորք - Լինստէլ Յակոբեան (2014)
Ուիլիըմ Նազարեան (2015)
Լոս Անճելըս - Թալին Կիւրբեքեան (2014)
Անի Թորոսեան (2015)
Ֆիլատէլֆիա - Արմենա Պալլարտ (2014)
Սարա Սելվերեան (2015)
Հիւսիսային Գալիֆորնիա - Դաւիթ Օճախեան
Ուաշինկթօն Տի. Մի. - Արամ Վերտիեան (2014)
Յակոբ Ստեփանեան (2015)

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌՕՐԵԱՅ



Մոֆիայի Հ.Բ.Ը.Մ.-ի Մենեկային Նուագախումբի ելույթը, ի յիշատակ Հայկական Ցեղասպանության զոհերուն, 19 Մայիսի 2015: Լուսանկար Ըաֆֆի Իրեճեանի

ԵՐԳՉԱԽՄԲԱՅԻՆ ԵՒ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐ

Հ.Բ.Ը.Մ.-ի Լոնտոնի Մենեկային Նուագախումբ

Հ.Բ.Ը.Մ.-ի Լոնտոնի Մենեկային Նուագախումբը հիմնուած է 2014-ին, Գեղարուեստական ղեկավար Մարգիս Զաքարեանի կողմէ: Նուագախումբին մաս կը կազմեն անգլիաբնակ 15 տաղանդաւոր հայ եւ ոչ-հայ երաժիշտներ: Նուագախումբի անդրանիկ ելույթը, որ կ'ընդգրկէր հայկական եւ եւրոպական երաժշտական կտորներու շարքին նաեւ յատուկ յօրինում մը մշակուած

Հայաստանի Ազգային Օրհներգին հետեւողութեամբ, դիմաւորուեցաւ յոտնկայս ծափահարութիւններով: 2015-ին, նուագախումբը յատուկ համերգ մը ներկայացուց, նուիրուած Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակին, Ճօն Մմիթի հրապարակին վրայ, Լոնտոն, ղեկավարութեամբ Կիւսթավօ Ուպետաի: Համերգի խորագին էր՝ «Միասին Հայաստանի Համար»:

Հալէայի Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.ի Սպենդիարեան Երգչախումբ եւ Կոմիտաս Մենեկային Նուագախումբ

2014-ին, հակառակ Հալէայի ամենօրեայ պատերազմական վիճակին, 24 հոգինոց Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.ի Սպենդիարեան Երգչախումբը տօնեց իր հիմնադրութեան 60-ամեակը, սիրուած երգերու համերգով մը: Հանդիսութիւնը սկսաւ ներկայացնելով երգչախումբի պատմութիւնը, որուն ընթացքին գնահատանքի արժանացան երգչախումբի վերելքին իրենց նպաստը բերած նուիրեալ ղեկավարները:

Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի Կոմիտաս Մենեկային Նուագախումբը նաեւ համերգ մը տուաւ, ներկայացնելով կտորներ Կոմիտասէն, Մոցարտէն, Եամատայէն, Մելիքեանէն, Սթամիցէն, Խաչատուրեանէն, Վիվալտիէն, Պրամսէն եւ Շոսթաքովիչէն: Նուագախումբի ամէն մէկ կատարող մասնակցած է 2014-ի Հ.Բ.Ը.Մ.-ի Երաժշտական Հայաստան Ծրագրին Երեսնի մէջ: Կոմիտաս Մենեկային Նուագախումբը հիմնուած է 2006-ին եւ կազմուած է 24 երաժիշտներէ:

Ծիածան Մանկական Երգչախումբ (Գահիրէ)

2014-ին Գահիրէի 35 հոգինոց Ծիածան Երգչախումբը տօնեց իր հիմնադրութեան 10-րդ տարեդարձը, երաժշտական, երգ ու պարով համեմուած ուրախ ներկայացումով մը, «Քաջ Նազարի Նոր Արկածախնդրութիւնները» խորագրով, Յովի. Թումանեանի համանուն հեքիաթի հիման վրայ: 2015-ին Ծիածան Մանկական

Երգչախումբը տօնեց հերոս Զօրավար Անդրանիկի ծննդեան 150-ամեակը համերգով մը, 25 հոգինոց երգչախումբով, գեղարուեստական ղեկավար ունենալով Միհրան Ղազէլեանը եւ խմբավարութեամբ Տիկ. Գոհար Ղազէլեանի:

Կոունկ Բազմաձայն Երգչախումբ (Մոնթելիսիո)

2014-ին, Կոունկ Բազմաձայն Երգչախումբը մասնակցեցաւ «Քեսապի Համար» խորագրով երգի ու պարի փառատօնի մը: Ձեռնարկէն գոյացած նուիրատուութիւնները տրամադրուեցան սուրիահայ ընտանիքներու, որոնք պարտադիր հեռացած էին Քեսապէն 2014-ի զարնան: 2015-ին Կոունկ Բազմաձայն Երգչախումբը համերգ մը ներկայացուց Մոնթելիսիոյ մէջ, ի յիշատակ Հայոց Յեղասպանութեան Հարիւրամեակին, Մաթիաս Կրասիուի մասնակցութեամբ, որպէս հիւր ջութակահար: Ուրուկուէի Կրթութեան եւ Մշակոյթի Նախարարը իր խօսքին մէջ նշած է, թէ այս համերգը երկրին համար «Մշակութային ներդրում մը կը հանդիսանայ»: Կոունկ Բազմաձայն Երգչախումբը ունի 35 անդամներ, Մաեսթրօ Ալվարօ Յակոբեանի ղեկավարութեամբ, որ շրջանավարտ է Հ.Բ.Ը.Մ-ի Նուպարեան-Մանուկեան վարժարանէն:

Գողթան Երգչախումբ (Փարիզ)

2014-ին Գողթան Երգչախումբը համերգ մը տուաւ, Լիբսեմպորկի Բողոքական Եկեղեցույ մէջ, Փարիզ, 23 երգիչներու մասնակցութեամբ: Յայտագիրը կազմուած էր 16 հայկական ժողովրդական երգերէ եւ հոգեւոր օրհներգներէ: Համերգի ընթացքին, երգչախումբի հիմնադիր եւ ղեկավար Հայկ Սարգիսեան խօսեցաւ հայկական մշակոյթին մէջ երաժշտութեան դերին մասին: Երգչախումբը հրաւիրուեցաւ ֆրանսացի խմբավար Պերնար Լալլեմանի կողմէ իր Vox Sirenis նուագախումբին ընկերակցութեամբ, ելոյթ ունենալու համար Օնդեան համերգով մը Փարիզի մէջ: Լալլեման, որ հեղինակն է նշանաւոր Լատինական Պատարագէն ներշնչուած Missa Gallica-ին, նաեւ հիմնադիրն է եւ պատուոյ նախագահը եղած է Ֆրանքօ-Գերմանական Երգչախումբին: 35 արուեստագետներէ բաղկացած խումբով, Գողթան Երգչախումբը ներկայացուց իննը համերգներ 2014-ին եւ 2015-ին Փարիզի, Թուրսի եւ Շինոնի մէջ: Համոյթը հիմնուած է 1992-ին, Ֆրանսայի մէջ հայկական երաժշտութիւնը եւ մշակոյթը տարածելու նպատակով:

Սոֆիայի Սենեկային Նուագախումբը

2014-ին Սոֆիայի Սենեկային Նուագախումբը իր ութերորդ Եղանակի բացումը կատարեց «Գարնանայսին Երագներ» յայտագրով մը, քաղաքի Փանչօ Վլատիկերով Երաժշտութեան Ազգային Ակադեմիային մէջ խմբավարութեամբ Մաեսթրօ Պետրոս Փափագեանի, մեծ ընդունելութեան արժանանալով: Նուագախումբին յայտագիրը կազմուած էր հայկական երգերու, արեւմտեան դասական երաժշտութեան եւ ժամանակակից բանաստեղծութեան միահիւստմով: Այլ համերգի մը ընթացքին, նուագախումբը յարգանքի տուրք մատուցեց Փէյօ Եւարովին, որ օգտակար հանդիսացած էր Օսմանեան Թուրքիոյ հայութեան: Համերգի ընթացքին, ներկայացուցաւ Եւարովի կենսագրութիւնը, շեշտելով անոր կարեւորութիւնը, որպէս գրականութեան մարդ, ինչպէս նաեւ ընթերցուեցաւ անոր բանաստեղծութիւններէն մին հայ ժողովուրդի մասին, զորս հայերէնի թարգմանած էր 20-րդ դարու անուանի բանաստեղծ Գէորգ Էմին: Սոֆիայի Սենեկային Նուագախումբը Պուլկարիոյ մայրաքաղաքին մէջ, Երոպայի Երաժշտական Փառատօնին, այլ ելոյթով մը կտորներ ներկայացուց Մենելսոնէն, Մոցարտէն եւ Սպորտ Փիացոլլային: նուագախումբը մէկ տարուան ընթացքին, վեց ելոյթներով հանդէս եկաւ: 2015-ին, Սոֆիայի Սենեկային Նուագախումբը ներկայացուց ութը համերգ, որոնցմէ մին նուիրուած էր Հայոց Յեղասպանութեան Հարիւրամեակին: Համերգի յայտագրին մաս կը կազմէին գործեր Եւարովէն, Էտուարտ Միրզոյեանէն եւ Կոմիտասէն: Հայաստանէն Երեք հիւր պատանի նուագողներ մասնակցեցան տուտուկով, քանոնով եւ ուտով: Յունիսին նուագախումբը մասնակցեցաւ Երոպայի Երաժշտական Փառատօնին, ելոյթ ունենալով Սերպիայի Պէթանկօ Երաժշտական համոյթին հետ: Նուագախումբին կատարումները Հարաւ-Ամերիկեան շունչ մը ունէին, Արժանթինեան թանկաներու երաժշտութեամբ: Սոֆիայի Սենեկային Նուագախումբը հիմնուած է 2006-ին Հ.Բ.Ը.Մ-ի հիմնադրութեան Հարիւրամեակին առթիւ:



Լոնտոնի Հ.Բ.Ը.Մ-ի Սենեկային Նուագախումբի եղանակի բացման ելոյթը: Լուսանկար Ըաֆֆի Իւրեճեանի



Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը. Անդրանիկ Պարախումբի ելույթը Հալեպի մեջ 2015ին:

ՊԱՐԱԽՈՒՄԲԵՐ

Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը. Հայկական Պարային Համոյթ – Անդրանիկ Պարախումբ (Հալեպ)

2015-ին իր հիմնադրության 10-ամեակին, Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը-ի Պարային Համոյթը երկու ելույթներ ունեցավ, յոյս ներշնչելով, Սուրիոյ մեջ շարունակուող քաղաքացիական պատերազմի ծանր պայմաններում տակ: Պարախումբը ներկայացուց վալեր, արաբական եւ վրացական պարեր, ինչպէս նաեւ հայկական ազգագրական պարեր, մեծ թիով հանդիսատեսներու առջեւ: Խումբին կը մասնակցէին 10 պատանիներ եւ 18 պարմանուհիներ:

Արին Պարախումբ (Պէրուք)

2014-ին Արին Պարախումբի պատանիներու բաժինը ներկայացուց իր առաջին անհատական ելույթը, հոծ բազմութեան մը առջեւ, Պէրուքի Լա Սաժէս դպրոցի յայտնի հանդիսասրահին մէջ: Յայտագիրը կ'ընդգրկէր հայկական եւ լիբանանեան ազգային պարեղանակներ: Հ.Ե.Ը.-ի Արին Պարախումբը նաեւ այցելեց Հայաստան, երկրորդ տարին ըլլալով մասնակցելու «Իմ Հայաստան» երրորդ մշակութային փառատօնին, հովանաւորութեամբ Հայաստանի Սփիւռքի նախարարութեան: Պարողներու եւ վարչական պատասխանատուներու 48 հոգիւնց պատուիրակութիւնը հիւրընկալուեցաւ մէկ շաբաթով, որու ընթացքին խումբը չորս ելույթներ ունեցաւ Երեւանի, Օշականի, Ծաղկաձորի եւ Վանաձորի մէջ: Արին Պարախումբը կազմուած է 160 պատանի եւ երիտասարդ պարողներէ:

Հ.Ե.Ը.-ի Սան Ֆերնանտո Հովիտի Պարախումբ (Քանոկա Փարք, Գալիֆորնիա)

2014-ին 55 պարողներ հայկական մշակույթը կենդանացուցին պարախումբի տարեկան երկրորդ ելույթի ընթացքին: Պարախումբը 2015-ին ալ ներկայացուց իր տարեկան ելույթը, 40 պարողներով:



ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՐՈՒԵՄՏՆԵՐ

Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբի տարեկան համոյթը ի նպատակով Հ.Բ.Ը.Մ.ի Կատարողական Արուեստներու Ծրագիրներուն, գոյացուց \$50,000-ի գումար մը:

Հ.Բ.Ը.Մ. ի Կատարողական Արուեստներու Բաժինը, հիմնուած 2012-ին, կը մշակէ եւ կը հովանաւորէ միութեան մշակութային եւ արուեստի ծրագիրները: Ան կ'աշխատի յայտնաբերել աշխարհի տարածքին գտնուող հայագի երիտասարդ արուեստագէտները եւ զանոնք հաղորդակից պահել իրարմ, նաեւ հայ մշակոյթը եւ արուեստը ծանօթացնել լայն շրջանակներու: Կատարողական Արուեստներու Բաժինն կողմէ իրագործուած նախաձեռնութիւններու շարքին յատկանշական էին Սայեաթ Լովա Միջազգային Երաժշտահանութեան Մրցոյթը, որ սկիզբ առած էր միութեան Ֆրանսայի շրջանակին կողմէ, Երաժշտական Հայաստան Ծրագիրը, ինչպէս նաեւ երիտասարդ արուեստագէտներու մասնակցութեամբ ելոյթներու շարք մը, տարբեր երկիրներու մէջ:

«Երաժշտական Հայաստան» Ծրագիրը

«Երաժշտական Հայաստան» Ծրագիրը կը շարունակէ իր գործունէութիւնը, առիթ տալով որ երիտասարդ հայ եւ ոչ-հայ երաժիշտներ իրենց արուեստի ձիրքերը եւ հմտութիւնը զարգացնեն Հայաստանի մէջ: 2014-ին եւ 2015-ին, 22 մասնակիցներ Գանատայէն, Կիպրոսէն, Ֆրանսայէն, Գերմանիայէն, Ճափոնէն, Լիբանանէն, Հոլանտայէն, Քաթարէն, Սուրիայէն, Արաբական Միացեալ Էմիրութիւններէն, Միացեալ Թագաւորութենէն, Ամերիկայի Միացեալ Նահանգներէն եւ Ուրուկուէյէն մաս կազմեցին ծրագրին: Երեք շաբաթեայ ծրագիրը կ'ընդգրկէր անհատական դասեր Կոմիտասի

Պետական Երաժշտանոցի մասնագէտ դասախօսներու կողմէ, հայկական երաժշտութեան վերաբերեալ դասախօսութիւններ եւ կատարողական ուսումնասիրութիւններ, ունկնդրութիւններ, ելոյթներ տեղական փառատօներու ընթացքին, հանդիպումներ տեղւոյն արուեստագէտներուն հետ եւ հանդիսաւոր համերգ մը, ծրագրի աւարտին: Մասնակիցները նաեւ առիթ ունեցան այցելելու Տաթևի վանքը, Սեւանայ լիճը եւ Մարդարապատի յուշարձանը եւ թանգարանը: Ծրագրի հիմնադրութենէն ի վեր (2012-ին), 38 երաժիշտներ օգտուած են ընձեռուած լայն կարելիութիւններէն:

Նիւ Եորքի Յատուկ Միջոցառումներու Յանձնախումբ – Երիտասարդ Արուեստագէտներու Կատարողական Համերգներու Շարքը

2014-ին, Նիւ Եորքի Յատուկ Միջոցառումներու Յանձնախումբը կազմակերպեց երիտասարդ արուեստագէտներու կատարողական համերգ մը, նուիրուած Մաեսթրօ Տիգրան Մանսուրեանի 75-րդ տարեդարձին: Երեկոյի ծրագրին կը մասնակցէին իննը հայ երաժիշտներ, բոլորն ալ Հ.Բ.Ը.Մ.-ի Կատարողական Արուեստի կրթաթոշակի մրցանակակիրներ, Գանատայէն, Միացեալ Թագաւորութենէն եւ Միացեալ Նահանգներէն: Անոնցմ ութն առաջին անգամ ըլլալով ելոյթ կ'ունենային համերգներու այս շարքին մէջ: Ձեռնարկի գեղարուեստական ղեկավարն էր դաշնակահար Սարգիս Զաքարեան, Հ.Բ.Ը.Մ.-ի Լոնտոնի Սենեկային Նուագախումբէն: 2015-ի համոյթին նոյնպէս, իննը երաժիշտներ ելոյթ ունեցան «Յոյսի Մեղեդիներ» թեմայով: Համերգը նուիրուած էր Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակին: Հայաստանէն, Աւստրալիայէն, Գանատայէն, Չինաստանէն, Գերմանիայէն,

Մակեդոնիայէն, Փորթուկալէն եւ Միացեալ Նահանգներէն երաժիշտներ բերին իրենց մասնակցութիւնը: Նիւ Եորքի Յատուկ Միջոցառումներու Յանձնախումբը, 2014-ին եւ 2015-ին Նիւ Եորքի Weill Recital Hall սրահին մէջ կայացած այս համերգներուն ընթացքին, հանգանակեց \$110,000 գումար մը, որ պիտի գործածուի կատարողական արուեստի նախաձեռնութեանց համար:

Այս համերգներուն մասնակից երաժիշտները ընդհանրապէս շրջանաւարտներ են աշխարհահիշակ երաժշտանոցներէ, ինչպէս Նիւ Եորքի Ճուլիըրտ երաժշտանոցը, Սկոլտիոյ Արքայական երաժշտանոցը, Լոնտոնի Արքայական երաժշտանոցը, Երեսնի Կոմիտասի անուան Պետ. Երաժշտանոցը, Գոլնի բարձրագոյն երաժշտական Հիմնարկը, Մաննի Երաժշտութեան Դպրոցը, Մելբուռնի Մոնաշ Համալսարանը, Մանհայթընի Երաժշտութեան դպրոցը եւ Շանկհայի Երաժշտանոցը:

Սայեաթ Լովա Երաժշտական Յօրինումի Միջազգային Մրցում

2014-ին, երրորդ երկամեայ Սայեաթ Լովա Երաժշտական Ստեղծագործութեան Միջազգային Մրցումը տեղի ունեցաւ ի յիշատակ Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակին: Առաջադրանքն էր յօրինել երաժշտական ստեղծագործութիւն մը, հայկական եւ արեւմտեան գործիքներու նուագախումբի մը համար, ներշնչուած Ցեղասպանութեան նահատակ բանաստեղծ Դանիէլ Վարուժանի գործերէն: 14 նահանգներու 11 քաղաքներէ 30 մասնակիցներ ներկայացուցած էին իրենց յօրինումները: Հայաստանէն Յովիկ Սարգարեան շահեցաւ առաջին մրցանակը իր «Գողգոթայի Ծաղիկներ» գործին համար, Տիք-Լուս Ֆուն, Հոնկ Բոնկէն, շահեցաւ երկրորդ մրցանակը եւ Ռիչարտ Մելքոնեան, Միացեալ Թագաւորութենէն, երրորդ հանդիսացաւ: 2015-ին երեք մրցանակակիրներուն յօրինումներու հրապարակային առաջին կատարումը տեղի ունեցաւ Նիւ Եորքի «Սիմֆոնի

Սիլես» սրահին մէջ, միջազգային երաժշտական համոյթի մը կատարողութեամբ, Հայաստանէն, Ֆինլանտիայէն, Ֆրանսայէն, Մակեդոնեայէն եւ Միացեալ Նահանգներէն, երաժիշտներու մասնակցութեամբ: Յայտագրին մէջ ներառուած էր յատուկ կատարողութիւն մը քամանչայով:

Ֆրանսայի Հ.Բ.Ը.Մ.-ին կողմէ 2006-ին հիմնուած Սայեաթ Լովա Միջազգային Երաժշտահանութեան Մրցոյթին նպատակն է հայկական երաժշտութիւնը, գրականութիւնն ու պատմութիւնը ներկայացնել միջազգային լայն շրջանակներու, քաջալերելով հայ թէ օտար երգահաններ, որ երաժշտական յօրինումներ կատարեն հայկական եւ արեւմտեան գործիքներու համար, ներշնչման աղբիւր ունենալով հայ բանաստեղծական արուեստը:

ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԵՐ

Յակոբ Պարոնեան Թատերախումբ (Մելպուրն)

2015-ին Մելպուրնի Յակոբ Պարոնեան Թատերախումբը ներկայացուց Պերճ Զեյթունցեանի *100 Տարի Վերջ* տրաման: Թատերախումբը նաև ներկայացուց իր հիմնական երգիծական գործերը, նոր խումբով եւ դերակատարներով:



Գրիգոր Սաթամեան Թատերախումբ (Փասատենա)

2014-ին Գրիգոր Սաթամեան թատերախումբը ներկայացուց հայ անուանի երգիծաբան Յակոբ Պարոնեանի *Շողոքորթը* երեք արարնոց կատակերգութիւնը, 18 հոգինոց դերասանական կազմով: Թատերախումբի ներկայացումէն ետք, թատերասրահը դադրեցուց իր աշխատանքը վերակառուցման նպատակով եւ վերակառուցուեց 2015-ին: Սեպտեմբեր 2015-ին թատերախումբը յոբելինական հանդիսութիւն մը կազմակերպեց Փասատենայի մէջ ի պատիւ երաժշտագետ Արմէն Մանդակունիի 60-ամեայ գործունէութեան: Սօսաւորապէս 1,500 հոգի ներկայ եղան հանդիսութեան: Յորելեարը նշանաւոր է իր սիմֆոնիներով, պալկներով, սոնաթներով, ալպոմներով եւ երաժշտական գործիքաւորութեամբով: Նախապէս ծանօթ որպէս «Արտաւագդ», Հ.Բ.Մ.-ի «Գրիգոր Սաթամեան» թատերախումբը հիմնուած է 1979-ին եւ վերանուանուած, իր գեղարուեստական ղեկավարի անունով, 2012-ին:



Մալվին Մանուկեան Մանկական Թատերախումբ (Փլովտի)

2015-ին Թատերախումբի առաջին ներկայացումը եղաւ Վարուժան Ոսկանեանի 2009-ի «*Շուկներու Մատեն*» վէպը, Փլովտիի Պետական Տիկնիկային Թատրոնին մէջ, Պուլկարիա: «*Շուկներու Մատեն*»-ի դէպքերու վայրը արեւելեան Ռումանիոյ հայկական Ֆոքլանի թաղամասն է, 1950-ական թուականներուն, որ նաև ընթերցողը կ'ուղեւորէ Հայոց պատմութեան դէպքերու ընդմէջէն, յիշելով Արա Գեղեցիկն ու Մեծն Տիգրանը, Հայոց Յեղասպանութիւնն ու Ստալինեան Հայաստանը: Վէպին միջոցով, Ոսկանեան կոչ կ'ուղղէ ըմբռնելու աղէտի եւ անոր հետեւանքներու անհատրութիւնը:



Վահրամ Փափագեան Թատերախումբ (Պէրուր)

2015-ին, Պէրուրի Վահրամ Փափագեան Թատերախումբը բեմադրեց «Պիտի Ըլլայ Պիտի Զըլլայ» երկու արարով ժամանակակից կատակերգութիւն մը: 2015-ի Հոկտեմբերի Կալայի ձեռնարկին յաջորդեցին վեց ելոյթներ, յաջորդող շաբաթներու ընթացքին: Բեմադրութիւնը կը ղեկավարէր Վարդան Սկրտչեան եւ կը համախմբէր սկսնակ եւ փորձառու դերասաններ: Վահրամ Փափագեան Թատերախումբը հիմնուած էր 1959-ին, Հ.Բ.Մ.-Հ.Ե.Ը.ի խումբ մը անդամներու նախաձեռնութեամբ:



ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Ռաֆֆի Եուրեճեան, «Շրջապտոյտ Հայաստանի Մէջ» խորագրով գիրքի մը մէջ ներկայացուցած էր Հայաստանի մէջ հեծանիւով կատարած շրջապտոյտի մը ընթացքին իր արկածախնդրութիւնները: Գիրքը, պարզ ու անմիջական ոճով գրուած, կը նկարագրէ Եուրեճեանի հեծանիւով, 1,000 քմ. երկարութեամբ արշար Հայաստանի մէջ, հայրենի ժողովրդին մարդկային ազնիւ էութիւնը ճանչնալու ճիգին ընդմէջէն նաեւ իր ինքնութիւնը յայտնաբերելու ձգտումով: Իր պտոյտի ընթացքին Եուրեճեան այցելած է Էջմիածին, Շուշի եւ տասնեակներով փոքր քաղաքներ եւ գիւղեր, ինչպէս Սպիտակ, Ջերմուկ, Ալավերտի, Հաղբատ, Սեւան եւ Մարտունի: 2014-ի եւ 2015-ի ընթացքին, հեղինակը 12 քաղաքներու մէջ հանդիպումներով, Հ.Բ.Մ.-ի Մասնաճիւղերուն, դպրոցներուն, Երիտասարդ Արիւստավարժներու խումբերուն եւ գործակից կազմակերպութիւններու ներկայացուց իր տպաւորութիւնները, որոնք խանդավառութեամբ ընկալուեցան երիտասարդներու կողմէ: Եուրեճեան Եւրոպայի եւ Հիւսիսային Ամերիկայի տարածքին ներկայացուած իր օրագրութեան մէջ, նաեւ մերթ ընդ մերթ ակնարկութիւններ կատարած է Յեղասպանութեան նիւթին, պատմական եւ հոգեբանական յաւելեալ խորք պայտնովելով գործին:



DEPOP հետազոտական խումբը, համագործակցութեամբ Թորոնթօէն Գոլդլէան Հաստատութեան, «Բնակչութեան նուազումը Հայաստանի մէջ» խորագրով ընդարձակ տեղեկագիր մը պատրաստած էր: 2014-ի ընթացքին, Հետազոտող խումբը Պէրյութի, Լոս Անճելէոսի, Նիւ Եորքի, Փարիզի եւ Թորոնթօյի մէջ, հանդիպումներով, հանրութեան ներկայացուց ուսումնասիրութեան արդիւնքները, երկխօսութեան առիթ տալով, Հայաստանի մէջ արտագաղթի, ժողովրդագրութեան եւ ընկերա-տնտեսական մարտահրաւերներուն շուրջ: DEPOP խումբը իր ուսումնասիրութեան արդիւնքներու լոյսին տակ առաջարկներ ներկայացուց, որոնց շարքին Հայաստանի մէջ ներդրումներու գիծով Սփիւռքի դերին, տեղական գործարքներու համար փոքր վարկեր տրամադրելու, տնտեսութեան մէջ աւելի լայն ներգրաւում քաջակերելու եւ օրինական եւ հանրային ծառայութեան հիմնարկները զօրացնելու կապակցութեամբ:



ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒՄ

ԿԵԱՆՔԻ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԵՐՏՈՒՄ ԼԱԻԱԳՈՅՆ ԱՊԱԳԱՅԻ Ի ԽՆԴԻՐ

ԱՄԱՌՆԱՅԻՆ ԵՒ ՄԻՕՐԵԱՅ ՃԱՄԲԱՐՆԵՐ

Ամեն ամառ, Հ.Բ.Ը.Մ.-ը վարել 12 բանակումներ, ցերեկային կամ երկշաբաթեայ դրությամբ, ուր հայ պատանիներ կը զարգացնեն իրենց ձիրքերը, մասյուն բարեկամություններ կը մշակեն եւ կը ծանօթանան իրենց ազգային մշակույթին եւ ժառանգութեան ու կը խորացնեն իրենց ինքնութեան գիտակցութիւնը:

Նուպար Ճամբար (ԱՄՆ)

2014-ին եւ 2015-ին Նուպար Ճամբարը հիւրընկալեց 600 պատանիներ Հայաստանէն, Արժանիներէն, Պելճիքայէն, Պուկարիայէն, Գանատայէն, Ֆրանսայէն, Միացեալ Թագաւորութենէն եւ ԱՄՆ-ի 14 նահանգներէն, իր բանակավայրին մէջ Նիւ Եորքի Քէթսքիլ լեռներուն մէջ: 2015-ին բանակավայրը օժտուեցաւ բացօթեայ տաղավարով մը նուիրատուութեամբ Կրէկ եւ Մելինէ Թուֆայաններու, Ստիւըն եւ Քարէն Նարկիզեաններու եւ Քրիսթին եւ Ճօ Քասալիի ի

պատիւ իրենց ծնողաց Հենրի եւ Սիւզան Թուֆայաններու: 2014-ի բանակավայրի նորություններէն էր ճատրակի եւ նարտիի դասընթացքը, իսկ 2015-ին «Հաքի» ի խումբ մը կ'ազմուեցաւ: Երկու տարիներուն ալ, բանակողները վայելեցին մարզաձեւերու լայն հնարաւորութիւններ, ինչպէս նետաձգութիւն, նաւարկութիւն, ձիավարութիւն, լող եւ թենիս, նաեւ լուսանկարչութիւն, հայկական պար եւ լեզու:

Քոլոնի ՏրՎարանս (Հօթ-Սաուա, Ֆրանսա)

2014-ին եւ 2015-ին Հ.Բ.Ը.Մ-ի Ֆրանսայի մասնաճիւղի Քոլոնի ՏրՎարանսը ի մի բերաւ 160 պատանիներ Հայաստանէն, Ֆրանսայէն, Ռէինիոն Կոզիէն, Ռուսիայէն, Զուիցերիայէն, Միացեալ Թագաւորութենէն եւ ԱՄՆ-էն, Հարաւային Ֆրանսայի Հոթ Սաուա լեռան կողքին, երեք շաբաթեայ բանակումի շրջանի մը համար: Բանակումի մասնակիցները վայելեցին

մշակութային գործունէութիւններով յագեցած մթնոլորտ մը իրենց հասակակիցներու ընկերակցութեամբ, մասնակցելով շաք մը, ինչպէս հայկական երաժշտութեան եւ պարի դասեր, տեսողական արուեստ, նաւարկութիւն, ֆուլթայոլ, թենիս, լող, ձիավարութիւն եւ լեռնագնացութիւն:

Հայլեո Ճամբար (Մոֆիա)

2014-ի բանակումի եղանակի ընթացքին Պուկարիոյ Մոֆիայի Հայլեո բանակավայրին մէջ 30 մասնակիցներ վայելեցին շաք մը բացօթեայ գործունէութիւններ Նագարպարաքա Փարքին մէջ եւ շուրջօթեայ արշաւներ կ'ազմակերպեցին դէպի տեսարժան վայրեր, ինչպէս Սօփոթ եւ Քարլովո քաղաքները: Բանակողները նաեւ մասնակցեցան հայերէնի դասընթացքի, Հայկական համացանցային Համախարանի գործակցութեամբ

եւ հիւրընկալեցին յատուկ այցելուներ, ինչպէս Նելլի Մաթեոսեանը, Պուկարիոյ ՀՀ դեսպանատան խորհրդականը եւ Արսէն Միքայէլեանը, Ռոմանիոյ ՀՀ հիւպատոսը: 2015-ին 38 բանակողներ Պուկարիայէն եւ Ռոմանիայէն մասնակցեցան բանակումին: Նոր գործունէութիւններու շաքքին կային մագլցում, ամառօտեան «եղկա» եւ պարանակապի դասընթացք:

Հայլեռ Ճամբար (Փլովոսի, Պուլկարիա)

2014-ին 70 բանակողներ Պուլկարիային ներկայ գտնուեցան Փլովոսիի Հ.Բ.Ը.Մ.-ի Հայլեռ Բանակումին, մասնակցելով տաղանդի ցուցադրության, արուեստի եւ ձեռայինի դասերուն եւ մարզական խաղերուն: Բանակողները նաեւ ունկնդրեցին Ահարոն Գոչեանի դասախօսութեան, որ ներկայացուց 2005-ի իր հետազոտական արշաւի մասին Թուրքիոյ եւ Հայաստանի մէջ: 2015-ին 65 երախաներ Պուլկարիային, Ռուսիային եւ

Անգլիային մասնակցեցան բանակումին: Բանակողները մասնակցեցան Բանակումի Ռդիմպիական Խաղերուն, ինչպէս նաեւ հայերէն եւ պուլկարերէն *Ռումէօ եւ Ժիլիէթ* երգիծական ներկայացման: Թէ 2014-ին եւ թէ 2015-ին Հայր Հրաչ Մուրատեան դասախօսութիւններու շարք մը ներկայացուց Հայկական եկեղեցիին եւ հաւատքի մասին:

Տէմրճեան Ամառնային Ցերեկային բանակում (Պէրուօ, Լիբանան)

2014-ին Տէմրճեան Կեդրոնէն ներս Ամառնային Ցերեկային Բանակումը նոր ծրագիրներ ներկայացուց իր 150 մասնակիցներուն, ինչպէս Լէկօ Ուսումնական աշխատանոց, ռոպօթիքս, եւ արհեստավարժական լուսանկարչութեան դասեր, Միքոն Դպրոցին կողմէ տրամադրուած: Բանակումի գլխաւոր նիւթը Հայաստանի թագաւորներու եւ թագուհիներու մասին էր, որոնք ընթացքին պատանիները սորվեցան իրենց ազգային ժառանգութեան մասին, որոնց շարքին, հետաքրքրական պատմական դէպքեր կապուած Մեծն Տիգրանի եւ Զապէլ Թագուհիի, ինչպէս նաեւ այլ պալատական

անձնաւորութիւններու կեանքին: 2015-ին բանակավայրը ընդունեց աննախընթաց 180-հոգինոց խումբ մը: Եղանակի փակման հանդիսութեան Բանակումն ու կամաւորները Պէրուօի Մարաթոն Վազքի Ակումբին կողմէ յատուկ յիշատակութեան արժանացան Ֆարգա Ակումբի Մրցումին իրենց կամաւոր մասնակցութեան համար: 330 երեխաներ Լիբանանէն, Պելճիքայէն, Գանատայէն, Օղջի երկիրներէն, Ֆրանսայէն, Քուէթէն, Սէուտական Արաբիայէն, Շուէտէն, Թայլանտէն, ԱՄԷ-էն, ԱՄՆ-էն եւ Ուրուկուէյէն մասնակցեցան այս բանակումին 2014 եւ 2015 տարիներուն:

Փասատենայի Ամառնային Ցերեկային Բանակում (Փասատենա, ԱՄՆ)

2014-ին Փասատենայի Ամառնային Ցերեկային Բանակումը 60 հայ երախաներն ապահովեց դաստիարակչական աշխոյժ մթնոլորտ մը՝ ձեռարուեստի, ճատրակի, եփելու, պարելու, երաժշտութեան, մարզանքի եւ թատրոնի ծրագիրներով: Բանակողները նաեւ մասնակցեցան հայերէնի, անգլերէնի եւ թուարբանութեան զօրացման դասընթացներու, արշաւներ կազմակերպեցին դէպի Փասատենայի Ոստիկանական

Բաժանմունքը եւ Գալիֆորնիայի Գիտական Կեդրոնը: 2015-ին բանակողները նոյնպէս ունեցան հարուստ յայտագիր մը որ ընդգրկեց մարզանք, երաժշտութիւն, պար, գծագրութիւն եւ ձեռարուեստ, հայկական մշակոյթի դասընթացք, խոհարարութիւն, ճատրակ եւ արշաւներ դէպի թանգարաններ եւ թատրոն:

2014-15 Հ.Բ.Ը.Մ.-ի Բանակավայրերը

Անդրանիկ Սկաուտական Բանակավայր, (Վանաձոր, Հնչակտան) • Հայլեռ Բանակավայր, (Սոֆիա, Պուլկարիա) • Հայլեռ Բանակավայր (Փլովոսի, Պուլկարիա) • Նուպար Բանակավայր (Նիւ Եորք, ԱՄՆ) • Քոլոնիա տէ Կարասիոնէս (Պուէնոս Այրէս, Արժանթին) • Քոլոնիա տէ Կարասիոնէս (Գորտոպա, Արժանթին) • Քոլոնի տէ Կարասնս, Հօթ-Սաուս, Ֆրանսա) • Տէմրճեան Ամառնային Ցերեկային Բանակավայր (Անթիլիաս, Լիբանան) • Քեսապի Բանակավայր (Քեսապ, Մուրիա) • Փասատենայի Ցերեկային Բանակավայր (Փասատենա, ԱՄՆ)

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

Հ.Բ.Ը.Մ.ի մագական բազմաթիվ խումբերուն եւ մրցաշարքերուն միջոցաւ, հայ երիտասարդներ կը մշակեն առողջ կենցաղ եւ մարզական ոգի, ինչ որ օգտակար կը հանդիսանայ իրենց ամբողջ կեանքի ընթացքին:

Հարաւ- Ամերիկեան Խաղեր

2014-ին, Հ.Բ.Ը.Մ.-ի Հարաւային Ամերիկայի Մասնաճիւղերը - Պուէնոս Այրես, Գորտուպա, Մոնթեվիտո եւ Ման Փուլօ - հաւաքուեցան Մոնթեվիտոյի մէջ, Ուրուկուէյ, Հ.Բ.Ը.Մ.-ի ամենամեայ Հարաւ-Ամերիկեան Խաղերուն համար: Միջոցառման ներկայ էր Հ.Հ. Նախագահ Մերժ Սարգսեանը, Ուրուկուէյ տուած իր պաշտօնական այցի ընթացքին: Աւելի քան 150 մարզիկներ մրցեցան մասնակցելով պասքէթ օլիմպի, ճատրակի, նարտի, ֆուլբոլի, փինկ-փոնկի եւ վոլի-պոլի խաղերուն: 2015-ին Հ.Բ.Ը.Մ.-ի 35-րդ Հարաւ-Ամերիկեան Խաղերը հիւրընկալուած էին Գորտուպայի մէջ, Արժանթին: Աւելի քան 250 պատանիներ եւ երիտասարդներ Հ.Բ.Ը.Մ.-ի Հարաւ-Ամերիկայի մասնաճիւղերէն մասնակցեցան խաղերուն: Հ.Բ.Ը.Մ.-ի Հարաւ-Ամերիկեան Խաղերը առաջին անգամ կազմակերպուած են 1972-ին:

Համահայկական 6-րդ Ամառնային Խաղեր եւ Երեսնի Կէս Մարաթոն

2015-ին, աշխարհի շուրջ, Հ.Բ.Ը.Մ.-ի Մասնաճիւղերէն ներկայացուցիչներ ներկայ գտնուեցան 6-րդ Համահայկական Ամառնային Խաղերուն: 6.300 մարզիկներ 35 երկիրներու 175 քաղաքներէն մասնակցեցան 17 մարզախաղերու Երեսնի, Աբովեանի, Վանաձորի եւ Ստեփանակերտի մէջ: Խաղերու ընթացքին, 340 ոսկի, արծաթ եւ պրոնզ մետալներ շնորհուեցան առաջնակարգ մարզիկներուն: Հերմինէ Տիւրքան, Հ.Բ.Ը.Մ.-ի Սփիւռքի Երիտասարդական Ծրագիրներու համադրող եւ անդամ Համահայկական Խաղերու Միջազգային Յանձնախումբին, շարք մը այլ անձնաւորութիւններու շարքին, արժանացաւ Հայաստանի Նախագահ Մերժ Սարգսեանի գնահատանքին, իր գործօն մասնակցութեան եւ խաղերու ծրագրաւորման աշխատանքին համար:

2015-ին Հ.Բ.Ը.Մ. Անդրանիկ բանակումի ակադեմիաները մասնակցեցան Երեսնի Կէս Մարաթոն-ին: Մրցումը, որ կ'ընդգրկէր 1, 5, 10 եւ 21 քմ. վազք, կազմակերպուած էր Էրեբունի-Երեսնի տօնակատարութիւններու ծրագրին առընթեր, որպէսզի քաջալերուի առողջ կենսաձեւը եւ մարզական գրօսաշրջութիւնը դէպի Հայաստան: Աշխարհի չորս կողմէն բազմաթիւ մարզիկներ մասնակցեցան այս մարաթոնին: Աննա Շառոյեան, Հ.Բ.Ը.Մ.-ի Նիւ Եորքի Ամառնային Վարժողական Ծրագրի եւ Երեսնի Ամառնային Սպարէլային Փորձառութեան Ծրագրի շրջանաւարտ, մրցումի կազմակերպիչներէն մին էր:



ՀԵՏԱԶՕՏԵ

Յայտնաբերէ Հայաստանը

2014-ին եւ 2015-ին, մօտաւորապէս 100 հայ երտասարդներ աշխարհի զանազան երկիրներէ, ինչպէս Հայաստան, Գանատա, Տոմինիկեան Հանրապետութիւն, Ֆրանսա, Լիբանան, Լիբիւսեմպուրկ, Ռուսիա, Միացեալ Թագաւորութիւն եւ ԱՄՆ հաւաքուեցան Հայաստանի մէջ, որպէսզի մասնակցին Յայտնաբերէ Հայաստանը Ծրագրին: 2014-ին, մասնակիցները նոր տուն մը կառուցեցին տեղացի ընտանիքի մը համար, բնակարանաշինութեան Ֆուլլըր Սէնթըրի միջոցով, սպասարկեցին Հ.Բ.Ը.Մ.-ի Տարեցներու Ճաշարաններուն մէջ, ժամանակ անցուցին որբանոցներու երախաներուն հետ, մասնակցեցան երգի եւ պարի դասընթացներուն Նորքի Հայորդեայց տան մէջ եւ տեսարժան վայրեր այցելեցին Հայաստանի եւ Ղարաբաղի մէջ: 2015-ին մասնակիցները տուն մը կառուցեցին Փոքր Վեդի Գիւղին մէջ, տեղացի ընտանիքի մը համար. Այցելեցին Ծաղկաձորի եւ Վանաձորի որբանոցները, կազմակերպեցին պտոյտ մը դէպի Ղարաբաղ, այցելեցին Ստեփանակերտի մանկական գրադարանը եւ գիրքեր նուիրեցին քաղաքի մանուկներուն եւ երիտասարդներուն համար: Յայտնաբերէ Հայաստանը Ծրագիրը 12 տարիներու ընթացքին օգնած է, որ 15-էն 18 տարեկան պատանիներ ընկերային լուրջ ծառայութեան ճամբով հաղորդակցութեան մէջ մտնեն իրենց հասակակիցներուն հետ եւ տուն վերադառնան Հայաստանի ժողովուրդին հանդէպ պատասխանատուութեան աւելի խոր զգացումով:



ԵՆՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ


Հայաստան, Կենաց Երկիր

2015-ին, 37 հայ եւ ոչ-հայ կամավորներ մէկ ամիսով գացին Հայաստան, մասնակցելու երրորդ երկամեայ *Հայաստան, Կենաց Երկիր* ծրագրին: Իրենց կեցութեան ընթացքին, անոնք ամբողջացուցին վերանորոգումը երեք սենեակնրու - արուեստի դասարան մը, մարզասրահ մը եւ փոխուելու սենեակ մը - Հ.Բ.Ը.Մ.-ի Մալաթիայի Հայորդաց Տան Կեդրոնին մէջ, Երևան: Վերանորոգումի աշխատանքները սկսած էին 2013-ի ծրագրին մասնակցողները: Անոնք նաեւ ակոյաներու առողջապահութեան գործնական դասեր տուին Կեդրոնի երախաներուն, ինչպէս նաեւ Տիրամայր Հայաստանի որբերու բանակավայրին մէջ, Ծաղկաձոր: Հիմնուած 2011-ին, «Հայաստան, Կենաց Երկիր»-ը մարդասիրական ծրագիր մըն է, կազմակերպուած Միութեան Ֆրանսայի, «Հ.Բ.Ը.Մ.-Պատանեկան» բաժանմունքին կողմէ: Ծրագիրը կը նպատակադրէ Սփիւռքի եւ Ֆրանսահայ պատանիներուն ծանօթացնել Հայաստանը, մասնակցելով երկիրն մէջ վերանորոգման աշխատանքներուն եւ օգնելով կարիքաւորներուն:

Դպրոցական Այցելութիւններ դէպի Հայաստան

Հ.Բ.Ը.Մ.-ի վարժարաններու ծրագրին մաս կը կազմէ իրենց աշակերտները ամէն տարի Հայաստան ուղարկելը: Այս աշակերտներէն շատերուն համար, պտոյտը առաջինն է դէպի իրենց նախահայրերուն Հայրենիքը, իրենց աչքերով տեսնելու այն ամէնը, ինչ տրված են Հայաստանի մասին: Տեսարժան վայրերու այցելութեան եւ Հայաստանի մէջ Հ.Բ.Ը.Մ.-ի գործունէութեանց աւելի մօտէն ծանօթանալու կողքին, աշակերտները կը մասնակցին համայնքային ծառայութեան ծրագիրներու, ինչպէս ծառատունկ ԹՈՒՄՕ Ստեղծագործական Ճարտարագիտութեան Կեդրոնի աշակերտներուն հետ, Հայաստան Ծառ Ծրագրին համար, կամ սպասարկում Տարեցներու Ճաշի Կեդրոններուն մէջ եւ կամ օր մը ամբողջ Գիւմրիի Թոշունեան Որբանոցի երախաներուն հետ: Հ.Բ.Ը.Մ.ի հետեւեալ վարժարաններու աշակերտները 2014-2015 տարիներուն այցելած են Հայաստան:

Հ.Բ.Ը.Մ. Ալբերտ Մարի Մանուկեան Վարժարան (Մաութֆիլտ, Միչիկըն), 2015, Հ.Բ.Ը.Մ. Մարի Մանուկեան Վարժարան (Պուէնոս Այրէս) 2014-2015, Հ.Բ.Ը.Մ. Մանուկեան-Տէմբրճեան Վարժարան (Գանուկա Փարք, Գալիֆորնիա) 2014-2015, Հ.Բ.Ը.Մ. Դարուհի-Յովակիմեան Վարժարան (Սին Էլ Ֆիլ, Լիբանան), 2014-2015, Հ.Բ.Ը.Մ. Վաչէ եւ Թամար Մանուկեան Վարժարան (Փասատենա, Գալիֆորնիա) 2014-2015.



ՄԿԱՌԻՏԱԿԱՆ

Հ.Բ.Ը.Մ.-ի սկաուտական խումբերը կարևորություն կու տան առաջնորդության, հասարակական ծառայության եւ ուրիշներու հանդէպ յարգանքի արժանիքներուն: Սյս հիմնական սկզբունքները ձեւաւորուած էին Եգիպտոսի, Լիբանանի եւ Սուրիոյ առաջին սկաուտական խումբերուն մէջ 1940-ականներուն: Աւելի ուշ, շարժումը ընդարձակուած է դէպի Արժանթին, Հայաստան, Գանատա, Իրաք, Լիբանան, Սուրիա, Ուրուկուէյ եւ ԱՄՆ: Հ.Բ.Ը.Մ.-ի սկաուտական բոլոր խումբերը իրենց անդամները կը մղեն մշակելու բնութեան մէջ ապրելու կարողութիւններ, դաստիարակչական այլ ծրագիրներու կողքին:

Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը. Անդրանիկ Սկաուտներ

2014-ին Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի սկաուտներ եւ արենոյներ Անդրանիկ Անթիլիաս եւ Անդրանիկ-Սեւան մասնաճիւղերէն, վեց մետայներու արժանացան, 6-րդ «Բարի Կամեցողութեան Խաղեր»-ու մրցումներուն, որ կազմակերպած էր Սքուօ Տիւ Լիպան կազմակերպիւնը, Գըրնէթ Շահուանի մէջ, Լիբանան: Անդրանիկի սկաուտներն ու արենոյները չորս ոսկի, մէկ արծաթ եւ մէկ պրոնզ մետալ շահեցան փինկ-փունկի, հեռացատքի եւ 100 մ. վազքի մէջ: Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը. Անդրանիկի սկաուտները նաեւ մասնակցեցան ամենամեայ Պէյրութի Միջազգային Մարաթոնին, թէ որպէս մրցումի օրուայ կամաւորներ, թէ որպէս

վազողներ: 2015-ին Անդրանիկի սկաուտները կամաւոր կերպով մասնակցեցան «ՊանքՄէտ» պատանեկան Մրցավազքին, - պատանեկան առաջին մրցավազքը Միջին Արեւելքի մէջ - Անդրանիկի սկաուտները քաջալերեցին 6.000 մրցողները մրցումի աւարտին եւ նուէրներու ծրարներ եւ ջուր բաժնեցին անոնց, երբ աւարտեցին մրցումը: 2014-ին եւ 2015-ին սկաուտական խումբերը ունեցան նաեւ իրենց տարեկան բանակումը, երբ 250 սկաուտներ իւրաքանչիւր մասնաճիւղէ 15-օրեայ սկաուտական գործունէութիւն կ'ունենան ամէն տարի: 600 սկաուտներ եւ արենոյներ անդամ են Անդրանիկ Սկաուտական շարժումին:





Անդրանիկ Սկաուտական Բանակում

2014-ին եւ 2015-ին Անդրանիկ Սկաուտական Բանակում - ՀԲԸՄ-ի առաջին սկաուտական Բանակումը Հայաստանի մէջ - ի մի բերաւ 400 սկաուտներ եւ արեւոյշներ Հայաստանէն, Վրաստանէն, Լիբանանէն, Սուրիայէն, Արաբական Միացեալ Էմիրութենէն եւ ԱՄՆ-էն, Լոռիի գեղատեսիլ շրջանին մէջ, ամրան եղանակին: Բանակումը առիթ ընծայեց սփիւռքահայ եւ տեղացի հայ պատանիներուն հանդիպելու եւ բաժնեկցելու իրենց փորձափունները բանակումի եօթներորդ եւ ութերորդ շրջաններուն: 2014-ին Թիֆլիսի Հայաթթուն Երիտասարդական Կազմակերպութիւնը, Հ.Բ.Ը.Մ-ի Երեսանի սկաուտները եւ Սուրիոյ Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի սկաուտները Հալէպէն, Դամասկոսէն եւ Գամիշլիէն, ինչպէս նաեւ Հայաստան ապաստանած սուրիահայ պատանիներ, մասնակցեցան բանակումին: Բանակողները այցելեցին Հ.Բ.Ը.Մ-ի Վահէ Կարապետեան Կեդրոնը եւ ԹՈՒՍՕ Ստեղծագործական Ճարտարագիտութեան Կեդրոնը, ինչպէս նաեւ դիտեցին Նորքի Հայորդեայ Տան կատարողական արուեստի երախաներուն ներկայացումը: Անոնք նաեւ ներկայ եղան Գիւմրիի Գոհար Երգչախումբի ելոյթին: 2015-ի բանակումի գլխաւոր թեման կեդրոնացած էր Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակին վրայ: 2008-էն ի վեր, մօտ 2.000 տղաք ու աղջիկներ, Հ.Բ.Ը.Մ-ի հովանաւորած մասնաճիւղերէն պատանիներ եւ երիտասարդներ մասնակցած են Անդրանիկ Բանակումին:



Կլէնտէլ-Փասատենա Սկաուտական Ծրագիր

2014-ին Կլէնտէլ-Փասատենա Սկաուտական Ծրագիրը խումբին 30-ամեայ կեանքին մէջ առաջնորդներու մրցանիշային թիւ մը յառաջացուց: 26 նոր առաջնորդներ աստիճանի բարձրացում ստացան, խումբին մէկ շաբաթեայ բանակում-արշաւի ընթացքին: Շաբթուայ ընթացքին, աւելի քան 100 սկաուտներ, բոլոր սկաուտական շարքերէն մասնակցեցան բանակումին եւ յարակից շարժումներուն, ինչպէս լեռնամագլցում, լող եւ ծանօթացում հայկական մշակութային ժառանգութեան: 2015-ին, 50 սկաուտներ մասնակցեցան տարեկան արշաւ-բանակումին: Սկաուտները նաեւ մասնակցեցան լաստանաւերով պտոյտի մը: 120 պատանի եւ երիտասարդ առաջնորդներ մաս կը կազմեն Կլանտէլ-Փասատենա Սկաուտական Ծրագրին:

Հ.Ե.Ը.ի Սան Ֆերնանտո Հովիտի Սկաուտներ

2014-ին, Հ.Ե.Ը.ի Սան Ֆերնանտո Հովիտի սկաուտները Սկաուտական աստիճանի բարձրացման հանդիսութիւն մը կազմակերպեցին, ուր առաջին անգամ ըլլալով վեց երիտասարդներ պատուակալ Արծիւ աստիճանի բարձրացան, ամենաբարձր աստիճանը սկաուտական շարժումին մէջ: Աւելի քան 150 ներկայներ դիտեցին յատուկ արարողութիւնը, որոնց շարքին, «Ամերիկայի Սկաուտներ Շարժում»էն ներկայացուցիչներ: 2015-ին առաջին անգամ ըլլալով Հ.Ե.Ը.-ի սան Ֆերնանտո Հովիտէն 24 սկաուտներ եւ արեւոյշներ մասնակցեցան Հ.Բ.Ը.Մ. Անդրանիկ Սկաուտական բանակումին Հայաստանի մէջ: Հիմաուած 1985-ին, Սան Ֆերնանտո Հովիտի Հ.Ե.Ը.-ի Սկաուտական կազմը ունի 70 անդամներ:



Երկամեայ Տեղեկագիր | 2014-2015

ՄԱՍՆԱՃԻԴԵՐ ԵՒ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ

ՀԱՍՐՆԴՀԱՆՈՒՐ
ԱԶԳԻ ՀԶՕՐԱՑՈՒՄ



ԱՓՐԻԿԷ ԵՒ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔ



Գահիրեի «Օրածան» մանկական երգչախումբի տասնամեակի ելույթը 2014-ին:



Հ.Բ.Ը.Մ.ի Մուրիոյ մասնաճիւղերը օգնութեան աշխատանքներու լծուած են Մուրիոյ քաղաքացիական պատերազմի տեւողութեան

ՀԱՐԱՒՅԻՆ ԱՓՐԻԿԷ

ԵԳԻՊՏՈՍ

ԱՂԵՔՍԱՏՐԻԱ

Երիտասարդական (Հ.Մ.Ը.Մ.-Նուպար Մարզական ակումբ)

ԳԱՀԻՐԷ

Տեղեկատու Երամսեայ

Օրածան Մանկական երգչախումբ Երիտասարդական (Հ.Մ.Ը.Մ.-Նուպար Մարզական ակումբ)

ՀԵԼՈՊՈԼԻՍ

ԵԹԻՎՊԻԱ

ԱՏԻՍ ԱՊԵՍ

ՀԱՐԱՒՅԻՆ ԱՓՐԻԿԷ

ՃՈՆԱՆՆԷՄՈՒՐԿ

ԿԻՂԴՈՍ

ԼԱՌՆԱՔԱ

ՆԻԿՈՍԻԱ

Երիտասարդական (Արարատ Խումբ)

ԻՐԱՆ

ԹԵՀՐԱՆ

Մարի Մանուկեան Վարժարան Նուարդ Կիլպէնկեան Վարժարան Փարոս Թատերախումբ Երիտ. (Հ.Ե.Ը. սկստուական, մարզական) Երիտասարդ Արիեստավարժներ

ԻՐԱՔ

ՊԱՂՏԱՏ

Հ.Ե.Ը. Օհան Երգչախումբ Երջանիկ Թաճիրեան Ամանային Դպրոց Երիտ. (Հ.Ե.Ը. Օհան Մարզական, սկստուական եւ պատանեկան խումբեր)

ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԶԱՆԱԿ

ԱՄԱՆՈՍ, ՊԵՅՐՈՒԹ, ԱՆԹԻԼԻԱՍ, ՄԻՆ ԷԼ ՏԻԼ

Պօղոս Գ. Կարմիրեան Վարժարան Լեւոն Կ. Նազարեան Վարժարան Դարուհի-Յովակիմեան Վարժարան Հ.Ե.Ը. –Ասպետներ, ել-տեղեկատու Արին Պարախումբ Տեմիրճեան Կեդրոն, Յերեկային բանակում Խօսնակ Ամսաթերթ Դարմանատուներ Վահրամ Փափագեան Թատերախումբ Հ.Ե.Ը. Անդրանիկ Սկստուական-Մարզ. Երիտասարդական խումբեր Երիտասարդ Արիեստավարժներ

ԹՐԻՓՈԼԻ

Երիտ. (Հ.Ե.Ը. Անդրանիկ)

ԶԱՀԷ

Երիտ. (Հ.Ե.Ը. Անդրանիկ)

ՍՈՒՐԻՅՑ ԵՐԶԱՆԱԿ

ՀԱԼԷՊ

Հ.Ե.Ը. Արամ Խաչատուրեան Երածշտանոց Հ.Ե.Ը. Անդրանիկ Պարախումբ Հ.Ե.Ը. Պիկ Պանտ Հ.Ե.Ը. Սպենդիարեան Երգչախումբ Հ.Ե.Ը. Սկստուական Փողերախումբ Հ.Ե.Ը. Ադամեան Թատերախումբ Կոմիտաս Մենեկային Նուագախումբ Հայեացք Պարբերաթերթ Լ. Նաճարեան-Գ. Կիլպէնկեան Վրժ. Փունջ Մանկական Պարախումբ Մ. Սարեան Ակադեմիա Երիտ. (Հ.Ե.Ը. Սկստուական-Մարզական)

ՂԱՄԱՍԿՈՍ

Կ. Կիլպէնկեան Վարժարան Երամ պարբերաթերթ Երիտ. (Հ.Ե.Ը. Արագած)

ԳԱՄԻՇԼԻ

Երիտ. (Հ.Ե.Ը. Սկստուական)

ՔԵՄԱՊ

Քեսապի Բանակավայր

ԼԱՕՍՔԻԱ

ԹՈՒՐԿԻԱ

ԻՍԹԱՄՈՒԼ

ՈՒԹի Երիտ. Միութ. գործակցութիւն

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ

ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏՈՒՊԱՑ

Երիտասարդ Արիեստավարժներ

ԿԻՂԴՈՍ

ԼԱՌՆԱՔԱ. 2015-ին Լառնաքայի Հ.Բ.Ը.Մ.-ը կազմակերպեց շարք մը դասախօսութիւններ, նիւթ ունենալով 20-րդ դարու հայ անուանի դէմքերն ու հայոց պատմութիւնը: Մասնաճիւղը Նոյն տարին, ՀԲԸՄ-ի Մշակոյթի Կեդրոնին մէջ դասախօսութուն մը կազմակերպեց Խորհրդային Հայաստանի գիտնականներուն, մասնաւորաբար աստղաֆիզիկոս Վիքթոր Համբարձումեանի մասին: Հրաւիրեալ դասախօսը ճօրճ Թրուլիասն էր, Լառնաքայի Գիթիոն աստղադիտարանի տնօրէնը եւ իր գործընկեր Ալեքսանտր Փրոքոֆիէլը: Դասախօսը վեր առաւ Համբարձումեանի գիտերն ու նուաճումները եւ անոր նպաստը Հայաստանի Բիւրականի Աստղադիտարանի հիմնադրութեան մէջ, 1946-ին: Նոյն տարին Մասնաճիւղը հրաւիրեց Կիպրահայ Գէորգ Զէյթունցեանը, խօսելու Ղարաբաղի հակամարտութեան խնդրին մասին: Զէյթունցեան, որ Հայոց պատմութիւնը ուսումնասիրող մըն է, իր դասախօսութիւնները ներկայացուց Ռոթըրի Ակումբին մէջ:



Հ.Բ.Ը.Մ.ի Նիկոսիոյ մասնաճիւղը իր 100-ամեակը տօնեց 27 Հոկտեմբեր 2014-ին:

ԿԻՊՐՈՍ (շարունակուած)

ՆԻԿՈՍԻԱ. 2014-ին Նիկոսիոյ Հ.Բ.Ը.Մ.-ը տօնեց իր հիմնադրութեան 100-ամեակը, դասախօսական-գեղարուեստական ձեռնարկով մը: Պէյրութի Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի Խօսնակ Ամսագրի խմբագիր Համբիկ Մարտիրոսեան խօսեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Կիպրոսի եւ համաշխարհային պատմութեան մասին, ընդգծելով Միութեան առողջապահական եւ կրթական խնամատարական աշխատանքը Ղարաբաղի մէջ, նաեւ մարդասիրական ձեռնարկները օժանդակելու իրաքահայութեան եւ սուրիահայութեան: Ձեռնարկի ընթացքին Ս.Աստուածին Եկեղեցույ մանկական երգչախումբն ու երկու երաժիշտներ ելոյթ ունեցան նուագով ու երգով: Հանդիսութեան ընթացքին գնահատուեցան այն անդամները, որոնք յիսուն

տարի ծառայած են Միութեան: Վերջաւորութեան եղաւ հիւրասիրութիւն եւ տարեդարձերու յիշատակում: 2014-ին պատանիներ, շեշտելու համար կարեւորութիւնը բնութեան պահպանման, ծառեր տնկեցին Հ.Բ.Ը.Մ.-ի սեփական կեդրոնին մէջ: Պատանիները ամէն շաբաթ եւ արուեստի դասերուն կը ջրէին այդ ծառերը, որոնք տնկեցին ի յիշատակ Թոնի Գասարճեանի, որ նուիրեալ միութենական մը եղած էր: 2015-ին Հ.Բ.Ը.Մ.-ի Արարատ Ֆիւսթալ (մինի ֆութպօլի) ակումբը պատուեց իր նախկին անդամներէն Ալիք Սարգիսեանը, մրցումի մը ընթացքին Հայաստանի Ազգային Ֆիւսթալ խումբին դէմ: Սարգիսեան Հայաստանի խումբին օգնական մարզիչն էր:

ԵԳԻՊՏՈՍ

ԳԱՀԻԲԷ. 2014-ին Գահիբէի Հ.Բ.Ը.Մ.-ը համագործակցեցաւ Ադէքսանդրիոյ Գեղարուեստի Թանգարանին, օգնելու վերծանելու հայ նկարիչներու 13 արուեստի գործեր, որոնք գտնուած էին թանգարանի պահեստանոցին մէջ: Արուեստագետ Հրանդ Քէշիշեան օգնեց ցուցակագրելու գործերը: Նմանապէս, նոյն տարին Մասնաճիւղը հրապարակեց իր ճատրակի նոր դասընթացքը Հայկական Համացանցային Համալսարանին-Հ.Բ.Ը.Մ.-ի ճատրակի Դասընթացքի Ծրագրին միջոցաւ: Նոր նախաձեռնութիւնը մեծ ընդունելութիւն գտաւ մանուկներու եւ պատանիներու մօտ: 15 աշակերտներ անմիջապէս արձանագրուեցան առաջին դասընթացքին: 2015-ին Հ.Բ.Ը.Մ.-ը շարունակեց իր մասնակցութիւնը Հայկական Համացանցային

ճատրակի Դասընթացքի Ծրագրին, չորսուսուցիչներով եւ տասը աշակերտներով, որոնք աւարտին վկայականներ ստացան: 2015-ին Հ.Բ.Ը.Մ.-ը իր կեդրոնը վերջնականապէս փոխադրեց Հէլիոպոլիսի արուարձանը: Միութիւնը շարունակեց ծառայել Գահիբէի հայութեան Առաջնորդարանի իր գրասենեակներուն միջոցով: Նոյն տարին Գահիբէի Հ.Բ.Ը.Մ.-ը վերահրատարակեց Դոկտ. Մուհամմետ Ռիֆաթ Ալ Իմամի «Հայերը Եգիպտոսի մէջ 19-րդ դարուն աշխատասիրութիւնը: 506 էջանի գիրքը լուսարձակի տակ կ'առնէ հայերու Եգիպտոս բնակութիւն հաստատելն ու անոնց դերը երկրի քաղաքական եւ ընկերայն կեանքին մէջ 1800-ականներուն:

ԻՐԱԿ

ՊԱՂՏԱՍ. Իրաքի Հ.Բ.Ը.Մ.-ը Թագ գործունեայ, մարդասիրական օժանդակութիւն բաշխելով իրաքահայութեան ու բարոյական եւ դրամական օգնութիւն ցուցաբերեց 353 հայերու, որոնք բռնագաղթած էին Մուսուլէն, ինչպէս նաեւ Իրաքի եւ Նիւնտ ասպատանածներուն 2014 - 2015 տարիներուն: 2014-ին Մասնաճիւղը տօնեց Սայեաթ Նովայի ծննդեան 300-ամեակը,

պատանիներու պարային ելոյթով: 2015-ին Իրաքի Հ.Բ.Ը.Մ.-ը նշեց Հայկական Յեղասպանութեան Հարիւրամեակը, մշակութային միջոցառումով մը: Յուշահանդէսին մաս կը կազմէր ցուցադրութիւնը *The Cut, The Lark Farm* եւ *Ararat* ֆիլմերուն, որոնք առնչուած են Յեղասպանութեան նիւթին:

ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱԿԸ

2014-ին Լիբանանի Հ.Բ.Ը.Մ.-ի «Խօսնակ» Ամսագիրը նշեց իր հիմնադրութեան 55-րդ տարեդարձը կատարողական արուեստի ձեռնարկով մը: Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի Լիբանանի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Վիգէն Չերչեան եւ ամսագրի խմբագիր Համբիկ Մարտիրոսեան յուշանուէրներ յանձնեցին Խօսնակի նախկին խմբագիրներուն, Արամ Գարամանուկեանին եւ Արամ Սեփէթճեանին: Նոյն տարին Լիբանանի Մշակոյթի յանձնախումբը, «Նոազ Արք» ցուցաբարահի տէր եւ տնօրէն արուեստաբան Մովսէս Հերկէլեանի կողմէ նուիրուած արուեստի գործերով, Հ.Բ.Ը.Մ.-ի վարժարաններուն ի նպաստ ցուցահանդէս մը կազմակերպեց: Հերկէլեան Տասնեակներով արդիական եւ դասական ոճով նկարներ նուիրած էր, որպէս երախտագիտական արտայայտութիւն Հ.Բ.Ը.Մ.իութեան, որ ժամանակին օժանդակած էր իր ուսման: Միեւնոյն տարին Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը. սեմինար մը կազմակերպեց, յաջորդ սերունդը դաստիարակելու համար Հ.Բ.Ը.Մ.իութենական առաքելութեան մասին: Հ.Բ.Ը.Մ.-ի Լիբանանի մասնաճիւղը ճատրակի մրցաշարք մը կազմակերպեց դիւանագետներուն համար, նուիրուած ճատրակի աշխարհի նախկին պիտոյեան եւ մեծ վարպետ Տիգրան Պետրոսեանի ծննդեան 85-ամեակին: Հայաստանի մօտ Լիբանանի դեսպանութիւնը եւ Հայաստանի ճատրակի

Ֆետերասիոնը գործակցեցան այս ձեռնարկը կազմակերպելու: 2015-ին Լիբանանի Հ.Բ.Ը.Մ.-ը մասնակցեցաւ շարք մը արուեստի եւ մշակոյթի ձեռնարկներու կազմակերպման երկրին մէջ: Մասնաճիւղը բաժնեկցեցաւ Beirut Design Week (Պէյրութի Զարդանկարչական Շաբաթ)-ին, կազմելու համար ՀԱՐԻԲ ցանցային հարթակը: ՀԱՐԻԲ-ը ներկայացուց տաղանդներ, արվայնդելու համար ստեղծագործական տնտեսութիւններ, զարգացնելու ձեռնարկասիրութիւնը եւ յառաջ մղելու Լիբանանի նորարար մշակոյթը: Վերոյիշեալ Շաբթուայ ընթացքին Լիբանանի Հ.Բ.Ը.Մ.-ը ցուցադրեց միջազգայնօրէն անուանի արուեստագետներու գործերը, որոնք իրենց նկարներէն եկած հասոյթը տրամադրեցին Մասնաճիւղին, որպէսզի յառաջ մղէ իր մշակութային ծրագիրները: Լիբանանի Հ.Բ.Ը.Մ.-ը նաեւ գործակցեցաւ կազմակերպելու Հայաստանի Ազգային Ֆիլհարմոնիք նուագախումբի, Ազգային Սենեկային երգչախումբի եւ Հովեր Սենեկային երգչախումբի ելոյթները, նուիրուած հայոց Յեղասպանութեան Հարիւրամեայ տարելիցին, Պէյթետիսի Արուեստի Փառասօնին, Լիբանանի Շուֆի լեռներուն մէջ:



2000-է աւելի հանդիսատեսներ ներկայ գտնուեցան Պէթըրտօնի (Լիբանան) Մրուեստի Փառատօսին, որու ընթացքին ելոյթ ունեցան Հայաստանի Ազգային Ֆիլհարմոնիք Նուագախումբը, Ազգային Սենեկային Երգչախումբը եւ Հովեր Սենեկային Երգչախումբը:

ՍՈՒՐԻԱ

ՀԱԼԷՊ. 2015-ին Հալէպի Հ.Բ.Ը.Մ.-ը երկու տարեդարձներ տօնեց, իր երկու կրթական հաստատութիւններուն Մասնաճիւղը գեղարուեստական հանդիսութիւն մը կազմակերպեց Հ.Բ.Ը.Մ.-ի Լ. Նաճարեան-Գ. Կիւլպէնկեան Վարժարանի հիմնադրութեան 60-ամեակին առթիւ: Ներկայ էին վարժարանի հին եւ նոր աշակերտներ: Ասոր կողքին Հ.Բ.Ը.Մ.-ի Հալէպի Սարեան Ակադեմիան ալ տօնեց իր հիմնադրութեան 60-ամեակը,

եռօրեայ ցուցահանդէսով մը, խորագրուած, «Հալէպ, տագնապալի օրեր», ուր ցուցադրուած էին ակադեմիայի պատանի անդամներու գործերը: Ցուցահանդէսը տեղի ունեցաւ Երևանի Գեղագիտական Կեդրոնին մէջ, Ներկայութեամբ Հայաստանի Սփիւռքի նախարարուհիին եւ հոծ բազմութեան մը: 1955-ին հիմնադրուած այս արուեստի դպրոցը, հակառակ պատերազմական վիճակին, կը շարունակէ իր առաքելութիւնը:

ԴԱՄԱՍԿՈՍ. 2015-ին Հ.Բ.Ը.Մ.-ի Սուրիոյ Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ Ներսէս Ներսոյեան հանդիպում մը ունեցաւ Դամասկոսի Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի անդամներուն հետ եւ իր գնահատանքը յայտնեց Դամասկոսի Մասնաճիւղին տարած աշխատանքներուն, տեղոյն համայնքին եւ վարժարանին, սուրիական պատերազմի ընթացքին: Այլ հանդիսութեամբ մըն ալ Սուրիոյ մօտ Հայաստանի դեսպան դոկտ. Արշակ Փոլատեան ներկայացուց «Յեղասպանութեան Վկաներ» խորագրով իր գիրքը, Մասնաճիւղին Յեղասպանութեան

Հարիւրամեակի յիշատակի հանդիսութեանց շարքին: Գիրքը կը պարունակէ սուրիացի ականատեսներու վկայութիւններ եւ լուսանկարներ: Դարձեալ Յեղասպանութեան Հարիւրամեակի կապակցութեամբ Դամասկոսի Հ.Բ.Ը.Մ.-ն ու դամասկահայութիւնը մոմավառութեան հսկում մը կատարեցին եւ ուղղուեցան նոր անուանուած Հայ Նահատակաց հրապարակը, սուրիական մայրաքաղաքի կեդրոնը, իսկ Դամասկոսի Հ.Բ.Ը.Մ.-ի պատանեացը հաւաք մը կազմակերպեց Յեղասպանութեան իրաւաբանական պարունակին շուրջ:


ԳԱՄԻՇԼԻ. 2014-ին Գամիշլիի Հ.Բ.Ը.Մ.-ը յիշատակեց Յեղասպանութեան 99-ամեակը, ցուցադրելով ֆրանսահայ բեմադրիչ Հանրի Վերնոյի «Մայրիկ» ֆիլմը, համատեղ Գամիշլիի հայկական կազմակերպութիւններուն: Նոր տարուան առթիւ նաեւ խրախճանք մը կազմակերպեց ընտանիքներուն եւ երախաներուն համար: 2015-ին Գամիշլիի Հ.Բ.Ը.Մ.-ի Տիկնանց Յանձնախումբը Տօնեց Մայրերու Օրը, աւելի քան 220 ներկաներու մասնակցութեամբ:

Գամիշլիի Հ.Բ.Ը.Մ.-ի Գառնիկ Եագուպեան Կեդրոնին մէջ, Տիկնանց Յանձնախումբը շատ գործունէայ է, հակառակ որ քաղաքական վիճակը կայուն չէ: Մասնաճիւղը նաեւ 150 օժանդակութեան ծրարներ բաժնեց եւ բժշկական խնամք ապահովեց 85 անձերու, որոնք ժառանգեցին պատերազմի պատճառով: Նոյն տարուան աւարտին ալ Մասնաճիւղը Ամանորի տօնակատարութիւն մը կազմակերպեց քաղաքը ապաստանած ընտանիքներուն եւ երախաներուն համար:

ԼԱԹԱՔԻԱ. 2015-ին Լաթաքիոյ Հ.Բ.Ը.Մ.-ը Յուշահանդէս մը կազմակերպեց Հայոց Յեղասպանութեան Հարիւրամեակին առթիւ, լրիւ արաբերէնով, պատմութեան մէջ առաջին անգամ

ըլլալով: Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի երիտասարդները մտածեցին որ արաբ հասարակութեան առջեւ ըլլայ հանդիսութիւնը:

ԵՒՐՈՊԱ



Պարսելոնայի Հայկական Մշակութային Կեդրոնը (ՊՀՄԿ), որ Հ.Բ.Ը.Մ.ի գործակից կազմակերպություն մըն է, 28 Լոյսերը 2015-ին բացումը կատարեց իր «Հայ Տուն» կեդրոնին:



«Ապրող Յիշողութիւն» ձեռնարկը, կազմակերպուած Հ.Բ.Ը.Մ.ի Լոնտոնի մասնաճիւղին կողմէ, նուիրուած էր Հայկական Յեղասպանութեան 100-ամեակին:



20 Ապրիլ 2015-ին, Հ.Բ.Ը.Մ.ի Տոֆիայի մասնաճիւղը ներկայացուց «Վերածնունդ – Հայկական Բանաստեղծութիւն, Երաժշտութիւն եւ Պար» խորագրով յայտագիր մը:

ԱՐՄՏՐԻՍ ՎԻԷՆԱ

Կարօտ Պարախումբ
Երիտասարդ Արիեստավարժներ

ՊԵՂՃԻՔԱ ՊՐԻՒՔՍԷԼ

Երիտասարդ Արիեստավարժներ
Հ.Բ.Ը.Մ.-ի Եւրոպայի գրասենեակ

ՊՈՒԼԿԱՐԻՍ ՊՈՒՐԿԱՍՍ

ՏՈՊՐԻՉ ՀԱՍՔՈՎՕ
Փրոֆ. Գր. Ազարեան թատերախումբ
Շաբաթօրեայ դպրոց
ՓԼՈՎՏԻՒ
Հ.Բ.Ը.Մ.-ի Հայնը
Հայլեռ Բանակում
Էրբերունի Լուսագալխումբ
Մալվինա Մանուկեան Մանկ. Թատրոն
Շաբաթօրեայ դպրոց
Պատանեկան
Երիտասարդ Արիեստավարժներ
ՈՌԻՍՄԷ ՄԻԼԻՍՏՐԱ ՍԼԻՎԱՆ ՍՈՏԻՍ
Հայլեռ Բանակում
Սենեկային նուագախումբ
Լուր Պարախումբ
Պատանեկան
Երիտասարդ Արիեստավարժներ
ԵԱՄՊՕԼ
Առաօտ Երգչախումբ

ՖՐԱՆՍԱՍԻ ԵՐՁԱՆԱԿ ԼԻՈՆ

Հայկական Ռատիօժամ
Երիտասարդական խումբեր
Երիտասարդ Արիեստավարժներ
ՄԱՐՍԵՑ
Երիտասարդական խումբեր
Երիտասարդ Արիեստավարժներ
ՆԻՄ - ՔՈԹ ՏԱԶԻՐ ՓԱՐԻՉ

Ահագանգ Թատերախումբ
Ալեք Մանուկեան Շաբաթօրեայ Դպրոց
Քոլոնի տէ Վագանս
Կորիզ Առաջնորդութեան Ծրագիր
Գողթան Երգչախումբ
Լուսարեան Գրադարան
Études arméniennes contemporaines
Երիտասարդական (Լուսար Մարգական Սիւրբիւն, Երիտասարդներ եւ մարզիկներ)
Երիտասարդ Արիեստավարժներ
ՄԷՆ ՇԱՍՈՆ/ՄԷՆ ԷԹԻԷՆ
Երիտասարդական խումբեր
ՎԱԼԼԱՍ
Երիտասարդական խումբեր
ՎԻԷՆ
Չորեքշաբթի Դպրոց
Երիտասարդական խումբեր

ԳԵՐՄԱՆԻԱ ՖՐԱՆՔՖՈՒՐՔ

ՀԱՅՔ (համագործակցութիւն)
ՀԱՄՊՈՒՐԿ
Երիտասարդ Արիեստավարժներ

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԱԹԷՆՔ

Արթաթի Գալիաքեան Վարժարան
Երիտասարդական խումբեր
Երիտասարդ Արիեստավարժներ

ԻՏԱԼԻԱ ՄԻԼԱՆ

ՀՈՒՆԱՏԱ ԱՄԵԼՕ ԱՄՍԹԵՐՏԱՍ
Երիտասարդ Արիեստավարժներ

ՍՊԱՆԻԱ ՊԱՐՍԵԼՈՆԱ

Պարսելոնայի Հայկ. Մշակութային Ընկերակցութիւն (համագործակցութիւն)

ԶՈՒԻՑԵՐԻԱ ԺԸՆԷԻ

Երիտասարդ Արիեստավարժներ

ՈՒՔՐԱՆԻԱ ՔԻԷՒ

ՄԻԱՑԵԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԼՈՆՏՈՆ

Լոնտոնի Ամառնային Փորձ. Ծրագիր
Երիտասարդ Արիեստավարժներ



Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Գաթողիկոս երթը կ'ունենայ Հ.Բ.Ը.Մ.ի Գեղրոնական Վարչական Ժողովի հանդիպումի ընթացքին, 1 Փետրուար 2014, Լոնտոն: Լուսանկար Ըաֆֆի Իրեճեանի:

2014-ին, Երոպայի Հ.Բ.Ը.Մ.ը, Տիր Տէ թրքական կազմակերպութիւնը եւ Երոպայի Հակա-Ցեղապաշտական Ժողովրդային կազմակերպութիւնը, ստորագրահաւաք մը կազմակերպեցին, կոչ ուղղելով որ Թուրքիա ճանչնայ Հայկական Ցեղասպանութիւնը: Հագարաւոր անձիք ստորագրեցին կոչը: Երոպայի տարածքին թերթեր հրատարակեցին կոչը եւ ստորագրութիւնները: Այսպէս, երկրորդ տարին ըլլալով, Հ.Բ.Ը.Մ. կը գործակցել մարդկային իրաւանց պաշտպան կազմակերպութիւններու հետ, հետապնդելու համար Ցեղասպանութեան ճանաչումը:

2015-ին, Երոպայի Հ.Բ.Ը.Մ.ը յիշատակի ձեռնարկ մը կազմակերպեց, Հրանդ Տինքի սպանութեան 8-րդ տարելիցին առիթով: Ձեռնարկը, գորս կը հիւրընկալէր Խորհրդարանի Անդամ Ֆրէնք Էնկէլ, տեղի ունեցաւ Պրիւքսելի խորհրդարանին մէջ: Ասիկա Հայկական Ցեղասպանութեան Հարիւրամեամի ձեռնարկնէու շարքին առաջինն էր Երոպայի մէջ: Նոյն տարին, առաջին անգամ ըլլալով, Երոպայի Հ.Բ.Ը.Մ.ը, Երոպայի Հրեայ Ուսանողներու Միութիւնը եւ Բոմա Ընկերային Ծառայութեան

Կամաւորներու Խմբակցութիւնը (Phiren Amenca), միասնաբար համագումարներու շարք մը կազմակերպեցին, «Երոպայի Սփիւռքներ» խորագրով, որ համախմբեց տարբեր երկիրներէ ակադեմականներ, մասնագէտներ եւ գործիչներ, փորձառութիւններու փոխանակումի առիթ ստեղծելով Հայ, Հրեայ եւ Բոմա սփիւռքներու միջեւ: Երոպայի Սփիւռքներու Նախաձեռնութիւնը հովանաւորուած էր Եւրոմիութեան «Երոպայի Քաղաքացիներու Ծրագիր»-ին կողմէ, որ կը քաջալերէ Երոպայի Սփիւռքներու շարժումը եւ այն ըմբռնումը, թէ ինքնութիւններ պէտք է կապուին հողատարածքի մը կամ հեղինակութեան մը, որպէսզի կարենան արժեւորուիլ: Նոյն շարքի երկրորդ խորհրդածրոյցը «Սփիւռքներու Ժառանգութիւնը եւ Յիշողութիւնը» խորագրով, համախմբեց 33 Հայ, Հրեայ եւ Բոմա ակադեմականներ Պոտսդեֆթի մէջ, աւելի ուշ 2015-ին: Համագումարը առիթ հանդիսացաւ աւելի լայն շրջանակներ ներգրաւելու Եւրոպայի Սփիւռքներու քննարկումներուն մէջ: Ձեռնարկը նաեւ նպաստեց Հայ, Հրեայ եւ Բոմա սփիւռքներու մասին իրազեկումին, Համացանցային կայքի մը եւ բջիջային հեռաձայններու համար կիրարումի մը ստեղծումով:



2015ին, առաջին անգամ ըլլալով, Երոպայի Հ.Բ.Ը.Մ.ը, Երոպայի Հրեայ Ուսանողներու Միութիւնը եւ Բոմա Ընկերային Ծառայութեանց Կամաւորներու Խմբակցութիւնը (Phiren Amenca), միասնաբար համագումարներու շարք մը կազմակերպեցին, «Երոպայի Սփիւռքներ» խորագրով, որ համախմբեց տարբեր երկիրներէ ակադեմականներ, մասնագէտներ եւ գործիչներ, փորձառութիւններու փոխանակումի առիթ ստեղծելով Հայ, Հրեայ եւ Բոմա սփիւռքներու միջեւ:



ԱՒՍՏՐԻԱ


ՎԻԵՆՆԱ. 2014-ին, Աւստրիոյ Երիտասարդ Արհեստավարժները հիմնեցին ղեկավար նորյանձնախումբ մը: Խումբը կազմակերպեց շարք մը ձեռնարկներ, որոնց շարքին, Հայերէն-Գերմաներէն Լեզուի խտացած դասընթացք մը եւ քննարկումներու շարք մը,

ՊՈՒԼՎԱՐԻԱ

ՓԼՈՎՏԻՒ. 2015-ին, Պուլկարիոյ Լրագրողներու Միութիւնը պատուեց «Հ.Բ.Ը.Մ.ի Ձայն» պաշտօնաթերթը, Սոֆիայի Ազգային Մշակոյթի Տան մէջ: 11 տարիներէ ի վեր հրատարակուող պաշտօնաթերթը մրցանակի արժանացաւ, թղթակցութեան, լուսանկարչական լրատուութեան, եւ հրատարակութեան գեղարուեստական ձեւաւորումի մարզերուն մէջ ձեռք բերած իր որակին համար: Նոյն տարին, մասնաճիւղի Երեւոնի երաժշտական համոյթը հանդէս եկաւ երեք ելոյթներով, իչպէս նաեւ մասնաճիւղի Հիմնադիր եւ Պատուոյ Անդամ Յակոբ Կայծահանեանի ի պատիւ ելոյթով մը:

ՍՈՏԻՍ. 2015-ին, Հ.Բ.Ը.Մ.ի Սոֆիայի մասնաճիւղը, Հայկական Ցեղասպանութեան հարիւրամեակին առիթով, շարք մը մշակութային եւ գեղարուեստական ձեռնարկներով նշեց նաեւ հայ համայնքի վերապրումը, Պուլկարիոյ մէջ: Ձեռնարկներու շարքին էր Հայ բանաստեղծութեան, երաժշտութեան եւ պարերու համոյթ մը, Սոֆիայի Արդի Թատրոնին մէջ, «Հայաստանի Բոյր» խորագրով: 2015-ին նոյնպէս, մասնաճիւղը բարեսիրական յատուկ ձեռնակով մը, հանգանակութիւն կազմակերպեց ի նպաստ Հ.Բ.Ը.Մ.ի Սուրիահայրութեան Մարդասիրական Արտակարգ Հիմնադրամին:

«Մենք, Սփիւռքը» խորագրով: Քննարկումները կեդրոնացան հայկական կայուն եւ զօրաւոր սփիւռք մը ստեղծելու խնդիրներուն վրայ:



28 Նոյեմբեր 2015-ին, Հ.Բ.Ը.Մ.ի Սոֆիայի մասնաճիւղը, Շերաթըն Սոֆիա Պայքան Պանդոկիին մէջ «Բարեսիրական Պարահանդէս» մը կազմակերպեց:



Հ.Բ.Ը.Մ.ի Փրովտիի Մասնաճիւղը կը Հիւրընկալէ «Հայ Գրողներ Ընթերցումներ» 2015-ի Ապրիլին



21 Ապրիլ 2015-ին, Փարիզի մեջ տեղի ունեցաւ երաժշտական համույժ մը, «Հայկական Ցեղասպանութիւն 100 Տարուան Յիշողութիւն» խորագրով: Լուսանկար Վենսան Փոնթէ – Հ.Բ.Մ. Ֆրանսա

ՏՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՆԱԿ

ԼԻՈՆ. 2015-ին, Հ.Բ.Մ.ի Լիոնի մասնաճիւղը հինգ մշակութային ձեռնարկներ կազմակերպեց, որոնց շարքին երաժշտական ելոյթներ, խորհրդածոյրներ եւ ցուցահանդէսներ, Թուրք ներկայացուցիչներու մասնակցութեամբ, «Հայկական Ցեղասպանութիւնը – Յիշողութեան Փնտռուք» խորագրով:

Յուցահացեւին մաս կը կազմէին անկախ թղթակիցներու կողմէ Թուրքիոյ մէջ նկարուած լուսանկարներու շարք մը, որ կը պատկերէր առաջին անգամ Թուրքիա այցելող ինը Ֆրանսահայերու շրջապտոյտը:

ՄԱՐՍԷՑ. 2014-ին, Մարսէյի մասնաճիւղը Հայաստան այցելութիւն մի կազմակերպեց, որ կ'ընդգրկէր շրջապտոյտներ ինչպէս նաեւ կամաւոր ծառայութիւն Գաւառ Որբանոցին մէջ: 2015-ին տեղի ունեցաւ կատարողական արուեստներու ելոյթ մը, Մարսէյի Խորհրդածոյրներու Պալատին մէջ:

Յայտագիրը նախաձեռնութիւնն էր Մասնաճիւղի առենայետ Փաթիլք Մալաքեանի, որ հրաւիրած էր 60 պատանի արուեստագետներ Նորգի Հայրողեայ տունէն: Յայտագրի նիւթն էր «Քնարականութիւն եւ Դիմադրութիւն», որ սկսաւ Յովհաննէս Շիրազէն բանաստեղծութիւններու ամուսնով:

ՓԱՐԻԶ. 2014-ին, Փարիզի Երիտասարդ Արհեստավարժներու խմբաւորումը հանդիպում մը կազմակերպեց Պուրկո Անոսի հետ, որ «Ուլուլ» ընկերութեան գործադիր տնօրէնն էր: Հանդիպումի ընթացքին ան ներկայացուց անհատ ներդրողներու միջոցաւ խմբային ներդրում մը յառաջացնելու գործելաձեւին մասին (crowd funding), որով կարելի կ'ըլլայ նիւթական միջոցներ գոյացնել ծրագիրներ իրականացնելու համար: Փարիզի Երիտասարդ Արհեստավարժներու խմբաւորումը «Ուլուլ»ի միջոցաւ նիւթական միջոցներ ստեղծեց Ղարաբաղի մէջ կրթական, առողջապահական եւ մթնոլորտի պահպանման ծրագիրներ իրականացնելու համար: 2015-ին,

Նուպարեան Ուսունասիրական Կեդրոնի «Ժամանակակից Հայկական Սերտողութիւններ» բազմալեզու պարբերաթերթը, հրատարակեց իր համացանցային տարբերակը, ըլլալով առաջին հայագիտական հրատարակութիւնը, որ լոյս կը տեսնէ տպագիր եւ համացանցային տարբերակներով: Կեդրոնը նաեւ աշխատակցեցաւ Ֆրանսայի համալսարանական եւ լայն շրջանակին հասնող «Պատմութիւն» պարբերաթերթի 2015-ի թիւի հրատարակութեան: Յուցահանդէս մըն ալ կազմակերպուեցաւ «Փարիզի Քաղաքի Պանդոկ»ին մէջ, Հայկական Ցեղասպանութեան Հարիւրամեակին առիթով:

ԳԵՐՄԱՆԻԱ

ՖԻՆԱՆՏՈՒՐԹ. 2014-ին եւ 2015-ին Հ.Բ.Ը.Մ.-ՀԱՅՔ-ը շարունակեցին իրենց համագործակցութիւնը Գերմանիոյ մէջ, մշակութային գործունէութեամբ, նաեւ օժանդակելով հայ ուսանողներու եւ Երիտասարդ Արիեստավարժներու գործունէութեան: ՀԱՅՔ-ը հիմնադրուած է 2003-ին, նպատակ ունենալով ակադեմական ցանցով մը կապեր ստեղծել հայ եւ գերմանացի ուսանողներու եւ գիտնականներու

միջեւ, քաջալերելու համար մշակութային եւ տնտեսական համագործակցութիւնը Հայաստանի եւ Գերմանիոյ միջեւ: Հ.Բ.Ը.Մ. եւ ՀԱՅՔ իրենց համագործակցութիւնը սկսան 2006-ին Պրիւքսէլի մէջ Հ.Բ.Ը.Մ.-ի մասնակցութեամբ կայացած Եւրոպայի Ծրագրային Փոխանակումի եւ Զարգացումի Մեմբերին, որուն կարճ ժամանակ ետք յաջորդեց Հ.Բ.Ը.Մ.-ՀԱՅՔ-ի գրասենեակի բացումը Ֆրանքֆուրթի մէջ 2008-ին:

ԻՏԱԼԻԱ

ՄԻԼԱՆՕ. 2015-ին Միլանոյի Հ.Բ.Ը.Մ-ը կազմակերպեց արուեստի ցուցահանդէս մը Քազա Արմէնիա-ի մէջ, ի յիշատակ Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակին: Ցուցահանդէսը կազմուած էր հայ եւ ոչ-Հայ արուեստագէտներու գործերով:

Տեղի ունեցաւ նաեւ երաժշտական համերգ մը: Ձեռնարկի կազմակերպողներն էին Վերա Վարժապետեան-Աստուրեան եւ Հ.Բ.Ը.Մ.-ի Միլանոյի Ատենապետուհի Կեկէլ Խաչատուրեան:



Հ.Բ.Ը.Մ-ի Հոլանտայի մասնաճիւղը Հրանդ Կոստանեանի մասնակցութեամբ դասախօսական ձեռնարկ մը կազմակերպեց, նիւթ ունենալով «Հայաստանը կը Հեռանա յ Եւրոպայէն – Հայաստանի Յարաբերութիւնները – Մարտահրաւերներ եւ Հեռանկարներ»

ՀՈԼԱՆՏԱ

ԱԼՄԷԼՕ. 2014-ին Հոլանտայի Հ.Բ.Ը.Մ.-ը կազմակերպած էր դասախօսութիւններու շարք մը, նուիրուած հայ մշակոյթի պատմութեան եւ Հայաստանի ներկայ քաղաքական կացութեան զարգացումներուն: Այդ առիթով Եւրոպական Ուսումնասիրութեանց Կեդրոնի գիտաշխատող Հրանդ Կոստանեան, Պրիւքսէլէն, դասախօսութիւն մը տուաւ «Եւրոպական Միութիւն-Հայաստան Յարաբերութիւններ - արդէ՞ք Հայաստան սկսած է հեռանալ Եւրոպայէն» խորագրով: Դասախօսութիւնը կեդրոնացաւ Եւրոպական Միութեան հետ Հայաստանի կապերուն վրայ, Խորհրդային Միութեան փլուզումին յաջորդող այն իրադրութիւնը, որուն մէջ Հայաստան Կը գործակցի Եւրոպական Միութեան հետ: Նոյն ծրագրով, հանրաձայնօք պատմաբան Դոկտ. Ռիչարտ Յովհաննէսեան, անդրադարձաւ Արեւմտեան Հայաստանի Տղաքանակերտի (Տիարպէրի) մէջ վերջին հայերուն եւ հայախօս համընդհանրային մասին, որոնք կ'ապրին Մեւ Օովոն ափին, թուրք-վրացական սահմաններուն մօտ:

2015-ին Հոլանտայի Մասնաճիւղը տօնեց իր հնգամեակը, հանդիսութեամբ մը, որ զուգադիպեցաւ Հայաստանի անկախացումի տարեդարձին: Նոյն տարին Հոլանտայի Հ.Բ.Ը.Մ-ը հանգանակութիւն մը կազմակերպեց, օգնելու համար կարիքաւոր քսան հայ թերաձ երախաներու Հայաստանի Վարդէնիս քաղաքէն, հոլանտական ոչ-կառավարական PAX Kinderhulp կազմակերպութեան հետ իր համագործակցութեան ծիրէն ներս, չորս շաբաթեայ յայտագրով: Ծրագիրը նպատակ ունէր երախաներուն ծանօթացնելու հոլանդական ընկերութիւնը եւ մշակոյթը: Իրենց կեցութեան ընթացքին, 8-10 տարեկան երախաները մնացին Ափելտոււմի ընտանիքներու մօտ (Հոլանտա) եւ մաս կազմեցին մշակութային ձեռնարկներու: Ասոր կողքին, Մասնաճիւղը 2015-ին կազմակերպեց պոլսահայ Խաչիկ Պալքճեանի դասախօսութիւնը, Հոլանտա հաստատուած հայերու մասին, որ ամբողջական գաղութ մըն էր ԺԷ դարուն: Պալքճեան յիշեց որ Ամսթերտամը եղած է գլխաւոր կայքը Նոր Զուլայի հայերուն, որոնք եկեղեցի կառուցած էին 1663-ին:



2014-ի Ապրիլին, Պարսելոնայի Հայ Մշակութային Կեդրոնին նախաձեռնությամբ, տեղի ունեցան Եւրո-Հայկական 20-րդ Մարզական Խաղերը Պարսելոնայի մէջ:

ՍՊԱՆԻԱ

ՊԱՐՏԵԼՈՆԱ. 2014-ին Պարսելոնայի Հայկական Մշակութային Ընկերակցութիւնը (ՊՀՄԸ) եւ Հ.Բ.Ը.Միութիւնը համագործակցաբար կազմակերպեցին 20-րդ Եւրոհայկական Խաղերը: 28 պատուիրակութիւններ, ներառեալ Աւստրիա, Պելճիքա, Պուլկարիա, Էստոնիա, Ֆրանսա, Գերմանիա, Իտալիա, Լիբանան, Հոլանտա, Ռուսիա, Սպանիա, Զուիցերիա, Թուրքիա, Միացեալ Արաբական Էմիրութիւն եւ Միացեալ

Թագաւորութիւն, 550 մարզիկներով, կը մասնակցեին երկօրեայ մրցումներուն: 2015-ին ՊՀՄԸ պաշտօնապէս բացումը կատարեց Պարսելոնայի Հայկական Մշակոյթի «Հայ Տուն» Կեդրոնին: Կազմակերպութիւնը նոյնպէս կը հովանաւորէ Հայկական Շաբաթօրեայ Դպրոցը եւ կը կազմակերպէ կրթական միջոցառումներ, ձեռնարկներ եւ դասախօսութիւններ Սպանիոյ հայ գաղութին համար:

ՄԻԱՅԵՍԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԼՈՆՏՈՆ. 2014-ին Միացեալ Թագաւորութենէն աւելի քան 150 հայեր մասնակցեցան Լոնտոնի մէջ կազմակերպուած հաւաքոյթի մը, որ նպատակ ուներ համախմբել յաջող գործարարներ, համայնքի ղեկավարներ եւ խոստմանալից Երիտասարդ Արիեստավարժներ, անոնց միջեւ փոխ-շահաւէտ կապեր ստեղծելու նպատակով: Շարք մը հայ ղեկավար անձնաւորութիւններ, ներառեալ Հ.Բ.Ը.Մ.-ի նախագահ Պերճ Սեդրակեան, ներկայ էին ձեռնարկին: ներկայացուեցան պատանիներուն եւ Երիտասարդ Արիեստավարժներուն համար

նախատեսուած Հ.Բ.Ը.Մ.-ի ծրագիրները: ցուցադրուեցաւ նաեւ աշխարհի տարածքին Հ.Բ.Ը.Մ.-ի կատարած աշխատանքներուն մասին տեսաներիզ մը: 2015-ին, Մասնաճիւղը կազմակերպեց հայ մշակոյթին նուիրուած երեկոյ մը, «Ապրող Յիշատակ» վերնագրով, ի յարգանս Հայոց Ցեղասպանութեան հարիւրերորդ տարելիցին: Ձեռնարկին մաս կազմեց նաեւ ցուցադրութիւն մը, Նայիրի Աֆրիկեանի գեղանկարներուն եւ քանդակներուն, ինչպէս նաեւ համերգներու, պարի, ունկնդրութեան եւ բանաստեղծութեան ընթերցումի շարք մը:



28 Մայիս 2014-ին, Հ.Բ.Ը.Մ.-ի Լոնտոնի մասնաճիւղը Երաժշտական Համայնքով մը նշեց Արամ Խաչատուրեանի ծննդեան տարեդարձը

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐՈՒԿԱ



10 Հոկտեմբեր 2014-ին, Հ.Բ.Ը.Մ.ի Փաստահանայի Վաչէ և Թամար Մանուկեան Վեդրոնին մէջ, Հայաստանի Արտաքին Գործոց Նախարար Վարդան Օսկանեան ելոյթ ունեցաւ, «Հայաստանի Յոյսերը և Հեռանկարները – Արտաքին և Ներքին Ճակատներու Վրայ» նիւթով:



2015-ի Փետրուարին, Հ.Բ.Ը.Մ.ի Թորոնթօի մասնաճիւղին հրաւերով, Սոնթրէալի Թերեան Մշակութային Միութեան «Հայ Բեմ» թատերախումբը ներկայացուց Մոլիերի «Երեսկայական Հիւանդը» կատակերգութիւնը:

CANADA

USA



22 Մարտ 2014-ի «Հ.Բ.Ը.Մ. Հայ Կին Երիտասարդաց Շրջանակ»ի համագումարի ընթացքին, խօսք կ'առնէ Հիւսէյնի Ատենապետուհի Սոնա Եագուպեան:

11 Յուլիս 2014-ին, Հ.Բ.Ը.Մ.ի Նիւ Եորքի Վեդրոնէն ներս Ամերիկահայ գրող Քրիս Պօհճալեան ներկայացուց իր նորագոյն վեպը «Close Your Eyes, Hold Hands»:



ԳԱՆԱՏԱ ՄՈՆՈՐԵԱԼ

Ալէքս Մանուկեան Վրժ, Երիտասարդական (Սկաուտական, փողերախումբ, Մարզական) ԵԱ Սոնթրէալ ԹՈՂՈՆԹՕ Երիտ. (Մարզական, պատանեկան) Պատանիներու երգչախումբ ԵԱ Թորոնթօ

ԱՄՆ ԱՐԲՈՒՆ ՇԻՔԱԿՕ

Միակ Վարժապետեան Շաբաթ. Դպրոց ԵԱ Շիրակօ ԶԼԻՎԼԱՏ ՏԻԹՐՈՑԹ Ալէք և Մարի Մանուկեան Վարժարան

ԼԱՍ ՎԵԿԱՍ ՆԻՈՒ ԻՆՎԼԱՏ ՇՐՋԱՆԱԿ

ՊՈՍԹԸՆ ԵԱ Պոսթըն **ՆԻՒ ԵՈՂՔ** Հ.Բ.Ը.Մ-ի Վեդրոնական Գրասենեակ AGBU լրագիր *AGBU Insider* *AGBU News Magazine* Անդրանիկ Պարախումբ Նուպար Ճամբար ԿԻԶԱԿԷՏ *Յուշարար պարբերաթերթ* Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձ. Նիւ Եորքի Ամառնային Փորձառութեան Ծրագիր. ՄԱԿ Յատուկ ներդրումի Խմբակ Մեծագոյն Նիւ Եորքի ԵԱ

ՖԻԼԱՏԵԼՏԻՄ

ԵԱ Ֆիլատելիիա **ՍԱՆ ՖԻԼԱՏԻՄՔՕ** Հիւսիսային Գալիֆորնիոյ ԵԱ **ՀԱՐԱՒԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ** **ՖՐԵՋՆՕ** ԿԼԵՆՏԵՅԼ-ՓԱՍՏԱՏԵԱ Յաջորդ Սերունդ Դաստիարակչական Ծրագիր Հայ Կին Հայ Կին Հեռատեսիլի Ծրագիր Գրիգոր Մաթամեան Թատերախումբ Փաստահանայի Յերեկային Բանակավայր Վաչէ և Թամար Մանուկեան Երկրորդ Վարժարան Երիտասարդ. (Սկաուտ,

Մարզական) ԵԱ Լոս Անճելոս **ՕՐԷՅՆՃ ՔԱՈՒՆԹԻ** Շաբաթօրեայ դպրոց ԵԱ Օրէյնձ Քաունթի **ՍԱՆ ՏԻԲԿՕ** **ՍԱՆ ՖԵՐՆԱՆՏՕ ՎԵԼԻ** Ասպետներ Մանուկեան-Տեմիրճեան Վարժարան Երիտ. (Սկաուտական) **ՄԻԼԻՔՈՆ ՎԵԼԻ** Երիտ. (Մանկական Ակումբ) **ՈՒՍՇԻՆԿՅԸՆ ՏԻ ՄԻ** ԵԱ Ուաշինկթըն



2015-ի Ապրիլին, Հ.Բ.Ը.Մ.ի Մոնթրեալի մասնաճիղը մասնակցեցաւ Հայկական Յեղատարանութեան Հարիւրամեակի միջոցառումին: Լուսանկար՝ Պէճըրի

ԳԱՆԱՏԱ

ՄՈՆԹՐԵԱԼ. 2014-ին Հ.Բ.Ը.Մ.-ի կրթական մրցանակակիր, մեցցո սովորանօ Սուլանժ Մերտինեան, մենահամերգ մը ներկայացուց, Կոմիտասէն մինչեւ Կերշուին երգերու յայտագրով մը: 2015-ին Մոնթրեալի Հ.Բ.Ը.Մ.-ը կազմակերպեց իր ամենամեայ Ժառանգի Օրը, Հայաստանի անկախութեան նշումին առթիւ: Միջոցառումը ի մի բերած էր 400 հանդիսատէս, վայելելու համար հայկական մշակոյթ, արուեստ, երաժշտութիւն, պար եւ պատմութիւն, Հ.Բ.Ը.Մ.-ի Ալէք Մանուկեան Վարժարանի աշակերտներուն կատարողական ելոյթներով: Հ.Բ.Ը.Մ.-ը քաղաքական շարժում մը հիմը դրաւ, որ կոչուեցաւ Գանատական-Հայկական Քաղաքական Հարցերու Չանձնախումբ եւ որուն առաքելութիւնը պիտի ըլլար գանատահայութեան մօտէն ծանօթացնել Մարդկային Իրաւանց հարցերը, որոնք աշխարհի հայութեան վրայ կ'ազդեն: Մասնաճիղը Հայաստանի Հ.Բ.Ը.Մ.-ի Յուշամետալով պատուեց Գանատայի Խորհրդարանի անդամ Պրատ Պաթը, որ հովանաւորած էր 587 (M 587) առաջարկը, որպէսզի Ապրիլ 24-ը պաշտօնապէս ճանաչուի որպէս Հայոց Յեղատարանութեան Յիշատակի Օր Գանատայի մէջ: Գանատայի խորհրդարանը միաձայնութեամբ ընդունեց թիւ 587 որոշումը, Ապրիլ 24, 2015-ին:

ԹՈՐՈՆԹՕ. 2014-ին, Իօնա Գոլէճի Արեւելեան Եւրոպայի եւ Միջին Արեւելքի պատմութեանց դասախօս, Դոկտ. Ճօրճ Պուրնութեան, Ռուս-Իրանեան կապերուն եւ արդի Հայաստանի Պետութեան կայացումին մասին դասախօսութիւն մը տուաւ քննարկելով հայերու, ռուսերու եւ պարսիկներու դերը, Հարաւային Կովկասի ձեւաւորման մէջ: Նիւթը վերցուած էր Դոկտ. Պուրնութեանի նոր հրատարակուած գրքէն, որ խորագրուած էր «Թարիզէն, Ս. Փեթրսպուրկ, Իրանի Ռուսիայէն Ներդրութիւն Հայցելու առաքելութիւնը, 1829-ին»: Նոյն տարին Թորոնթօյի Հ.Բ.Ը.Մ.-ը եւ հայ համայնքը յիշատակեցին թրքահայ լրագրող Հրանդ Տինքի սպանութեան տարելիցը:

Չ եռնարկին ելոյթ ունեցաւ թուրք լրագրող Հասան Ճեմալը, Ճեմալ Փաշայի թողը: Հ.Բ.Ը.Մ.-ի Դաշնամուրային Քառակը համոյթով մը ելոյթ ունեցաւ Թորոնթօի մէջ: Ելոյթի համահովանաւորն էր Հ.Բ.Ը.Մ.-ի Նիւ Եորքի յատուկ Միջոցառումներու Յանձնախումբը: Թորոնթօյի Հ.Բ.Ը.Մ.-ի երիտասարդացը շարունակեց իր գործունէութիւնը, կազմակերպելով տաղանդներու ցուցադրութիւն մը 5-15 տարեկան մանուկներու եւ պատանիներու համար, Հ.Բ.Ը.Մ.-ի Ալէք Մանուկեան Մշակութային Կեդրոնին մէջ: 100-է աւելի մասնակիցներ վայելեցին պատանի տաղանդներու ելոյթները, Դաշնամուրի կատարողութեամբ եւ երգեցողութեամբ: Թորոնթօյի Մասնաճիղը շարունակեց իր ուշադրութիւնը կեդրոնացնել նորահաս սերունդին վրայ, հովանաւորելով Հ.Բ.Ը.Մ.-ի Մանուկներու խումբը 2014 տարուան ընթացքին, ամենամեայ միջոցառումով մը 50-է աւելի երախաներ հաւաքելով, ուրախ մթնոլորտի մէջ գանազան գործունէութեանց համար: 2015-ին Մասնաճիղը դարձեալ յիշատակեց Հրանդ Տինքի սպանութեան տարելիցը, դասախօս ունենալով Ֆէրիիլէ Չեթինը: Մարդկային իրաւանց փաստաբանուհի մը, որ Տինքը ներկայացուցած էր դատարանին մէջ եւ հարցաքննած էր անոր սպանութեան պատասխանատուները: Տարբեր ձեւերով մը Հ.Բ.Ը.Մ.-ը Համազգային Մշակութային Միութեան, Թորոնթօյի Հայկական Ընկերակցութեան եւ Պուլսահայերու Մշակութային Ընկերակցութեան հետ համագործակցաբար, դասախօսական ձեւերով մը կազմակերպեց Մէթիու Գարանեանի «Պատմական Հայաստանը 100 տարի ետք» նոր գիրքին առթիւ, ուր լուսանկարներու ընդմեջէն կը բացայայտուի Արեւմտեան Հայաստանը իր եկեղեցիներով եւ յուշարձաններով, որոնք գոհ զացած են թրքական աներիչ քաղաքականութեան եւ գանձեր որոնողներու քանդիչ գործունէութեան: Թորոնթօյի Մասնաճիղը նաեւ հրատարակեց Մոնթրեալի Հայ Բեմ Թատերախումբը, ներկայացնելու համար Մոլիերի «Երեւակայական Հիւանդը» կատակերգութիւնը:

ԳԱԼԻՖՈՐՆԱ

ԱՐԵՎՍՏԵԱՆ ՇՐՋԱՆԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ. 2015-ին Արևմտեան Շրջանի Հ.Բ.Ը.Մ.-ը օժտուեցաւ Շրջանակային Յանձնաժողովի նորանշանակ աշխոյժ կազմով մը, գլխատրութեամբ Թալին Եագուպեանի: Տարւան ընթացքին, Հ.Բ.Ը.Մ.ի շրջանակը գործօն մասնակցութիւն ցուցաբերեց Յեղասպանութեան 100-ամեակի ծիրէն ներս կազմակերպուած գործունէութիւններուն: Թալին Եագուպեան, որպէս Հարիւրամեակի Միացեալ Յանձնախումբի փոխ-նախագահուհի, Ապրիլ 24-ի առթիւ 160,000 հայերու մասնակցութեամբ կատարուած քայլարշաւին, ելոյթ ունեցաւ թրքական դեսպանատան առջեւ: Յանձնաժողովը Կալա ձեռնարկ

ԱՍՊԵՏՆԵՐ. 2014-ին Հ.Բ.Ը.Մ.-ի Ասպետները դասախօսութիւն մը կազմակերպեցին հրաւիրելով Դամասկոսի Թեմի առաջնորդ Գերաշնորհ Արմաշ Եպիսկ. Նալպանտեանը: Սրբազան Հայրը խօսեցաւ Սուրիահայութեան ներկայ կացութեան եւ Հ.Բ.Ը.Մ.-ի սուրիահայերուն ի նպաստ օժանդակութեան աշխատանքներուն մասին: Ասպետները, Լոս Անճելըսի Քաղաքապետ Էրիք Կարսթըթիի պաշտօնական նստավայր Կեթթի Հաուսի մէջ յատուկ ձեռնարկով մը նշեցին Լոս Անճելըսի մէջ ամերիկահայութեան ներկայութիւնը անցնող 100 տարիներուն: Ասպետներու նախաձեռնութեամբ «Հայաստանի Յոյսերն ու Արտաքին եւ Ներքին Մարտահրաւերները» խորագրով միջոցառումին ելոյթ ունեցաւ Հայաստանի նախկին Արտաքին Գործոց Նախարար Վարդան Օսկանեան: Մն շեշտեց Սփիւռքի դերին կարեւորութիւնը, Հայաստանի մէջ ժողովրդավարութեան զօրացումն ուղղութեամբ: 2015-ին Ասպետները հովանաւորեցին շարք մը ձեռնարկներ՝ «Ինչ բանի ականատես եղաւ աշխարհը դար մը առաջ» խորագրով

մը կազմակերպեց Գալիֆորնիոյ Լոս Անճելըսի Գիտութեան Կեդրոնի Սամուէլ Օսչին տաղավարին մէջ: Ձեռնարկի ընթացքին Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տեմիրճեան եւ Վաչէ եւ Թամար Մանուկեան վարժարաններէն երկու գիտական մարզի ուսանողներ մրցանակներով վարձատրուեցան: Այդ առթիւ հանգանակուեցաւ \$150,000, ի նպաստ նոր ծրագիրներու: Նոր ծրագիրներու ծիրէն ներս, տեղոյն Ասպարէզային Փորձառութեան Ծրագրի ուսանողները պիտի կարենան վարժողական աշխատանքներու մասնակցիլ Լոս Անճելըսի լրատուական եւ զուարճութեան ճարտարարուեստով զբաղող ընկերութիւններու մէջ:

Մքիրպօլ Մշակութային Կեդրոնին մէջ, Լոս Անճելըս, համագործակցութեամբ Երեւանի Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Հիմնարկին: Այդ շարքով, Դոկտ. Ուդուր Իւմիթ Իւնկոր ներկայացուց «Հայոց Յեղասպանութեան տնտեսական Հետեւանքները» նիւթով դասախօսութիւն մը: Տեղի ունեցաւ նաեւ ժողով-քննարկում մը, բոնի իսլամացած հայերու մասին, զոր ներկայացուցին Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Յովսէփ Արք. Տէրտէրեան եւ Ռաֆֆի Պետրոսեան, զորոջ եւ խորհրդատու Զօրեան Հաստատութեան, Գանատա: Դասախօսութիւններուն կ'ընկերակցէր ցուցահանդէս մը «Հայկական Յեղասպանութիւնը Ուրբիտ Փրէս-ի առաջին էջերուն վրայ» խորագրով, հիմնուած Յեղասպանութեան Թանգարանի տնօրէն Հայկ Դեմոյեանի նոյն նիւթերը համադրող գիրքին վրայ: Հ.Բ.Ը.Մ.-ի Ասպետները նոյնպէս քննարկման յատուկ հաւաք մը կազմակերպեցին, նպատակ ունենալով աշխուժացնել համայնքի մասնակցութիւնը հանրային, մշակութային եւ ընկերային գործունէութիւններուն:



Հայկական Յեղասպանութեան Թանգարան-Հիմնարկի Տնօրէն Հայկ Տեմոյեան, մետաղով մը կը պատուէ Էլիպէթ Գունցլէրը, Գունցլէր ընտանիքի մէկ անդամը, որ Հայկական Յեղասպանութեան ընթացքին, 8,000 որբերու կեանքը փրկած էր:



Հ.Բ.Ը.Մ.ի Ամերիկայի Արեւմտեան Ափի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետուհի Թալին Եագուպեան իր խօսքը կ'ուղղէ ներկաներուն:

ԻՆՉ ԲԱՆԻ ԱԿԱՆԱՏԵՍ ԵՂԱԻ ԱՇԽԱՐՀԸ ԴԱՐ ՄԸ ԱՌԱՋ



Հոյանտայի Ութրէյթ Համալսարանի պատմութեան դասախօս Դոկտ. Ուկուր Ումիթ Ունկոր, «Հայկական Յեղասպանութեան Տնտեսական Դրդապատճառները եւ Անոց Հետեւանքները» նիւթով իր ելոյթի ընթացքին:



«Բոնի Բայամացած Հայեր» խորագրով երրորդ երեկոյի քննարկման մասնակիցներ Տէր Յովսէփ Արք. Տէրտէրեան, Առաջնորդ Ամերիկայի Արեւմտեան Թեմի եւ զորոջ Լաֆֆի Պետրոսեան:



6 Մայիս 2014-ին, Հ.Բ.Ը.Մ.ի Փաստահայի Կեդրոնը, հրավիրած էր հանրությունը, ծանոթացնելու համար միության պատմությունը, գործունեությունները ու կանաչոր ծառայության մարզերը:

ՀԱՅ ԿԻՆ. 2014-ի Հայ Կին Երիտասարդաց Շրջանակ-ի հերթական համաժողովի քննարկման նիստն էր, «Մարմնամարզական Շարժումն և Միջազգային Հարցերու Յարակցությունը»: Ձեռնարկը իրարու քով բերաւ մասնագետներու խումբ մը քննարկելու համար մարզական ճարտարարուեստը, մշակոյթը և հայ սփիւռքը: Մարմնամարզի դերը Դիւանագիտութեան, ազգային դիմագիծի և տնտեսութեան մէջ նիւթին շուրջ խորհրդածություններու համար 130 հրաւիրեալներ համախմբուեցան Ուուսպըրի Համալսարանին մէջ Պըրպանք, Գալիֆորնիա: 2014-ին, առաջին անգամ ըլլալով, Հ.Բ.Ը.Մ.-ի Հայ Կին կազմակերպութեան հիմնադիր և նախագահ Սոնա Եագուպեանի նախաձեռնութեամբ, Լոս Անձելըսի մէջ կազմուեցաւ, կանանց 13 ընկերակցություններու միացեալ մարմին մը, որպէս յարգանքի տուրք Հայ կանանց դերին և ոգիին, նաև արժանաւորաթէս յարգելու համար յիշատակը Հայոց Յեղասպանութեան գոհերուն: 2015-ին, Հայ Կին-ի առաջին ձեռնարկը, քննարկեց հայ կնոջ դերը, Յեղասպանութեան

յաջորդող շրջանին հայ հաւաքականություններու վերագրման մէջ: Խմբային քննարկումներու նիստն էր «Հայ Կանանց Առաջնորդ Դերն ու Ծառայութիւնը յետ-Յեղասպանութեան և Վերակազմաւորման Շրջանին և Սփիւռքի Լոք շեռանկարներու Մեմին: Լոյն տարին, Մարդկանց Իրաւանց Միջին Արեւելքի և Հիւսիսային Ափրիկէի բաժանմունքի Գործադիր տնօրէն Սառա Լիի Ուիթթըն, բանախօսութիւն մը տուաւ, կեդրոնանալով Միջին Արեւելքի Մարդկային Իրաւանց հարցերուն վրայ: Հայ Կին-ը հիմնուած է 1994-ին Լոս Անձելըսի մէջ, նպատակ ունենալով օժանդակել և զօրակցիլ հայ կանանց, Հայաստանի և Սփիւռքի մէջ, ուսումնասիրութեան, կրթութեան և իրաւունքներու պաշտպանութեան ճամբով: Հայաստանի մէջ այս համախմբումին կողմէ ստեղծուած Յիլ Կանանց Կեդրոնները, որոնք շաժումաբ ամենակնառու նախաձեռնությունը կը հանդիսանան, անվճար բարձրորակ հոգատարութիւն և խորհրդատուութիւն կ'ապահովեն բազմահարիւր կանանց, իրենց երախայի ծնունդէն առաջ և վերջ:



Հ.Բ.Ը.Մ.ի «Հայ Կին Երիտասարդաց Շրջանակ»ի անդամները իրենց 9-րդ համագումարին, որուն խորագիրն էր «Մանժամարգ – Ազգի Ձեռակերպում – Ասպարեզ մը, ուր տեղ կը գտնեն դիւանագիտութիւնը, գործարքը և ինքնութիւնը»:



Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.Ի Սան Ֆերնանտո Հովիտի Պարախումբի ելույթը, 19 Մայիս 2014:

ՄԱՆ ՖԵՐՆԱՆՏՕ ՀՈՎԻՏ. 2014-ին Սան Ֆերնանտո Հովիտի Հ.Բ.Ը.Մ.-ի Մասնաճիւղը դասախօսութիւն մը կազմակերպեց, նիւթ ունենալով Պատմական Հայաստանի վայրերը «Ճամբորդութիւն մը Դէպի Արարատի Գագաթը» խորագրով, ներկայացուած իր անդամներուն կողմէ: Մասնաճիւղը նաեւ պատուեց իրենց շրջանը լրացուցած վարչականները, որոնք երկար տարիներ ծառայած էին Յանձնախումբին մէջ: 2015-ին, Մասնաճիւղին հրաւերով, արեւմտահայ գաւառական կենցաղի «Յուշամատեն» առցանց արխիւի հիմնադիր, Դոկտ. Վահէ Թաշճեան, դասախօսութիւն մը ներկայացուց

«Ցեղասպանութեան Յիշատակներ» խորագրով, որ նեղ ուսումնասիրութեան մը ծիրէն ներս կը հետեւեր երկու հայ ընտանիքներու կեանքի հոլովոյթին: Դասախօսութիւնը կեդրոնացաւ այդ երկու հայ ընտանիքներուն հետ առնչուող դէպքերուն վրայ, 1915-1918 տարիներուն: Մասնաճիւղը նաեւ յուշահանդէս մը կազմակերպեց Ցեղասպանութեան Հարիւրամեակին առթիւ: Ձեռնարկին ներկայ էին պաշտօնական անձնատրութիւններ եւ Մասնաճիւղի անդամները: Երեկոն աւարտեցաւ Ծիծեռնակաբերդի յուշակոթողի մանրակերտին շուրջ մոմավառութեամբ:

ՇԻՔՍԿՕ. 2014-ին Շիքակոյի Հ.Բ.Ը.Մ.-ը դասախօսական ձեռնարկ մը կազմակերպեց գրող Զապէլ Եսայեանի մասին, որ Հայոց Ցեղասպանութեան նախորդող Ապրիլ 24-ի զիջերը ձերբակալուած 250 մտաւորականներու շարքին միակ կինն էր:

Եսայեան, յաջողած էր փրկուիլ եւ հետագային շարք մը կարելոր գործեր հեղինակել իր կեանքի ընթացքին: Հիւր դասախօսը, ճուտիթ Սարեան, ներկայացուց Եսայեանի «Սիլիստրի Պարտէզները» գիրքին անգլերէն թարգմանութիւնը:

ՏԻԹՐՈՅԹ. 2015-ին Հայաստանի վարչապետ Յովիկ Աբրահամեան յուշամատակով մը պարգևատրեց Հ.Բ.Ը.Մ.-ի պատուոյ անդամ, ճարտարապետ եւ բարերար Յովսէփ Մարաֆեանը Հայաստանի զարգացման ի նպաստ հայկական

համայնքներու մէջ կատարած իր օգնութեան աշխատանքներուն համար: Տարիներու ընթացքին Մարաֆեան Տիթրոյթի Հ.Բ.Ը.Մ.-ին միջոցաւ օժանդակած է Հայաստանի մէջ շինարարական եւ վերանորոգման ծրագիրներու:

ՆԻՈՒ ԻՆՎԵՍՏԻ ՇՐՋԱՆԱԿ. 2014-ին Նիու Ինվընտի Շրջանակը ունեցաւ իր չորրորդ տարեկան Գոհաբանութեան Ընթրիքը, տեղւոյն երկրորդական վարժարանի եւ համալսարանի ուսանողութեան համար, որոնք չէին կրնար իրենց տուները վերադառնալ տօնական օրերուն: Ընթրիքը առիթ ընծայեց որ անոնք քննարկէն զանազան շահեկան հարցեր եւ սատարէն Նիու Ինվընտի Հ.Բ.Ը.Մ.-ի վերելքին: 2015-ին մասնաճիւղի

անդամները կազմակերպեցին արուեստի եւ ճազ երաժշտութեան երեկոյ մը, ներկայացնելով միջազգայնօրէն գնահատուած նկարիչ, գծող եւ ճարտարապետ Մարիա Գագարեանը: Մասնաճիւղը նաեւ կազմակերպեց ամենամտայ հաւաքներ եւ ընտանեկան միջոցառումներ, համագործակցութեամբ Նիու Ինվընտի Հայ Ուսանողներու Ընկերակցութեան:



Նիու Եւրոպի մէջ Հ.Բ.Ը.Մ.ի Մուրհիհայութեան Մարդասիրական Արտակարգ Օգնութեան Հիմնադրամին ի նպաստ կազմակերպուած հեծանուանարգի մասնակիցները \$75,000ի գումար մը գոյացուցին:

ՆԻՒ ԵՈՐՔ. 2014-ին, 150 դիւանագետներ, ոչ-պետական կազմակերպութիւններ, լրագրողներ, գործիչներ, ուսուցիչներ եւ ուսանողներ հաւաքուեցան ՄԱԿ-ի մէջ, գիտաժողովի մը համար, խորագրուած «Դէպի Ցեղասպանութեան Արգիլում. Ազգեր Կը Խոստովանին Իրենց Սուր Պատմութիւնը – Ուրացման Փոխակերպումը»: Այս խորհրդաժողովը այլ կազմակերպութեանց կողքին, մասնակիօրէն հովանաւորուած էր ՄԱԿ-ի մօտ Հայաստանի Մնայուն Առաքելութեան եւ Հ.Բ.Ը.Մ.-ի կողմէ: Խօսք առնողները կէդրանացան «Դար մը Ցեղասպանութիւն, 1913-2013» նիւթին վրայ, դասեր քաղուեցան, քննարկելով Թուրքիոյ կողմէ Ցեղասպանութեան ուրացումը: 2014-ին գրողներ եւ ֆիլմարտադրողներ, իրենց գործերը ներկայացուցին Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Գրասենեակին մէջ: Ամերիկեան գրական շրջանակներու մէջ ծանոթ գնահատուած հեղինակ Քրիս Պոհճալեան ներկայացուց իր վերջին գործը «Close Your Eyes Hold Hands» Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Գրասենեակին մէջ: Էրիք Նազարեան ցուցադրեց իր մեծապէս գնահատուած ֆիլմը «Պոլիս», որ լաւագոյն կարճամեթրաժ ֆիլմի մրցանակը շահած է 2011-ի Արփա Ֆիլմի փառատօնին: Ֆիլմը ցուցադրուեցաւ նաեւ Լիոնի եւ Մարսելլի Հ.Բ.Ը.Մ.-ի շրջանակներուն համար: Հինգ նոր բեմադրիչներ, որոնցմէ շատեր Հ.Բ.Ը.Մ.-ի կրթական յատկացումներ ստացացած էին, ցուցադրեցին իրենց ֆիլմերը «Հայաստանէն, Նիւ Եորք, Երեկոյ Մը Հայ Ֆիլմի Երիտասարդ Բեմադրիչներուն Հետ» ձեռնակին, հովանաւորուած Հ.Բ.Ը.Մ.-ի եւ Գոլումպիա Համալսարանի կողմէ: Բեմադրիչները՝ Վիքթորիա Ալեքսանեան (Հոգատարները), Օֆելիա Յարութիւնեան (Շրջանակը), Էրիք Շահինեան (Ճասթին), Ճէսի Սուրսուրեան (Առանց Նախաբանի) եւ Անահիտ Եահճեան (ԼԵԻՈՆ. Հոյակապ Կեանք Մը) քննարկեցին իրենց ֆիլմերը ցուցադրութենէն ետք: 2015-ին Հ.Բ.Ը.Մ.-ը Գոլումպիա Համալսարանին, Համալսարանի Հայկական Կեդրոնին եւ Աշխարհի Յուշարձաններու Հիմնադրամին հետ հովանաւորեց միօրեայ գիտաժողով մը, խորագրուած «Յուշարձաններ եւ Յիշողութիւն - Շինարարական Մշակոյթ եւ զանգուածային վայրագութեանց Հետեւանքները»:



Հ.Բ.Ը.Մ.ի «Արարատ Հանդէս»ը համահովանաւորն էր Մարթի Քարանեանի «Պատմական Հայաստանը 100 Տարի Ետք» շնորհահանդէսին, 12 Մարտ 2015-ին:

Բազմակողմանի գիտաժողովին մասնակցող մասնագետներ պատմութեան, գրականութեան, արուեստի պատմութեան, արուեստի ուսումնասիրութեան, ճարտարապետութեան եւ միջազգային հարցերու տարբեր տեսանկիւններէ քննարկեցին վերականգնումի աշխատանքներու գծով ստեղծուած գործակցութիւններու եւ փոխ-յարաբերութիւններու ազդեցութիւնը միջազգային քաղաքականութեան եւ ընկերային արդարութեան խնդիրներու կապակցութեամբ: Նոյնպէս 2015-ին, գրող եւ դերասան Էրիք Պօղոսեան Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Գրասենեակին մէջ ներկայացուց իր նոր գիրքը «Նեմեսիս Ահաբեկումի Գործողութիւն»ը, որ Հայկական Ցեղասպանութեան հեղինակներուն դէմ սանձազերծուած վրիժառական շարժումը կը ներկայացնէր, Թալէթ Փաշայի ահաբեկումով: Հ.Բ.Ը.Մ.-«Արարատ»ը, Գրիգոր եւ Գլարա Զոհրապ Տեղեկատուական Կեդրոնը, եւ Հայաստանեայց եկեղեցուոյ Արեւելեան Թեմի Առաջնորդարանի Հայկական Ուսումնասիրութեանց կեդրոնը, միասնաբար կազմակերպեցին Արիան Աթէշեան Տրլաքամբանյը-ի «Վերապրումի Լուսանկարներ - Պուրճ Համուտի Հայերը» խորագրով գիրքին շնորհահանդէսը: Հեղինակը ցուցադրեց գիրքին մէջ տեղ գտած իր լուսանկարներու հաւաքածոն, ուր կը տեսնուէին Պէրլուրի շիւսիւ-Արեւելքը գտնուող Պուրճ Համուտի հայահոծ շրջանի առօրեայ տեսարաններ, խանութայաններ, արհեստաւորներ եւ արուեստագետներ: Արմէն Մարտուպեան նոյնպէս Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Գրասենեակին մէջ ներկայացուց իր վերջին գիրքը «Բեկորներ կորսուած Հայրենիքէ Մը - Յիշելով Հայաստանը» խորագրով: Դասախօսութիւնը կէդրոնացաւ Տիտիլեան ընտանիքին վրայ, որոնք լուսանկարիչներ էին Օսմանեան Կայսրութեան վերջին շրջանին, մինչեւ Ա. Համաշխարհային Պատերազմ եւ Թուրքիոյ Անկախութեան պատերազմը:



22 Ապրիլ 2015-ին, Հ.Բ.Ը.Մ.ի Նիւ Եորքի կեդրոնին մէջ ամերիկեայ յայտնի դերասան-ֆիլմարտադրող Էրիք Պօղոսեան ներկայացուց Ցեղասպանութեան կազմակերպիչ եռեակի անդամ Փալէթի Փաշայի ահաբեկման մասին, «Նեմեսիս, Ահաբեկման Գործողութիւն» խորագրով իր գիրքը:

20 Նոյեմբեր 2015-ին, Հ.Բ.Ը.Մ.ի Կատարողական Արուեստներու Բաժնին նախաձեռնութեամբ, հայ երիտասարդ բեմադրիչներու 6 կարճ ֆիլմեր ներկայացուեցան հանրութեան, Նիւ Եորքի մէջ:



ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

ՊԱՐԱԶՈՒ

ԱՐԺԱՆԹԻՆ
ՊՈՒՔՆՈՍ ԱՅՐԷՍ
 Քոլոնիա տե՛ Վագանսիեռնե
 Գր. Սաթանեան Թատերախումբ
 Մարի Մանուկեան Վարժարան
 Երիտ. (Լիկա տե՛ Խուվենե Անդրանիկ Պարախումբ,
 Սկաուտ. Մարզական)
 ԵԱ Պուէնոս Այրես

ՊԱՐԱԶՈՒ
ՄԱՆ ՓԱՌԻՕ
 Երիտ. (Մարզական)
 ԵԱ Պրազիլ

ՈՒՐՈՒԿՈՒԷՅ

ԱՐԺԱՆԹԻՆ

ՈՒՐՈՒԿՈՒԷՅ
ՄՈՆԹՎԻՏԷՕ
 Երեան 50 նուագախումբ
 Կռունկ Երգչախումբ
 Նուպարեան-Մանուկեան Վարժարան
 Երիտ. (Լիկա տե՛ Խուվենե, Մարզական, սկաուտական)

2014-ին Պուէնոս Այրեսի Ջորավար Անդրանիկ սկաուտական խումբը, նոր շենքով մը օժտուեցաւ, որ իր Լոնտոնաբնակ բարերարին անունով կոչուեցաւ Թիթիզեան Կեդրոն:

24 Նոյեմբեր 2015-ին, Հ.Բ.Ը.Մ.ի Մոնթեվիտոյի Նուպարեան Վարժարանը ունեցաւ իր տարեկան փառատօնը:

8 Ապրիլ 2014-ին, Պրազիլի Երիտասարդ Արհեստավարժները LinkedIn-ի Ման Փառուլոյի կեդրոնին մէջ դասախօսութեան մը ներկայ գտնուեցան



ԱՐՇԱՆԹԻՆ

ՊՈՒՔՆՈՍ ԱՅՐԷՍ. 2014-ին, Պուկնոս Այրեւի Զօրավար Անդրանիկ Սկաւտական խումբը, նոր «Տիտիզան Կեդրոն»ով օժտուեցաւ, բարերարութեամբ Լոնտոնէն Հայկ եւ Էլսա Տիտիզեաններու: Սկաւտական այս խումբը հիմնուած է 1986-ին եւ ունի 60 անդամ: 2015-ին Պուկնոս Այրեւի Հ.Բ.Ը.Մ-ը Մեթրոփոլիթըն Կաթողիկէ Քաթէորային մէջ մասնակցեցաւ յատուկ Պատարագի մը, առ ի երախտագիտութիւն Ֆրանսիկոս Պապի Հայոց Յեղասպանութեան ճանաչման: Պատարագը մատուցեց Կարտինալ Մարիօ Փօլի, Պուկնոս Այրեւի Արքեպիսկոպոսը, մասնակցութեամբ հայ հոգեւորականներու: Պատարագի երգեցողութեան մասնակցեցաւ «100 Ձայն

ԳՈՐՏՈՊԱ. 2014-ին, Գորտոպայի Հ.Բ.Ը.Մ-ը ունեցաւ իր ականդական «Հայկական Ճաշարանը Հ.Բ.Ը.Մ-ի Կեդրոնին մէջ: Մասնաճիւղի անդամները պատրաստած էին իւրայատուկ հայկական ճաշատեսակներ, որոնք զնահատուեցան

Հարիւրամեակին համար» երգչախումբը, կազմուած յատկապէս 100-ամեակի ձեռնարկներուն համար, խմբավարութեամբ Տիանա Գարբիէլեան-Սարաֆեանի: Մասնաճիւղը կազմակերպեց նաեւ Հայկական Խոհանոցի Շաբաթ մը, հրաւիրելով հարիւրաւոր ներկաներ, որ համտեսեն Հ.Բ.Ը.Մ-ի Տիկնանց Յանձնախումբի պատրաստած ուտեստեղէնները: Հայաստանի, Վրաստանի եւ Լիբանանի դեսպանատուներու ներկայացուցիչները ներկայ գտնուեցան փառատօնին: Ձեռնարկը առիթ հանդիսացաւ հանրութիւնը ծանօթացնելու հայկական ազգագրական ասանդութիւններու:

հարիւրաւոր տեղացիներու կողմէ: 2015-ին կազմակերպուեցաւ Մանուկներու Օրը «Պերճ Սեդրակեան Կեդրոն»ին մէջ, համայնքը մշակութային եւ կրթական շարժումներուն մասնակից դարձնելու նպատակով:



Հ.Բ.Ը.Մ-ի Գորտոպայի մասնաճիւղի կազմակերպած «Մանուկներու Օր»ը, 28 Օգոստոս 2015-ին:

ՊՐԱԶԻԼ

ՄԱՆ ՓԱՈՒԼՕ. 2014-ին Ման Փաուլոյի Հ.Բ.Ը.Մ-ը տօնեց իր 50-ամեակը, 400 հրաւիրեալներու ներկայութեան, որոնք եկած էին յարգելու կազմակերպութիւնը: Հրաւիրեալներուն մէջ էր Հայաստանի Պրագիլիոյ Դեսպան Աշոտ Գալոյեան: Հանդիսութեան ընթացքին փութեան շրջանակը պատուեց Անդրանիկ Գսաճիքեանը զինք հոչակելով Հ.Բ.Ը.Մ-ի 2014-ի Տարուան Մարդը: 2015-ին Մասնաճիւղը իր մասնակցութիւնը բերաւ Հ.Բ.Ը.Մ-ի Սուրիահայութեան Շտապ-Օգնութեան Հիմնադրամին: Նոյն տարին, Պրագիլի Հ.Բ.Ը.Մ-ի

դեկավարութեան տարած աշխատանքներուն շնորհիւ, Ման Փաուլոյի Օրէնդրական Ժողովը Որդեգրեց բանաձեւ 1266-ը, Ապրիլ 24-ը յայտարարելով «Հայոց Յեղասպանութեան Յիշատակի եւ Ճանաչման Օր»: Որպէս Երախտիքի արտայայտութիւն, Հ.Բ.Ը.Մ-ը պատուեց Օրէնդրական Ժողովի Նախագահ Ֆերնանտօ Քափիէրը եւ Փետրօ Թոպիազը, յատուկ հաւաքոյթի մը ընթացքին, կազմակերպուած Ման Փաուլոյի Օրէնդրական Ժողովի կեդրոնին մէջ:

ՈՒՐՈՒԿՈՒԷՅ

ՄՈՆԹԷՎԻՏԵՕ. 2015-ին Մոնթեվիտոյի Հ.Բ.Ը.Մ-ը, Մոնթեվիտոյի Քաղաքապետութեան, լուսանկարչութեան Intendencia-ի Կեդրոնին եւ Ուրուկուէյի Հայկական Մշակութային Ընկերակցութեան հետ, կազմակերպեցին լուսանկարչական աննախընթաց ցուցահանդէս մը «Հարիւր Տարի Յեղասպանութիւն, Ուրուկուէյ եւ Հայերը Պատմութիւն կը կերտեն» վերնագրով: Ցուցահանդէսը արխիւային նկարներով կը ներկայացնէր հարիւր տարուան հայկական համայնքին ներկայութիւնը Ուրուկուէյի մէջ, լուսանկարներով եւ

պատմական փաստաթուղթերով, որոնք տրամադրուած էին առաջին ներգաղթողներու ընտանիքներուն կողմէ: Մեքսիկայէն Դոկտ. Գարլոս Անթառամեան դասախօսութիւն մը ներկայացուց Մեքսիկայի ազերիական քարոզչական աշխատանքներուն մասին, որոնք կը ջանան պատմութիւնը կեղծել, հայերը ոչ որպէս զոհ այլ յարձակող ներկայացնելով: Անթառամեան խմբագրած է «Մահուան եզրին, Համբարձում Մարտիրոս Չիթճեանի Յուշերը» գիրքը, որ կը նկարագրէ Չիթճեաններու վերապրումը Յեղասպանութենէն եւ անոնց նոր կեանքը Մեքսիկայի մէջ:

ԱԻՍՏՐԱԼԻԱ



ՄԵԼՊՈՒՌ

Հայկական Ռատիո Յայտագիր
Նոր Ձայն Թերթ
Երիտասարդական

ՄԻՏՆԻ

Ալեքսանտր Նախակրթարան
Ալեք Մանուկեան Շաբաթօրեայ Դպրոց
Միութին պաշտոնաթերթ
Վահրամ Փափագեան Թատերախումբ
Երիտասարդական



23 Մայիս 2015-ին, Հ.Բ.Ը.Մ.ի Միտնիի մասնաճիղը, իր կեդրոնէն ներս պաշտօնական ճաշկերոյթ եւ յատուկ ձեռնարկ մը կազմակերպեց «Թամզարա» պարախումբին համար:



Հ.Բ.Ը.Մ.ի Մելպուրնի մասնաճիղի թատերական ձեռնարկը 3 Մայիս 2014-ին:



Ազատ Ղարիպեան Պարախումբը, Մելպուրնի Հայաստան Փառատօնին, 4 Ապրիլ 2015:

ԱԻՍՏՐԱԼԻԱ

ՄԵԼՊՈՒՌ. 2015-ին Մելպուրնի Հ.Բ.Ը.Մ-ը եւ Ակինեան Հայկական Շաբաթօրեայ դպրոցը կազմակերպեցին գրական երեկոյ մը, յիշատակելու համար բանաստեղծութիւններն ու գրականութիւնը նշանաւոր հայ գրողներու, որոնք զոհ գացին Հայոց Ցեղասպանութեան: Ներկայացուած գրողներուն մէջ էին Դանիէլ Վարուժան, Ռուբէն Սեւակ, Գրիգոր Զոհրապ, Երովսան, Սիամանթօ եւ ուրիշներ: 2015-ին նոյնպէս, Մելպուրնի Հ.Բ.Ը.Մ-ը հիւրընկալեց հոշակաւոր Արմէնիա Ֆէսթ-ը, համայնքային Փառատօնը, Հայոց պատմութիւնն ու

մշակոյթը տարածելու նպատակով: Փառատօնը, որուն ներկայ եղան 1000 հանդիսատեսներ, կազմակերպուած էր ի յիշատակ Հայոց Ցեղասպանութեան Հարիւրերորդ Տարելիցին: Ամբողջ օրուայ ընթացքին հիւրերը վայելեցին շարք մը մշակութային ձեռնարկներ, ներառեալ համերգ մը, Ակինեան Հայկական Շաբաթօրեայ դպրոցի աշակերտներուն կատարողութեամբ եւ պարային ելոյթ մը, ներկայացուած Ազատ Ղարիպեան Պարախումբին կողմէ:

ՄԻՏՆԻ. 2014-ին Միտնիի Հ.Բ.Ը.Մ-ը օժանդակեց Երեւանի Օլիմբուս Կրթական Համալիրի վերանորոգման աշխատանքներուն: Օլիմբուս Համալիրը, որ կը գտնուի Երեւանի Նորքի շրջանին մէջ, կրթական յատուկ ծառայութիւններ կ'ապահովէ շրջանի ժողովուրդին: 2015-ին Միտնիի Մասնաճիղի փոխ-Ատենապետ Յովհաննէս Գոյումճեան կոչուեցաւ Հ.Բ.Ը.Մ-ի Աւստրալ-Հայ Տարուան Մարդը: Մասնաճիղը նաեւ վերակազմեց իր պատանեկան խումբը, որ հանդէս եկաւ ներկայացումով մը: Երեկոյեան ձեռնարկի ընթացքին

Մասնաճիղը գնահատեց իր անդամները, մարզիկներն ու խաղացողները, Հ.Բ.Ը.Մ-ի մարզական շարժումին իրենց աջակցութեան համար: Միութեան «Թամզարա» Հայկական ազգագրական Պարախումբը նոյնպէս ելոյթ ունեցաւ, ձեռնարկի մը ընթացքին, Հ.Բ.Ը.Մ-ի Համայնքային Կեդրոնին մէջ: Պարախումբը, որ կազմուած է 30 անդամներէ, Միտնիի հայ համայնքէն, նպատակ ունի հայկական ազգագրական պարերը տարածել հայերու եւ Աւստրալիացիներուն մէջ, նաեւ կը միտի խորացնել ազգային գիտակցութիւնը իր անդամներուն մօտ:

2014-2015

ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՍՆԱՃԻՂԵՐՈՒ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐԸ

ԱՐՇԱՆԹԻՆ

Պուենոս Այրես - Համբարձում Հալաճեան
Գորտոպա - Նիքոլաս Է. Անալեան

ԱԻՍՏՐԱԼԻԱ

Մելպոն - Մարալ Չորպաճեան
Սիտնի - Թորոս Պողոսեան

ԱԻՍՏՐԻԱ

Վիեննա - Ժիրայր Պալմանեան

ՊՐԱՉԻԼ

Սան Փաուլո - Հելիո Պալուբեան

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Փլովտի - Ռուբեն Չաուրչեան
(Փլովտիի ենթակայ Մասնաճիւղեր)
Պուրկաս - Յակոբ Սովսեան
Տոպրիչ - Էտուարտ Գոգոնեան
Հասքոփո - Սրբուհի Տէր Անտոնեան
Ռուսսե - Պողոս Կարճարեան
Սիլվեն - Արշալիր Հիլեան
Եամպոլ - Սոնիա Արշալիր Յովնանեան
Սոֆիա - Սոնիա Աւագեան Պետրոսեան

ԳԱՆԱՏԱ

Մոնթրեալ - Շահէ Թանաշեան
Թորոնթո - Քնար Պասաճեան

ԿԻՊՐՈՍ

Լառնաքա - Ստեփան Գամբեան
Նիկոսիա - Միսաք Գույումճեան

ԵԳԻՊՏՈՍ

Եգիպտոսի Շրջ. Յանձնաժողով, Գահիրէ - Պերճ Թերզեան
(մինչև 2014); Օննիկ Պըլըքտանեան
Գահիրէ - Վիգէն Ճիգմեճեան
Աղեքսանդրիա - Սարգիս Վարձպետեան

ԵԹՈՎՊԻԱ

Ատիս Ապապա - Վահագն Ղարիպեան

ԵՒՐՈՊԱՅԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ

Փարիզ - Ալեքսիս Կեօվճեան

ՖՐԱՆՍԱ

Ֆրանսայի Շրջ. Յանձնաժողով, Փարիզ - Ֆիլիպ Փանոսեան
(Մինչև 2015); Նատիա Գործունեան
Լիոն - Քամիլ Մետրոպեան
Մարսելյ - Փաթրիք Մալաքեան
Նիս-Գոթ Տ ագիւր - Շաքէ Յակոբեան Քլաուսըն
Փարիզ - Սասուն Սոճի (Մինչև 2015); Ռաֆայել Տէր Յակոբեան
Վալանս - Ժան Ժազ Վարդանեան
Վիեն - Շարլ ՓալթոՊետրոսեան

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Յունաստանի Կետր. Վարչութիւն Աթէնք - Տիգրան Ապասեան

ԻՐԱՆ

Թեհրան - Ասողիկ Պապայեան

ԻՐԱՔ

Պաղատ - Բագրամ Տէր Յակոբեան

ԻՏԱԼԻԱ

Միլանո - Կեկել Խաչատուրեան

ԼԻԲԱՆԱՆ

Լիբանանի Շրջ. Յանձնաժողով, Պէյրութ - Ժերար Թիֆէնքճեան

ՀՈՒՆԱՏԱ

Ալմէլո - Յարութ Փալանճեան

ՀԱՐԱՆ. ԱՓՐԻԿԷ

Ճոհաննէպուրկ - Ժազ Ատանալեան

ՍՈՒՐԻԱ

Սուրիայի Շրջ. Յանձնաժողով, Հալէպ - Ներսէ Ներսոյեան
Հալէպ - Մանուէլ Վարժապետեան
Դամասկոս - Արա Եագուպեան
Գամիշլի - Զարեհ Սիմոնեան
Լաթաքիա - Յակոբ Աղամեան
Քեսապ - Վազգէն Չափարեան

ԱՐԱՐԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԷՄԻՐՈՒԹԻՒՆ

Տուպայ - Հրաչ Պուռունսուլեան

ՄԻԱՑԵԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Լոնտոն - Ժիրայր Գերզեան

ՍՐԱԳՍԱԿ

Montevideo: Benjamin Kemanian

ԱՄՆ

Հարաւային Շրջ. Յանձնաժողով - Գրիգոր Գարակէօզեան (մինչև 2014);
Թալին Եագուպեան (Մինչև 2015)
Կլենտլի - Փասատենա-Հրանդ Վարձպետեան
Հայ Կին , Լոս Անճելոս - Սոնա Եագուպեան
Օրէնճ Քաունթի - Գրիգոր Մահտեսեան
Սան Տիէլո - Անի Գալայճեան
Սան Ֆրանսիսկո Հովիտ - Արա Եսայեան (Մինչև 2014);
Հրակ Օհաննէսեան (Մինչև 2015)

Ֆրեզնո - Զարուհի Մկրտիչեան
Միլիթոն Հովիտ - Երուանդ Զօրեան
Շիքակո - Սոնա Պողոսեան Տիգրէ
Նիւ Ինկլընտ Շրջ. - Արա Պալիբեան
Նիւ Եորք - Յատուկ Միջոցառումներու Յանձնախումբ - Նիլա Ֆրստըքճեան
Տիքսոն - Նատիա Մարաֆեան
Քլիվլենտ - Սեպուհ Սեդրակեան
Փրովիտընս - Ուիլիլմ Ազնաւուրեան
Հիուսթըն - Սարգիս Օհանեան

Լուսանկար՝ Բաֆֆի Իրեճեանի

ՀՈՒՍԱՐՁԱԿԻ ՏԱԿ



88ԴԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐԸ

2015-ին, 88-րդ ընդհանուր ժողովի օրերուն, մետալներ, պարգեւներ եւ Պատուոյ Անդամի կոչում շնորհուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի ութը անդամներու եւ համակիրներու:

Անիթա Անսրբեան ¹

Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովի Ծրագիրներու Տնօրէնուհի Անիթա Անսրբեան արժանացաւ Ս. Ներսէս Ծնորհալի Մետալին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց

Կաթողիկոսին կողմէ, իր 25-ամեայ ծառայութեան եւ Հ.Բ.Ը.Մ.-ի նուիրումին համար:

Քնար Պասմաճեան ²

Քնար Պասմաճեան ստացաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Նախագահի պարգեւը, իր յանձնառութեան եւ նուիրումին համար, որպէս Թորոնթոյի Հ.Բ.Ը.Մ.-ի Ատենապետուհի 2004-2005 եւ կրկին

2008-էն մինչեւ այսօր: Ան նաեւ մեծապէս սատարած է Հ.Բ.Ը.Մ.-ի Մարդասիրական Հիմնադրամի հանգանակութեան աշխատանքներուն:

Թորոս Պօղոսեան ³

2010-էն ի վեր Միտնիի Հ.Բ.Ը.Մ.ի Ատենապետ Թորոս Պօղոսեան, պարգեւատրուեցաւ Նախագահի Պարգեւով, Աւստրալիոյ մէջ Հ.Բ.Ը.Մ.ի գործունէութեան եւ կրթական, մշակութային

ծրագիրներուն երկար տարիներ սատար հանդիսացած ըլլալուն, ինչպէս նաեւ համայնքէն ներս իր կատարած առաջնորդ դերին առ ի գնահատանք:

Ալեքսանտր Պոժօ ⁴

Հայաստանի մէջ Ուքրանիոյ նախկին դեսպանը, պարգեւատրուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Կարպիս Փափագեան մրցանակով, որ կը շնորհուի այն ոչ-հայ մտաւորականին, որ կ'օժանդակէ հայկական մշակոյթին ու պատմութիւնը հասկնալու եւ տարածելու աշխատանքին, իր ժողովուրդին եւ միջազգային հասարակութեան մէջ: Պոժօ, որ որպէս

Հայաստանի մէջ Ուքրանիոյ դեսպան ծառայած է 1996 -2001 եւ ապա նաեւ 2005 -2010, Հայաստանի եւ Ուքրանիոյ Գործընկերութեան անդամ է, հեղինակած է մեծ թիւով ուսումնասիրութիւններ, յօդուածներ եւ գիրքեր նուիրուած Հայաստանի մշակոյթին եւ գրականութեան, նաեւ հայերէն շատ մը գրական գործեր թարգմանած է ուքրաներէնի:

Հայկ Դեմոյեան ⁵

Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի Տնօրէն Հայկ Դեմոյեանը գնահատուած է իր ձեռքբերումներուն, ծառայութեան եւ ղեկավարութեան համար: Հայոց Յեղասպանութեան Հարիւրամեակին առթիւ կազմակերպելապէս

է մեծ թիւով ակադեմական միջազգային գիտաժողովներ Հայաստանի մէջ եւ ամբողջ աշխարհի տարածքին: Ան ստացաւ Հ.Բ.Ը.Մ.-ի արծաթեայ մետալ եւ Հ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ Անդամի կոչում:

Հայկ Սարգիսեան ⁶

Հայկ Սարգիսեանին շնորհուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ Անդամի կոչում եւ պարգեւատրուեցաւ Միութեան արծաթեայ մետալով, Հ.Բ.Ը.Մ.-ի եւ Հայ մշակութային ժառանգութեան հանդէպ իր երկար տարիներու յանձնառութեան համար: Սարգիսեան ծառայած է որպէս Հ.Բ.Ը.Մ.-ի Նիւ Եորքի Կեդրոնական գրասենեակի Գործադիր տնօրէն 1988-ին: 2010-2012 ան նաեւ ծառայած է

որպէս Հ.Բ.Ը.Մ.-ի Արեւմտեան Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ: Գործնականօրէն ան նպաստած է Հ.Բ.Ը.Մ.-ի ծրագիրներուն համար հանգանակութեան աշխատանքներու, արուեստի ցուցահանդէսներ, Յօրէլիական եւ յատուկ ձեռնարկներ կազմակերպելով:

Ներսէս Ներսոյեան ⁷

Հ.Բ.Ը.Մ.-ի Սուրբիոյ Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ Ներսէս Ներսոյեան գնահատուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ Անդամի կոչումով եւ արծաթեայ մետալով, Սուրբահայութեան օգնութեան ճիգերու համադրումին եւ տնօրինումին համար կատարած իր ղեկավար դերին եւ ձեռներեց ու նուիրեալ ծառայութեան համար:

2014-ին ան պարգեւատրուած էր Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ Մովսէս Խորենացի մետալով, Սփիւռքի մէջ հայ ինքնութեան պահպանումին եւ Հայաստան-Սփիւռք կապերու զարգացման գծով իր կատարած ազգանպաստ ծառայութիւններուն համար:

Մէլրան Օհանեան ⁸

Հայաստանի Պաշտպանութեան Նախարար Մէլրան Օհանեան պարգեւատրուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Ոսկեայ մետալով, Հայաստանին մատուցած իր ծառայութեան

համար: Նախարարը իր կարգին Հայկական Բանակի մետալով Պարգեւատրեց Հ.Բ.Ը.Մ.-ը, հայրենասիրութեան եւ հայկական ինքնութեան պահպանման համար:

Սրբուհի Սարգիսեան ⁹

Ղամասկոսի Հ.Բ.Ը.Մ.-ի Կիլլայի Կիլլայեկեան Վարժարանի Երկար տարիներու կրթական մշակ Սրբուհի Սարգիսեան, պարգեւատրուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Նախագահի Պարգեւով,

վարժարանի յառաջդիմութեան եւ սերունդներու կրթութեան իր ծառայութեան համար: Ան հայերէն լեզուի եւ մշակոյթի ուսուցչուհի եւ տեսչուհի եղած էր 1954-էն մինչեւ 2013:

ՀՌԻՍԱՐՁԱԿԻ ՏԱԿ



Վարդան Ապտո

Հ.Բ.Ը.Մ.-ը պատուեց Վարդան Ապտոն, Նիւ Եորքի Մեթրոփոլիթըն շրջանի հայ համայնքին իր նուիրեալ ծառայութեան համար, իրեն շնորհելով բիրեղեայ յուշաքանդակ մը, 35 տարի անընդմեջ Նիւ Ճըրսիի Հայկական Ռատիոժամբ

հիմնադիր տնօրէնի պաշտօնը վարելուն առթիւ: Ապտո նաեւ ստացաւ Մովսէս Խորենացի մետալը Հայաստանի հանրապետութեան կողմէ եւ Սահակ Մեսրոպ մետալը Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետին կողմէ:



Հանրի Արսլանեան

Հալէպի Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի Ատենապետ Հանրի Արսլանեան Պարգեւատրուեցաւ Մխիթար Հերացի Մետալով, Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ: Արսլանեան որպէս Հ.Ե.Ը.-ի ղեկավար ներդրում ունեցած է Ընկերակցութեան

մարզական եւ երիտասարդական շարժումներուն մէջ եւ յատկապէս կարեւոր դեր խաղացած է Սուրիահայութեան հասած օգնութեան բաժանման աշխատանքներու կազմակերպման մէջ:



Յակոբ Աղամեան

Լաթաքիոյ Հ.Բ.Ը.Մ.-ի Ատենապետ Յակոբ Աղամեան պարգեւատրուեցաւ Մեսրոպ Մաշտոց Մետալով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. Հայրապետին կողմէ՝ հայ մշակոյթին

բերած ծառայութեանց համար: Ան հեղինակ է պատմութեան և յօդուածներու: Իր գործերը հրատարակուած են քսանի մը մը գրքերով:



Սոնա Արագեան-Պետրոսեան

Սոֆիայի Հ.Բ.Ը.Մ.-ի Ատենապետուհին պարգեւատրուեցաւ Ուլիլմ Սարոյեանի մետալով, Հայաստանի Սփիւռքի նախարարութեան կողմէ: Մետալը կը տրուի անոնց, որոնք հայ մշակոյթը կը տարածեն

Սփիւռքի մէջ, զարգացնելով Հայաստան-Սփիւռք համագործակցութիւնը ստեղծագործական գործերով եւ ակնառու դեր կը կատարեն Սփիւռքի հետ կապերու ամրապնդման գծով:



Ռուբէն Քէշիշեան

Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ եւ Պուէնոս Այրէսի Մասնաճիւղի Պատուոյ նախագահ Ռուբէն Քէշիշեան ստացաւ Մխիթար Հերացի Մետալը Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ, հայ համայնքին բերած իր ծառայութեանց համար: 1963-էն 1973, Քէշիշեան

ծառայած է որպէս Ատենապետ Պուէնոս Այրէսի Հ.Ե.Ը.-ին, աւելի ուշ ծառայած է որպէս Մասնաճիւղի Գործադիր Մարմնի Ատենապետ: 2006-էն մինչեւ 2013 Քէշիշեան Պուէնոս Այրէսի Հ.Բ.Ը.Մ.-ի Նախագահն էր:

Հ.Բ.Ը.Մ.Ի ՄՐՑԱՆԱԿՆԵՐ 2014



Դեսպան Թաթուլ Մարգարեան

Միացեալ Նահանգներու մօտ Հայաստանի նախկին դեսպան Թաթուլ Մարգարեան արժանացաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ Անդամի կոչումին հայ ժողովուրդին մատուցած ծառայութեանց համար, երբ ան Հայաստանի

դեսպանի պաշտօնը կը վարէր Միացեալ Նահանգներու մէջ: Ան ծառայած է որպէս Հայաստանի ներկայացուցիչ Ուաշինկթընի մէջ 2005-էն մինչեւ 2014:



Սարգիս Մինասեան

Հ.Բ.Ը.Մ.-ի Արեւմտեան Շրջանակը պատուեց Միութեան երկարամեայ ղեկավար անդամ եւ Լիբանանի ու Գալիֆօրնիոյ Հ.Բ.Ը.Մ.-ին ծառայող Սարգիս Մինասեանը անոր շնորհելով Պատուոյ Անդամի կոչում, իր նուիրումին համար Հ.Բ.Ը.Մ.-ին: Մինասեանի կապը Հ.Բ.Ը.Մ.-ի հետ սկսած է 1957-ին,

որպէս Միութեան Գործադիր տնօրէն եւ հիմնադիրներէն մին Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի Վահրամ Փափազեան Թատերախումբին 1959-ին: Հարաւային Գալիֆօրնիա հաստատուելէն ետք 1986-ին ան շարունակած է ծառայել Միութեան, Սան Ֆերնանտօ Հովիտի մասնաճիւղին մէջ:



Դեսպան Կարէն Նազարեան

Հայաստանի նախկին ֆայուն ներկայացուցիչը Մ.Ա.Կ.-ի մէջ, դեսպան Կարէն Նազարեան պարգևատրուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ Անդամի կոչումով, իր բացառիկ նուիրածութեան եւ

ծառայութեանց համար հայ ազգին: Ան որպէս Հայաստանի ներկայացուցիչը Մ.Ա.Կ.-ի մէջ ծառայած է 2009-էն մինչեւ 2014:



Անթոնիօ Սարաֆեան

Նախկին ատենադպիրը Հ.Բ.Ը.Մ.-ի Պուէնոս Այրէսի Մասնաճիւղին, Անթոնիօ Սարաֆեան պարգևատրուեցաւ Մովսէս Խորենացի Մետալով, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ, որպէս գնահատանք Պուէնոս Այրէսի երիտասարդական շարժումներուն զարկ տալու, Հարաւային Ամերիկայի մէջ Հ.Բ.Ը.Մ.-ի

երիտասարդական խումբերուն միջեւ կապերը պահպանելու եւ ամրապնդելու ուղղութեամբ իր տասնամեակներու ծառայութեան: Հ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ անդամ Սարաֆեան Ատենապետն էր Պուէնոս Այրէսի Հ.Ե.Ը.-ին 1980-ականներուն եւ մասնաճիւղի ատենադպիրի պաշտօնը վարած է ամբողջ 12 տարի:



Երուանդ Զօրեան

Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ Երուանդ Զօրեան արժանացաւ Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեանի Պետական Պարգևին: Զօրեան, որ հիմնադիրն է Հայկական Համացանցային Համալսարանի

եւ գլխաւոր ճարտարապետը կիսահաղորդիչ ճարտարագիտութեան Մինոփսիա հաստատութեան, պարգևատրուեցաւ Մամուլի Շուքուրեանի հետ, իրենց բարձրարժէք նպաստին համար Հայաստանի գիտութեան:

ՀՌԻՍԱՐՁԱԿԻ ՏԱԿ



Տիգրան Ապասեան

Հ.Բ.Ը.Մ.-ի Աթենքի Ատենապետը պարգևատրուեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Կոնդակով, Փերիսթերիի մէջ, Յունաստան: Ապասեան գնահատուեցաւ որպէս նուիրեալ մը իր ազգին եւ եկեղեցւոյ, ինչպէս նաեւ ամբողջ կեանքի

ընթացքին ծառայած ըլլալով յունահայութեան: Ապասեան ղեկավարած է Հ.Բ.Ը.Մ.-ի մասնաճիւղերը Աթենքի եւ Սալոնիքի մէջ եւ համերաշխութեան ու համագործակցութեան ջատագովը եղած է յունահայ համայնքի տագնապալից օրերուն:



Սալի Տէր Ղազարեան

Թորոնթոյի ՀԲԸՄ-ի Գործադիր Տնօրէն Սալի Տէր Ղազարեան գնահատուեցաւ Մասնաճիւղին ընձեռած իր 25 տարիներու ծառայութեան համար: Տէր Ղազարեան 1981-ին որպէս կամաւոր

միացած է Թորոնթոյի Հ.Բ.Ը.Մ.-ին, ծառայելով իրր ժողովական 1987-էն մինչեւ 1989, ապա գործադիր տնօրէնի պաշտօնին անցած է 1989-ին:



Օննիկ Ղարիպեան

Եգիպտոսի Հ.Բ.Ը.Մ.-ի փոխ-ատենապետ Օննիկ Ղարիպեան, Հ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ Անդամի կոչում ստացաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Ժողովին կողմէ, իր նուիրումին եւ ղեկավար դերին

համար: Որպէս Շրջանակային Յանձնաժողովի Փոխ ատենապետ, ան մեծապէս օգտակար եղած էր կալուածներու եւ իրաւաբանական հարցերու լուծման գծով:



Խօսէ Անթոնիօ Կիրիարան

Հ.Բ.Ը.Մ.-ը եւ իր գործակից կազմակերպութիւնը՝ Պարսելոնայի Հայկական Մշակութային Ընկերակցութիւնը, պատուեցին գրող Խօսէ Անթոնիօ Կիրիարան Հ.Բ.Ը.Մ.-ի Կարպիս Փափագեան Սրցանակով, Պարսելոնայի մէջ: Սրցանակը կը տրուի այն օտար

մտաւորականներուն, որոնք կ'օժանդակեն հայ մշակոյթի ու Հայոց պատմութեան ծանօթացումին եւ տարածումին օտար շրջանակներու մէջ: Կիրիարան, որ գրող է եւ լրագրող, շարք մը գիրքեր եւ յօդուածներ հրատարակած է, Հայոց մասին:



Վահէ Կարապետեան

Բարերար Վահէ Կարապետեան պարգևատրուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Ոսկեայ մետալով, արժանանալով «Հ.Բ.Ը.Մ.-ի Բարերար Անդամ» կոչումին իր գնահատանք եւ երախտագիտութիւն իշխանական իր նուիրատուութեան: Պրն Կարապետեան Միութեան նուիրած էր Երեւանի մէջ կառուցած իր շէնքը, որ իր անունով կոչուեցաւ

Վահէ Կարապետեան Կեդրոն: Կեդրոնը պիտի ծառայէ Միութեան կրթական մշակութային եւ երիտասարդական ծրագիրներուն, ինչպէս նաեւ հաւաքավայր մը պիտի ըլլայ պատանեկան եւ երիտասարդական շարժումներու համար: Շէնքին պաշտօնական բացումը կատարուեցաւ, 2015-ին:

Հ.Բ.Ը.Մ.Ի ՄՐՑԱՆԱԿՆԵՐ 2015



Գրիգոր Մանուկեան

Ման Փաուլոյի Հ.Բ.Ը.Մ.-ի նախկին Ատենապետ Գրիգոր Մանուկեան պարգևատրուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ Անդամի կոչումով: Որպէս Ատենապետ, ան զօրաւոր ղեկավարութիւն ունեցաւ մասնաւորաբար Պրագիլի եւ ընդհանրապէս Հարաւային Ամերիկայի Հ.Բ.Ը.Մ.-ի շրջանակներուն մէջ, կազմակերպելով

շարժումներ եւ տարեկան ձեռնարկներ, որոնք կարողացան իրար մօտեցնել Հարաւային Ամերիկայի Հ.Բ.Ը.Մ.-ի մասնաճիւղերը: Ան նաեւ ծառայեց որպէս Ման Փաուլոյի Հ.Բ.Ը.Մ.-ի Գործադիր Մարմնի անդամ եւ Մասնաճիւղի ընկերային միջոցառումներու յանձնախումբի Ատենապետ:



Տարօն Մարգարեան

Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեան պարգևատրուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Ոսկեայ մետալով 2015-ին, Հայկական Համացանցային Համալսարանին եւ Երեւանի Քաղաքապետարանին միջեւ

համագործակցութիւնը քաջալերելուն համար, որուն արդիւնքով հրապարակուեցաւ «Հետազօտել Երեւանը – Ակնարկ մը Քաղաքի Անցեալին եւ Ներկային Վրայ» էլ-գիրքը:



Նազար եւ Արտեմիս Նազարեան

Հ.Բ.Ը.Մ.-ի Խնամակալներու Խորհուրդի անդամ Նազար Նազարեան եւ իր տիկինը՝ Արտեմիս, արժանացան Հայաստանի Հանրապետութեան երկրորդ կարգի մետալին, Նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ: Նազարեանները

արժանացան այս պարգևին Հայրենիքին իրենց մատուցած ծառայութեանց համար, ինչպէս նաեւ համայն հայութեան օժանդակութեան ի խնդիր իրենց նուիրումին եւ յանձնառութեան:



Պերճ Փափազեան

Պերճ Փափազեան գնահատուեցաւ իր տարիներու ծառայութեան եւ առաջնորդ դերին համար, որպէս Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ եւ ատենադպիր,

2006-էն մինչեւ 2015: Ան նաեւ շարունակեց ծառայել որպէս Հ.Բ.Ը.Մ.-Արմէն-Օնթարիօ Յանձնախումբի նախագահ եւ Հ.Բ.Ը.Մ.-ի Արմէն-Գեպէքի ատենադպիր:



Տօքթ. Միմոն Միմոնեան

Հ.Բ.Ը.Մ.-ի Ասպետները պատուեցին Էլլիս Այլընտի Պատուոյ մետալին արժանացած Տօքթ. Միմոն Միմոնեանը, Հարաւային Գալիֆօրնիոյ հայ համայնքի կեանքէն ներս իր միութենական

եւ հանրային ակնառու գործունէութեան համար: Միմոնեան նաեւ պարգևատրուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ Անդամի կոչումով:

ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ ՀԱՆՔՐՈՒԱՆՆԵՐ ԵՒ ՏԱՐԵԴԱՐՁՆԵՐ

- Հ.Բ.Ը.Մ. Հալեյ Լազար Նաճարեան- Գալուստ Կիլիպէնկեան Վարժարան- 60-ամեակ
- Հ.Բ.Ը.Մ. Հալեյի Մարտիրոս Մարեան Ակադեմիա - 60-ամեակ
- Հ.Բ.Ը.Մ. Ալեք եւ Մարի Մանուկեան Վարժարան - 60-ամեակ
- Հ.Բ.Ը.Մ. Գահիրէի Ծիածան Մանկական Երգչախումբ – 10-ամեակ
- Հ.Բ.Ը.Մ. Հովանտայի մասնաճիւղ-5-ամեակ
- Հ.Բ.Ը.Մ. Մոնթրէալի Ալեք Մանուկեան Վարժարան- 45-ամեակ
- Հ.Բ.Ը.Մ. Պուէնտու Այրէս Մարի Մանուկեան Վարժարան- 40-ամեակ
- Հ.Բ.Ը.Մ. Նիկոսիաի Մասնաճիւղ-100-ամեակ
- Հ.Բ.Ը.Մ. Սան Փաուլոյի Մասնաճիւղ 50-ամեակ
- Հ.Բ.Ը.Մ. Միտնիի Ալեքսանտր Վարժարան -25-ամեակ
- Հ.Բ.Ը.Մ. Հալեյի Սպենդիարեան Երգչախումբ- 60-ամեակ
- Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի Պէրուի ի Խօսնակ Ամսագիր- 55-ամեակ

Սան Փաուլոյի Մասնաճիւղ
50-ամեակ



Նիկոսիաի Մասնաճիւղ
100-ամեակ



Մոնթրէալի Ալեք Մանուկեան Վարժարան
45-ամեակ



Ալեք եւ Մարի Մանուկեան Վարժարան
60-ամեակ



Միտնիի Ալեքսանտր Վարժարան
25-ամեակ



Հ.Ե.Ը.-ի Պէրուի ի Խօսնակ Ամսագիր
55-ամեակ



2014-2015 Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ

ՇՐՋԱՆԱԿԱՐՏԻՑ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ 2

Լ. Նաճարեան-Գ. Կիլիպենկեան Շրջ. Միութիւն (Գալիֆորնիա-ԱՄՆ)
Դարուկի-Յովակիմեան Շրջ. Միութիւն (Գալիֆորնիա -ԱՄՆ)

ԱՐՈՒԵՍ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ 2

Ա. Խաչատուրեան Երաժշտանոց (Հալէպ, Սուրիա)
Սարեան Ակադեմիա (Հալէպ, Սուրիա)

ԲԱՆԱԿՈՒՄ ԵՒ ՑԵՐԵԿ. ԲԱՆԱԿՈՒՄ 10

Անդրանիկ Սկաուտ. Բանակում (Վանաձոր, Հասաստան)
Հայլեռ Բանակում (Փլովտի, Պուլկարիա)
Հայլեռ Բանակում (Սոֆիա, Պուլկարիա)
Նուպար Ճամբար (Նիւ Եորք, ԱՄՆ)
Քոլոնիա տէ Կարանսիոնէ (Պուէնտո Այրէս, Արժանթին)
Քոլոնիա տէր Կարանսիոնէ (Գորտուպա, Արժանթին)
Քոլոնի տըր Կարանս (Չոթ Սավոյ, Ֆրանսա)
Տեմիրճեան Կեդրոն Յերէկ. Բանակում (Անթիլիաս, Լիբանան)
Քեսապ Բանակում (Քեսապ, Սուրիա)
Փասատեան Յերէկային Բանակում (Փասատեան, ԱՄՆ)

ԵՐԳՉԱԽՈՒՄԲԵՐ 7

Առաւօտ Երգչախումբ (Եամպոյ, Պուլկ.)
Հ.Ե.Ը. Օհան Երգչախումբ (Պաղտա, Իրաք)
Հ.Ե.Ը. Սպենդիարեան Երգչախումբ (Հալէպ, Սուրիա)
Օրիաճան Մանկ. Երգչախումբ (Գահիրէ, Եգիպտոս)
Կռունկ Մանկ. Երգչախումբ (Մոնթեվիտեօ, Ուրուկուէ)
Գողթան Երգչախումբ (Փարիզ, Ֆրանս)
Պատանեկան երգչախումբ (Թորոնթօ Գանատա)

ՊԱՐԱԽՈՒՄԲԵՐ 8

Անդրանիկ Պարախումբ (Նիւ Ճրքսի, ԱՄՆ)
Հ.Ե.Ը. Անդրանիկ Արին Պարախումբ (Անթիլիաս, Լիբանան)
Հ.Ե.Ը. Անդրանիկ Պարախումբ (Հալէպ, Սուրիա)
Արարատ Պարախումբ (Գորտուպա, Արժանթին)
Կարօտ Պարախումբ (Վիէննա, Աւստրիա)
Նուր Պարախումբ (Սոֆիա, Պուլկարիա)
Փունջ Մանկ. Պարախումբ (Հալէպ, Սուրիա)
Թամզարա Պարախումբ (Միտնի, Աւստրալիա)

ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ 4

Նիւ Եորքի Ամառնային Փորձ. Ծրագիր (Նիւ Եորք, ԱՄՆ)
Լոնտոնի Ամառնային Փորձ. Ծրագիր (Լոնտոն, ՄԹ)
Երաժշտական Հայաստան Ծրագիր (Երեւան, Հայաստան)
Երեւանի Ամառն. Փորձ. Ծրագիր (Երեւան, Հայաստան)

ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ 1

ԿՈՐԻՋ Ղեկավարութեան Ծրագիր (Փարիզ, Ֆրանսա)

ԳՐԱԴԱՐԱՆ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ 1

Նուպարեան Մատենադարան (Փարիզ, Ֆրանսա)

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐ 2

Բժշկական օժանդակություն (Պէրուք, Լիբանան)
Երեւանի Պետ. Համալսարանի Անդրձայնային Կեդրոն (Երեւան, ՀՀ)

ՂԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ 1

Յաջորդ Սերունդ Դաստ. Ծրագիր (Գալիֆ. ԱՄՆ)

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐ 7

Հ.Ե.Ը.-ի Պիկ Պանտ (Հալէպ, Սուրիա)
Հ.Ե.Ը.-ի Փողերախումբ (Հալէպ, Սուրիա)
Սենեկային Նուագախումբ (Սոֆիա, Պուլկարիա)
Սենեկային Նուագախումբ (Ստեփանակերտ, Ղարաբաղ)
Էրեբունի Երաժշտ. Համոյթ (Փլովտի, Պուլկարիա)
Երեւան 50 Պանտ (Մոնթեվիտեօ, Ուրուկուէ)
Կոմիտաս Սենեկային Նուագախումբ (Հալէպ, Սուրիա)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ 3

Պարսերունայի Հայկ. Մշակութային Ընկերակցություն (Պարսերունա, Սպանիա)
ՀԱՅՔ Հոլանտա-Հայ ուսանողներ ՀԱՅՔ (Ֆրանքֆորթ, Գերմանիա)
ՄՒԻ (Իսթանպուլ, Թուրքիա)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 15

Հ.Բ.Ը.Մ. Հայաստան Newsletter (Երեւան, Հայաստան)
AGBU e-Newsletter (Նիւ Եորք, ԱՄՆ)
AGBU News Magazine (Նիւ Եորք, ԱՄՆ)
AGBU Insider (New York, USA)
Հ.Բ.Ը.Մ.-ի Չայն լրագիր (Փլովտի, Պուլկարիա)
Տեղեկատու եռամսեայ (Գահիրէ, Եգիպտոս)
Հայեացք եռամսեայ (Հալէպ, Սուրիա)
Յուշարար Ամսագիր (Նիւ Եորք, ԱՄՆ)
Հայ Կին Ամսագիր (Գալիֆ. ԱՄՆ)
Խօսնակ Ամսագիր (Պէրուք, Լիբանան)
Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը. Էլ- Լրատու (Պէրուք, Լիբանան)
Միութիւն Լրագիր (Միտնի, Աւստրալիա)
Նոր Չայն Լրագիր (Մելպուռն Աւստրալիա)
Études arméniennes contemporaines (Փարիզ, Ֆրանս)
Երամ Լրագիր (Դամասկոս, Սուրիա)

ՑՈՒՑԱՂՈՒԹԻՒՆ-ՀԱՂՈՂՈՒՄ 3

Հայկական Ռատիօ (Լիոն, Ֆրանսա)
Հայկական Ռատիօ (Մելպուռն, Աւստրալիա)
Հայ Կին Հեռուստաձրագիր (Գալիֆորնիա, ԱՄՆ)

ՅԱՏՈՒԿ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ 6

Ասպետներ (Պէրուք, Լիբանան)
Ասպետներ (Գալիֆորնիա, ԱՄՆ)
ԿԻԶԱԿԷՏ (Նիւ Եորք, ԱՄՆ)
Հայ Կին (Գալիֆորնիա, ԱՄՆ)
Նիւ Եորքի Յատուկ Միջոցառումներու Յանձնախումբ (Նիւ Եորք, ԱՄՆ)
ՄԱԿ-ի Յատուկ Ներդրման Խումբ (Նիւ Եորք, ԱՄՆ)

ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԵՐ 9

Ահագանգ Թատերախումբ (Փարիզ)
Պ. Աղամեան Թատերախումբ (Հալէպ Սուրիա)
Մալեան-Մանուկեան Մանկական Թատերախումբ (Փլովտի, Պուլկարիա)
Գրիգոր Մաթամեան Թատերախումբ (Պուէնտո Այրէս, Արժանթին)
Գրիգոր Մաթամեան Թատերախումբ (Գալիֆորնիա, ԱՄՆ)
Փարոս Թատերախումբ «Թէրան, Իրան»
Փրոֆ. Գրիգոր Ազարեան Թատ. (Հասթուլօ, Պուլկարիա)
Վահրամ Փափազեան Թատերախումբ (Անթիլիաս, Լիբանան)
Վահրամ Փափազեան Թատերախումբ (Միտնի, Աւստրալիա)

ԿԱՆԱՆՑ ԿԵԴՐՈՆՆԵՐ 4

Հայ Կին, Յիլի կանանց Կեդրոն (Թալին, Հայաստան)
Հայ Կին, Յիլի կանանց Կեդրոն (Վանաձոր, Հայաստան)
Հայ Կին, Յիլի կանանց Կեդրոն (Եղվարդ, Հայաստան)
Հայ Կին, Յիլի կանանց Կեդրոն (Երեւան, Հայաստան)

ՊԱՏԱՆԵԿԱՆ ՇՐՋԱՊՏՈՑ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ 2

Բացալայտէ Հայաստանը (Երեւան, Հայաստան)
Հայաստան, Կենաց Նոյ (Երեւան, Հայաստան)

